21-ՐԴ ԴԱՐ

«ՆՈՐԱՎԱՆՔ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՆԴԵՍ

1 (29)

ԵՐԵՎԱՆ

2010

21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Լույս է տեսնում 2003 թվականից **1 (29), 2010**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Գագիկ Հարությունյան
(համակարգող)
Մուշեղ Լալայան
Սերգեյ Գրինյան
Սպարտակ Սեյրանյան
Սևակ Սարուխանյան
Տիգրան Սարգսյան

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Գագիկ Հարությունյան
(գլխավոր խմբագիր)
Սևակ Սարուխանյան
(գլխ. խմբագրի տեղակալ)
Էդուարդ Դանիելյան
Լուսինե Բաղրամյան
(պատասխանատու քարտուղար)
Խոնարհիկ Քարաուղլանյան
(պատասխանատու խմբագիր)
Ռուբեն Մելքոնյան
Տիգրան Հարությունյան

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ
Гагик Арутюнян
(координатор)
Тигран Саркисян
Мушег Лалаян
Севак Саруханян
Сергей Гриняев
Спартак Сейранян

РЕДАКЦИЯ
Гагик Арутюнян
(главный редактор)
Севак Саруханян
(заместитель гл. редактора)
Лусине Баграмян
(ответственный секретарь)
Рубен Мелконян
Тигран Арутюнян
Хонарик Караугланян
(ответственный редактор)
Эдуард Даниелян

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Հարությունյան
Համակարգային փլուզում.
պատճառները և հետևանքները 3

Էդուարդ Դանիելյան
Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն
գրականության պատմական նշանակությունը
քաղաքակրթությունների երկխոսության
տեսանկյունից ……..... 13

Կարեն Վերանյան
Լոբբինգի ինստիտուտը Միացյալ
Նահանգներում. լոբբինգային գործունեության
իրավաքաղաքական հիմքերը 25

Հրանտ Միքայելյան
Արդի Վրաստանի ներքին
քաղաքականությունը ……..……..…….. 45

Արծրուն Հովհաննիսյան
Անօդաչու թռչող սարքերի կիրառության
հեռանկարները մեր տարածաշրջանում …..... 60

Դավիթ Հախվերդյան
Ինստիտուտները, քաղաքականությունը և
տնտեսական աճը ……... 73

Վարդան Աթոյան, Նարեկ Ղուկասյան
Մարքեթինգը քաղաքական
գործընթացներում ……..……..... 93

Հուշագիր հեղինակին 105

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԼՈՒԶՈՒՄ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Գագիկ Հարությունյան

Կոմունիստներից հետո ամենից շատ
ատում եմ հակակոմունիստներին...
Սերգեյ Դովլաթով, «Սոլո *IBM*-ի վրա»

Հոդվածում դիտարկվել են ԽՍՀՄ-ի և «սոցճամբարի» փլուզման որոշ վարկածներ և դրանց ընկալումը հայրենական հետազոտական շրջանակներում, վերլուծվել են «խորհրդային հանրություն»-«խորհրդային համակարգ» հարաբերությունների առանձնահատկությունները և տեղի ունեցած համակարգային փլուզման որոշ հետևանքները։

Ավելի քան քսան տարի է անցել 1989թ. նոյեմբերի 9-ից, երբ երկբևեռ աշխարհակարգի և Սառը պատերազմի խորհրդանիշը հանդիսացող «բեռլինյան պատը» հսկող ԳԴՀ պարեկները լքեցին պահակակետերը։ Գերմանիան այդ օրը, փաստորեն, վերամիավորվեց, «պատի» բեկորները դարձան աշխույժ վաճառվող հուշանվերներ, իսկ երկու տարի հետո այն, ինչ կոչվում էր ԽՍՀՄ և «սոցիալիստական ճամբար», արդեն դադարել էր գոյություն ունենալ։ Տեղի ունեցածը հաճախ բնութագրում են որպես «Սառը պատերազմի ավարտ», «ժողովրդավարության հաղթանակ», սակայն կարելի է հանդիպել նաև «աշխարհաքաղաքական ողբերգություն» և «քաղաքակրթական կաթված» արտահայտությունների։ Բոլոր պարագաներում, «պատի փլուզումն» ազդարարեց մի նոր դարաշրջանի (երբեմն այն անվանում են «պոստմոդեռն») սկիզբ, որն էապես տարբերվում է նախորդից։ Պատահական չէ, որ այդ իրադարձության քսանամյակը միջազգային հանրությունը նշեց մեծ շուքով. կազմակերպվեցին պաշտոնական հանդիսություններ, իսկ ԶԼՄ–ում և քաղաքագիտական շրջանակներում ընթացան լայն քննարկումներ։ Մինչդեռ անդրադարձներն այդ խնդրին հայրենական տեղեկատվական դաշտում սակավ էին։

Հայկական իրողություններ. Մեր «բեռլինյան պատը» 20 տարի առաջ անցնում էր Լաչինով, և վերամիավորումն ու պատերազմի արդյունքում տարածքային ամբողջականության հարաբերական վերականգնումը կայացան

միայն 1994-ին, երբ կնքվեց հրադադարի պայմանագիրը։ Հայաստանյան հանրությունում այդ ժամանակաշրջանում գերակայում էին ազգային և պատմական արմատներ ունեցող գաղափարները։ Դա յուրահատկություն էր հաղորդում ընթացող հասարակական-քաղաքական զարգացումներին, որոնք, սակայն, բոլոր պարագաներում, ենթարկվում էին սոցիալիստական համակարգի փլուզման և նոր աշխարհակարգի ստեղծման գլոբալ գործընթացի տրամաբանությանը։ Սակայն այդ և դրան հաջորդող ժամանակահատվածը, չնայած առանձին փորձերի, առայսօր համալիր չեն ուսումնասիրվել։ Դա, մասամբ, հետևանք է նրա, որ Երրորդ հանրապետության ձևավորումով Հայաստանը դուրս եկավ կայսերական գիտակրթական և մշակութային տարածքից, ինչը հանգեցրեց նման իրադրություններում գրեթե անխուսափելի մեկուսացման ու հանրության ընդհանրական աշխարհընկալման նկատելի նեղացման։ Որպես հետևանք՝ այսօր մեր հասարակությունում միշտ չէ, որ ադեկվատ են գնահատվում, երբեմն էլ ընդհանրապես չեն ընկալվում տեղայնական պատկերացումներից դուրս երևույթները։

Մասնավորապես, նախորդ դարի 90-ականների գլոբալ բնույթի համակարգային փոփոխությունները պարզունակորեն որակվում են որպես զուտ «անկախություն ստանալու» գործընթաց։ Կարծես թե զարգացնելով այդ կասկածելի թեզը, որոշ հետազոտողներ կարծիք են հայտնում, թե ԽՍՀՄ-ում Հայաստանը գաղութային կարգավիճակ է ունեցել։ Նման մոտեցումը պարզունակ հասարակագիտական պատկերացումների արտացոլում է, որոնց հենքում ընկած է խորհրդային ագիտացիոն մեքենայի կողմից բրիտանական գաղութատիրության և հետագայում՝ նաև այսպես կոչված նեոգաղութատիրության շարունակական քննադատության մեթոդաբանությունը։

Ռուսական կայսրության հետնորդ ԽՍՀՄ-ը, իր բոլոր բացասական և դրական կողմերով, յուրօրինակ կազմավորում էր և փաստորեն աշխարհագաղափարախոսական մի խոշոր նախագիծ էր։ Այդ իրողության համատեքստում համեմատությունները կայսերական այլ համակարգերի հետ միշտ չէ, որ արդարացված են, և խնդիրն այստեղ միայն խորհրդային կայսրության եվրասիական՝ մայրցամաքային բնույթը չէ։ Խորհրդային բոլոր ազգերի (այդ թվում՝ ռուսների) և նրանց վարչական կազմավորումների կարգավիճակը, իրական իրավունքները և պարտավորությունները միմյանցից գրեթե չէին տարբերվում։ Նույնը վերաբերում է «սոցճամբարի»՝ մետրոպոլիա չմտնող երկրներին. ավելին. այդ այսպես կոչված «վասալ» երկրներում ազատության հետ կապված հարցերն ավելի լավ վիճակում էին։ Որոշ ազգություններ (հատկապես ԽՍՀՄ ասիական հատվածում) նման կայսրության շնորհիվ ձեռք բերեցին գիր, գրականություն և արդիական մշակույթ, նրանց ինքնավար հանրապետություններում հիմնվեցին համալսարաններ, գիտությունների ակադեմիայի

մասնաճյուղեր, ֆիլիարմոնիկ նվագախմբեր և այլն, ինչը վճռական դեր խաղաց նրանց զարգացման գործում:

Հայաստանի պարագայում պետք է ընդունել, որ չնայած ԽՍՀՄ այլ ազգերի հետ միասին կրած լուրջ փորձություններին (հատկապես՝ ռեպրեսիաներ, ազգային–պատմական խնդիրների անտեսում ու խեղաթյուրում), խորհրդային տարիները մեր հանրության համար նույնպես գիտատեխնոլոգիական և հոգևոր-մշակութային զարգացման ժամանակաշրջան հանդիսացան:

Խորհրդային անցյալի վերաբերյալ թյուր պատկերացումների ցանկը կարելի է շարունակել: Սակայն նկատենք, որ միշտ չէ, որ դրանք հասարակագիտական մտքի պարզունակության արդյունք են, ինչը մասամբ խորհրդային անցյալի, որտեղ հումանիտար ոլորտում իշխում էին պաշտոնական կարծրատիպերը, ժառանգություն է: Ներկայումս պարզորոշ նկատվում են ազգային հիշողության հետ մանիպուլյացիաներ կատարելու միտումներ, որոնք վկայում են տեղեկատվական-օնթոլոգիական պատերազմների և *nation bulding*–ի արդիական տեխնոլոգիաների կիրառության մասին:

Արդյունքում՝ ԶԼՄ-ում կարելի է հանդիպել խորհրդային շրջանին վերաբերող գլխավորապես «ողբերգական» կամ «հեգնական» նյութերի և «անցյալի ճիրաններից» ազատվելու կոչերի, որոնց ձևը, ոգին ու «սև-սպիտակ» մոտեցումները զարմանալիորեն հիշեցնում են քննադատվող բոլշևիկյան «ագիտպրոպը»: Քաղաքականացված և անձնավորված լինելու պատճառով բավարար չեն ուսումնասիրված «պերեստրոյկայի» տարիների շարժումը, հայ-ադրբեջանական պատերազմը և ՀՀ և ԼՂՀ ներկայիս զարգացման ժամանակաշրջանը:

Այդ ամենին զուգահեռ, այսօր մեր նորագույն պատմությունն ավելի համալիր վերլուծելու փորձեր են կատարվում. լույս են տեսնում ուշագրավ առանձին հետազոտություններ և հուշեր: Սակայն այսօրինակ գրականությունը, փոքր տպաքանակի, համապատասխան *PR-ի* (ինչը ներկայումս պարտադիր է) բացակայության և ընդհանրապես կարդալու մշակույթի մասնակի կորստի հետևանքով, շատ թույլ է նշմարվում տեղեկատվական դաշտում և չի ամրագրվում հանրության, հատկապես վերջինիս երիտասարդական հատվածի, գիտակցությունում:

Բերված նկատառումները բնավ չեն ենթադրում ստալինյան ոճով *«Краткий курс истории ВКПб»*-ի ստեղծում, որտեղ միանշանակ գնահատականներ կտրվեն ոչ հեռու անցյալին: Մոտեցումները կարող են լինել տարբեր և անգամ իրարամերժ, սակայն դրանց առկայությունը հասարակությունում զարգացած պատկերացումներ կձևավորի արժանապատվորեն անցած մեր ուղու վերաբերյալ: Այս ամենը կարևոր է ոչ միայն իմացական տեսանկյունից. հայտնի է, որ սեփական պատմության շարունակականության գիտակցումը ազգային-տեղեկատվական անվտանգության և ազգային գաղափարախոսության հիմ-

նաքարերից է: Սակայն վերադառնանք «բեռլինյան պատին»:

Վերջին քսան տարում ԶԼՄ-ում և փորձագիտական գրականությունում կարելի է հանդիպել «պատի» փլուզման բազմաթիվ վարկածների: Դրանց մի զգալի մասը բավական ուշագրավ է, սակայն ընդամենը թույլ է տալիս ևս մեկ անգամ փաստել այն իրողությունը, որ «սոցճամբարի» կազմալուծման գլոբալ երևույթը չէր կարող տեղի ունենալ ընդամենը մեկ կամ անգամ մի քանի հանգամանքների պատճառով:

«Արտաքին գործոն». «Համակարգի» փլուզման «արտաքին» պատճառներից հիմնականն, իհարկե, Սառը պատերազմում ԱՄՆ և նրա դաշնակիցների համակարգված և հետևողական ռազմաքաղաքական (Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում, Աֆղանստանում և այլուր խորհրդային ընդհանրական ռեսուրսները կլանող այսպես կոչված «սև խոռոչների» ստեղծումը), տնտեսական (բավական է հիշել հյուծող «սպառազինությունների մրցավազքը» և «աստղային պատերազմները», նավթի գների մանիպուլյացիաները) և տեղեկատվական-հոգեբանական (մասնավորապես՝ ռադիոհաղորդումների, որոնցում հմտորեն ստեղծվում էր Արևմուտքի «անբիծ կերպարը» և «սոցճամբարի» մռայլ իրականությունը, և «այլախոհական» գրականություն սփռելու տեսքով) պայքարն էր ԽՍՀՄ-ի և «սոցճամբարի» դեմ, որն էլ ավարտվեց վերջիններիս պարտությամբ: Միևնույն ժամանակ, պատմագիտական որոշակի շրջանակներում համակարգի կազմալուծումը երբեմն մեկնաբանվում է որպես «պերեստրոյկայի» փուլում արևմտյան հատուկ ծառայությունների և նրանց կողմից հավաքագրված քաղաքական–տնտեսական «ազդեցության գործակալների» գործունեության արդյունք: Նշենք, որ ազդեցության այդ գործակալներին են վերագրվում դատապարտելի շատ գործեր նաև հետխորհրդային շրջանում:

Հաճախ փաստագրական հենք ունեցող այդ դիտարկումներից հետևում է, որ «փլուզման» գործում հատուկ ծառայությունները, իրոք, կարևոր դերակատարում են ունեցել: Կան, օրինակ, հստակ վկայություններ, որ խորհրդային ղեկավարության ամենաբարձր մակարդակում եղել են ԽՍՀՄ-ի դեմ և ի շահ ԱՄՆ-ի գործող անձինք: Մասնավորապես, արդյունավետ է գործել այսպես կոչված «Ոսկե ավանակ»[1] տեխնոլոգիան, որը ենթադրում է անհրաժեշտ քաղաքական գործիչների կաշառումը և ուղղորդումը: Պետք է կարծել, որ ար-

[1] Այս արտահայտությունը վերագրվում է Ֆիլիպ Մակեդոնացուն, որը մի առիթով ասել է, թե քաղաքները գրավելու համար պետք է ուղարկել ոչ թե զինվորներ, այլ «ոսկով բեռնված ավանակներ»՝ հակառակորդին «գնելու» համար: Մարդկության ողջ պատմությանն ուղեկցող և փորձագիտական–լրագրողական շրջանակներում «Ոսկե ավանակ» կոչվող այդ «տեխնոլոգիան» ներկայումս «լեգիտիմացվել» է և էապես կատարելագործվել (հաշվի առնելով, մասնավորապես, բազմաթիվ «գրանտային» ծրագրերի և արդիական բանկային համակարգի ընձեռած հնարավորությունները): Այն կարևոր և օրինականացված տեղ է գրավում որոշ տերությունների ոչ միայն հատուկ ծառայությունների, այլև ռազմաքաղաքական–դիվանագիտական և տեղեկատվական-հոգեբանական ոլորտների հայեցակարգերում:

տաքին ազդեցության վերոնշյալ մեթոդները, հասկանալի է՝ շատ ավելի փոքր մասշտաբներով, այդ տարիներին կիրառվել են «հայկական զարգացումներում», և բացառված չէ, որ այդօրինակ մեթոդիկան կիրառվում է նաև այսօր:

Վերոշարադրյալի համատեքստում արևմտյան գործիչների հրապարակային ելույթները, թե իրենց համար այն տարիների գործընթացներն «անսպասելի» էին, համոզիչ չեն հնչում. «առանց մամուլի» հանդիպումների ժամանակ նրանք այլ կերպ են արտահայտվում: Օրինակ, 1995թ. ԱՄՆ նախագահ Բիլ Քլինթոնը շտաբների պետերի հետ «փակ» խորհրդակցության ժամանակ հայտարարել է, որ «վերջին տասը տարում ԽՍՀՄ-ի դեմ վարած քաղաքականությունն ապացուցեց, որ աշխարհի հզոր տերություններից մեկի վերացմանն ուղղված կուրսը ճիշտ էր... Օգտագործելով խորհրդային դիվանագիտության սխալները, Գորբաչովի և նրա շրջապատի ավելորդ ինքնավստահությունը, այդ թվում նաև նրանց, *ովքեր բացահայտորեն ամերիկամետ դիրք զբաղեցրին*, մենք հասանք նրան, ինչ պատրաստվում էր անել Միացյալ Նահանգների նախագահ Թրումենը ԽՍՀՄ-ի հետ ատոմային ռումբի միջոցով» [1]:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ընդունել, որ ԱՄՆ-ը և դաշնակիցները գործում էին իրենց ազգային շահերին համապատասխան, և մեղադրանքներն Արևմուտքի հասցեին զուցե և հասկանալի են զգացմունքային առումով, սակայն այնքան էլ արդարացված չեն. «պայմանական հակառակորդը» գործում էր Սառը պատերազմի ոգով՝ այդ պատերազմում ընդունված կանոնների կիրառմամբ: Չափազանց կարևոր է նաև այն հանգամանքը, որ այդ գործողություններն արձագանք էին գտնում խորհրդային հասարակությունում: Այսպես կոչված «ազդեցության գործակալների» որոշ մասը գործում էր ասես թե «գաղափարական նկատառումներից» ելնելով և անկեղծորեն կարծում էր, որ անհրաժեշտ է ցանկացած միջոցով փոխել գոյություն ունեցող համակարգը, քանի որ դա բարեբեր կլինի երկրի համար: Ճիշտ է՝ միևնույն ժամանակ հաճախ նույնացվում էին «հայրենիք» և «քաղաքական համակարգ» հասկացությունները, ինչպես դա տեղի էր ունենում ռուս սոցիալ-դեմոկրատների մոտ 1917թ. հոկտեմբերյան հեղափոխության նախօրեին, այստեղից բխող բոլոր հայտնի հետևանքներով: Այսպիսով, համակարգի փլուզման համար ակնհայտ էին նաև «ներքին» նախադրյալները:

«Ներքին գործոն». Խորհրդային համակարգը ստեղծվեց հեղափոխական բռնության արդյունքում, և «տեռորը» սեփական ժողովրդի դեմ տարբեր պատճառներով և հաճախ էլ՝ առանց դրանց, տևեց մոտ 36 տարի (1917-1953թթ.), մինչև Ստալինի մահը: ՌԴ նախագահին կից Քաղաքական բռնադատումների զոհերի արդարացման հանձնաժողովի տվյալների համաձայն, նման զոհերի թիվը կազմում է շուրջ 32 մլն, որոնցից 13 մլն-ը՝ Քաղաքացիական պատերազ-

մի արդյունքում, իսկ Հայրենական պատերազմի մեծաթիվ զոհերի (շուրջ 30 մլն) մի մասը նույնպես կարելի է բացատրել տոտալիտար համակարգի «յուրահատկություններով»[1]: Տեռորի զոհ դարձան ոչ միայն զուտ «մարդկային ռեսուրսը» և «մարդկային կապիտալը». ոչնչացվեց նաև հոգևոր-մշակութային, ինչպես նաև նյութական արժեքների մի մեծ շերտ, որը ստեղծվել և դարերի ընթացքում ձևավորվել էր բազմազգ Ռուսաստանյան կայսրությունում:

Հայտնի է, որ հետստալինյան շրջանում «համակարգը» ընդամենը մեղմվեց, և «ազգային» ու «մարդկային» գործոնները շարունակում էին նախկինի պես չարժևորվել: «Պերեստրոյկան» թույլ տվեց ինչպես ողջ խորհրդային հասարակությանը, այնպես էլ ազգային խնդիրներ ունեցող հանրապետությունների բնակչությանը, արտահայտել տասնամյակներով կուտակված բողոքը: «Համակարգից» դժգոհության յուրովի ձև էր նաև ԽՍՀՄ կուսակցական «նոմենկլատուրայի» (նվազագույնը՝ դրա մի զգալի մասի) կողմից «պերեստրոյկայի» քաղաքականությունը:

Հենց այդ դժգոհությունը և «համակարգի» դեմ բողոքող կրիտիկական մասսայի ձևավորումն էլ, ռեզոնանսի մեջ մտնելով համակարգված, «սառը-պատերազմյան» հակամարտությունից բխող «արտաքին» ազդեցության հետ, փլուզեց «սոցճամբարը»: Նկատենք նաև, որ «փլուզումը» տեղի ունեցավ, երբ սկսվեց տեղեկատվական հեղափոխությունը. ստեղծված նոր իրադրությունում արդեն անհնարին էր պատկերացնել մոլորակի 1/6-ի տարածք ունեցող մեկուսացված համակարգ, ինչպիսին էր ԽՍՀՄ-ը: Նաև չի կարելի բացառել, որ եթե այդ «համակարգը» պահպանվեր մինչև Ինտերնետի դարաշրջանը, ապա փլուզման սցենարները կընթանային ավելի փափուկ ռեժիմում, քանի որ «բողոքող զանգվածները» ոչ թե թյուր, այլ ավելի ադեկվատ պատկերացումներ կունենային իրենց շրջապատող աշխարհի մասին:

Համակարգից դուրս հանրություն. Հայտնի է, որ անգամ «ոչ ազատ» պետություններում ստեղծագործ հանրությունները գտնում են իրենց ինքնարտահայտման ձևերը: Մեր պարագայում դրան մեծապես նպաստում էր այն, որ հզոր խորհրդային տերություն ստեղծելու տեսլականը և գաղափարական գործոնի կարևորումը թելադրում էր կոմունիստական ղեկավարությանը ստեղծել զարգացած ու լայնածավալ ռազմարդյունաբերական, գիտակրթական և մշակութային ամբողջական համալիր: Արդյունքում՝ ԽՍՀՄ-ը (իսկ հետագայում՝ նաև նրա դաշնակիցները[2]) վերածվեց գիտության, տեխնոլոգիաների և մշակույ-

[1] Տե՛ս *http://www.lenta.ru/russia/2001/10/29/yakovlev/*:Նշենք, որ հանձնաժողովի եզրակացություններից հետևում է, որ հաշվարկված զոհերի թիվը դեռևս վերջնական չէ:

[2] Այս իրողության արտահայտությունն է, օրինակ, այն փաստը, որ «սոցճամբարի» որոշ երկրներ, չնայած տնտեսական ոլորտում հետ մնալուն, սոցիալ–առողջապահական և մի քանի այլ չափանիշներով անգամ այսօր գերազանցում են իրենց «զարգացած կապիտալիստական» հարևաններին:

թի ոլորտներում բարձր մակարդակ ունեցող երկրի, որի հենքի վրա կազմավորվեց խոր գիտելիքներ և հոգևոր արժեքներ կրող մտավորականության մի ստվար զանգված: Օգտվելով խրուշչովյան «ձնհալից» և մասնակի բարեփոխումներից՝ այդ ստեղծագործ ընտրանին կարծես թե իր վրա վերցրեց խորհրդային ժողովրդի հոգևոր առաջնորդը լինելու առաքելությունը:

Հասարակության մի ստվար հատվածի համար անհամեմատ ավելի կարևոր էին ոչ թե կուսակցական առաջնորդների ճառերը կամ համագումարների թեզերը, այլ հեղինակություն վայելող գիտնականների, գրողների մտքերը և խոսքերը, հաջողված գրքերն ու կինոֆիլմերը: Որոշակի դերակատարում էին ձեռք բերել «դիսիդենտական»[1] և ազգային շարժումները. շատերը, չնայած հետապնդումներին, տարածում և կարդում էին այսպես կոչվող *«самиздат»*-ն ու *«тамиздат»*-ը: Հատկանշական է, որ նախկինում պախարակվող և անեկդոտների հերոս դարձած խորհրդային մարդու՝ *homo soveticus*-ի արժեհամակարգը, ի տարբերություն ներկայիս *homo economicus*-ի, այսօր բավական բարձր է գնահատվում: Մասնավորապես, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, որոշ հոգևոր հայրեր այսօր համոզմունք են հայտնում, որ աթեիստական ԽՍՀՄ քաղաքացիները հաճախ ավելի մոտ էին իրական քրիստոնեական արժեքներին և հասկացություններին, քան ներկայիս «խղճի և դավանանքի ազատության» պայմաններում ապրողները և կրոնական ծեսերին հետևողները: Այդ համատեքստում կարելի է փաստել, որ հետևելով Ա.Չեխովից փոխառած «ստրուկին իր միջից քամելու» հետխորհրդային կարգախոսին՝ հետխորհրդային հանրությունը «իրենից դուրս հանեց» նաև որոշ շատ արժեքավոր հատկանիշներ:

Սակայն այդ ամենի հետ մեկտեղ, խորհրդային հանրության «բողոքող» հատվածի քաղաքական աշխարհընկալումն ավելի քան միամիտ էր և պարզունակ: Որպես կոմունիստական ռեժիմի միակ այլընտրանք պատկերացվում էր իդեալականացված «ազատ աշխարհը», և «Արևմուտքի» հանդեպ ամենափոքր թերահավատությունն անգամ ընդունվում էր որպես պաշտոնական քարոզչության արտահայտություն կամ առնվազն՝ մոլորություն: Ընդունումը, որ արևմտյան մոդելը նույնպես յուրովի «համակարգ» է և նույնպես բավական

[1] Հետաքրքրական է, որ համաձայն ռուսաստանյան քաղաքագետներ Սերգեյ Կուրղինյանի և Ալեքսանդր Դուգինի վարկածների, «դիսիդենտական» շարժումը ԽՍՀՄ-ում ղեկավարվում էր *ԿԳԲ*-ի կողմից, քանի որ վերջինս դժգոհ էր «համակարգից» (Ալ.Դուգինը ընդհանրապես *ԿԳԲ-ն* որակում է որպես «ատլանտյան օրդեն» ԽՍՀՄ-ում): Նկատենք, որ համաշխարհային պրակտիկայում հատուկ ծառայությունների և հակապետական կազմավորումների միջև որոշակի համագործակցությունը սովորական երևույթ է: Ի լրումն՝ հատուկ կառույցները, որպես կանոն, միշտ ավելի իրազեկ են լինում երկրում տիրող իրավիճակի մասին, և այդ առումով *ԿԳԲ-ն* պետք է դեռ 70-ականներից ըմբռներ, որ «համակարգը» վերասեռվում է և պարտվում է Արևմուտքին: Այդ, ինչպես նաև փաստագրական մի շարք իրողությունների համատեքստում «դիսիդենտական շարժման» և *ԿԳԲ*-ի բարձր էշելոնների համագործակցությունը ֆանտաստիկ չի հնչում: Սակայն համարել, որ ԽՍՀՄ փլուզման պատճառը *ԿԳԲ*-ի կողմից հովանավորվող դիսիդենտական շարժումն էր, ինչպես մեկնաբանում են Կուրղինյանը և Դուգինը, ըստ մեզ, չափազանցություն է:

անողոք, եկավ արդեն հետո: Հատկանշական է, որ հրապարակայնորեն այդ իրողությունն ընդունեցին հատուկենտ խորհրդային «դիսիդենտներ». շատերի համար նման խոստովանությունը, որը ենթադրում էր սեփական արմատացած աշխարհայացքների վերանայում ու վերիմաստավորում, պետք է որ հոգեբանորեն շատ դժվար լիներ[1]:

Հետևանքներ և հնարավոր հեռանկարներ. ԽՍՀՄ ու «սոցճամբարի» փլուզումն ընթացավ դասական հեղափոխության ռեժիմով և դրանից բխող բացասական հետևանքներով. ազգամիջյան պատերազմներ, փախստականներ ու անօթևաններ, հանցագործության կտրուկ աճ, կառավարման համակարգի տրոհում, տնտեսության և կենսամակարդակի շեշտակի անկում (բավական է նշել, որ առայսօր ոչ բոլոր հետխորհրդային հանրապետությունների ՀՆԱ-ն է հասել հետխորհրդային շրջանի մակարդակին), գիտաարդյունաբերական և մշակութային ենթակառուցվածքի կազմալուծում (կոնկրետ Հայաստանում գիտական ոլորտը մոտ 30 անգամ ավելի պակաս է ֆինանսավորվում, քան 20 տարի առաջ), հանրության աղքատացում և, ամենագլխավորը, բարոյալքում: Այս համատեքստում ավելորդ չէ նշել, որ 1990-1995թթ. Ռուսաստանում ամսագրերի տարեկան տպաքանակը նվազեց գրեթե 17 անգամ [2]: Հայաստանում գրականության հանդեպ հետաքրքրության նվազումն արտահայտվեց գրախանութների թվի կրճատումով. Երևանում ներկայումս գործում է մի քանի գրախանութ, իսկ ժամանակին դրանք մի քանի տասնյակի էին հասնում: Իսկ քաղաքական առումով պարզվեց, որ աշխարհաքաղաքական դիմակայությունն ուժի մեջ է մնում, և Առաջին սառը պատերազմին անմիջապես հետևեց շատ հատկանիշներով ավելի «կատարելագործված» (մասնավորապես՝ տեղեկատվական ոլորտում) և վտանգավոր Երկրորդ սառը պատերազմը [3]:

Կարելի է փաստել, որ որպես խորհրդային ոգով կազմակերպված մի միջոցառում՝ «պերեստրոյկան» կոմունիստական «նոմենկլատուրայի» կատարած ծանր հանցագործություններից էր: Անշուշտ, բարեփոխումները կարելի էր կատարել ավելի մտածված կերպով և հերթական անգամ չկորցնել խորհրդային տերության տասնամյակներ կուտակած ստեղծագործ «մարդկային կապիտալը», հոգևոր, մտավոր և նյութական արժեքներն ու ներուժը: Հայտնի է, որ այդ ամենից չխուսափեց նաև Հայաստանը:

[1] Դրանց թվում առանձնահատուկ տեղ է գրավում պրոֆ. Ալեքսանդր Զինովևը (1922–2006թթ.), որն իր *«самиздат»*-ով տարածվող *«Зияющие высоты»* գրքի համար 1978թ. արտաքսվեց ԽՍՀՄ-ից: Վերադառնալով «նոր» Ռուսաստան՝ նա հանդես եկավ «արևմտյան համակարգի» թերությունների հրապարակային քննադատություններով և այդ խնդրին նվիրված հիմնարար գիտական աշխատություններով:

Միևնույն ժամանակ, «սոցիալիզմի» փլուզումը որոշակիորեն բացասաբար ազդեց նաև հաղթանակած «ազատ աշխարհի» վրա: Մասնավորապես կարելի է նկատել, որ «առաջավոր դեմոկրատիայի» երկրներում այսօր նույնպես սկսել է անտեսվել «մարդկային և ազգային» գործոնը և պետություն–հանրություն հարաբերություններում ու կառավարման համակարգում աստիճանաբար ավելի մեծ տեղ են գրավում արհեստական, մանիպուլյացիոն մեթոդները: Դժվար է չհամաձայնել արևմտյան այն հետազոտողների հետ (որոնց թվում է նաև հանրահայտ Իմանուիլ Վալերսթայնը), որ հետխորհրդային իրողություններում համակարգերի մրցակցության բացակայությունը որոշակիորեն կազմալուծեց Արևմուտքը և հանգեցրեց «պոստմոդեռնիստական» ամենաթողության:

Ուշագրավ է, որ արդի գրեթե համընդհանուր «ժողովրդավարական», բայց և այնպես ոչ այնքան «ազատ» աշխարհում ձևավորվում է մի նոր «այլախոհական» շարժում: Ժամանակակից դիսիդենտները հաճախ հասարակությունում բարձր դիրքեր զբաղեցնող (ինչպես ժամանակին Ա.Սախարովը կամ նույն Ալ.Զինովևը) մտավորականներ և երբեմն նույնիսկ պետական-քաղաքական գործիչներ են: Հատկանշական է, որ քաղաքական-գաղափարախոսական հարթությունում վերստին, սակայն նորովի խմբագրված, ակտիվացել են սոցիալիստական հիմնադրույթները: Այդ ամենը կարելի է պայմանականորեն անվանել «պոստմոդեռն» ոճի կոնվերգենցիոն[1] գործընթացներ, երբ իրական «սոցիամակարգի» բացակայության պայմաններում փոխազդեցությունը տեղի է ունենում «վիրտուալ», գաղափարախոսական մակարդակում: Դա վկայում է այն մասին, որ «համակարգային փլուզման» երևույթները կարող են և ապագայում կրկնվել, սակայն այս անգամ անհամեմատ ավելի գլոբալ մասշտաբներով:

Հունվար, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *В.Л. Ченгаев*, *С.В. Баленко*, Условия возникновения вооруженных конфликтов в 21-м веке на территории РФ и возможный их характер в период обострения военно-политической обстановки, «*Военная мысль», #9*, с. 2, 2009.

[1] Նախորդ դարի 60-ականներին ծագած կոնվերգենցիայի տեսության (Ջոն Գելբրայթ, Պիտիրիմ Սորոկին և այլք) համաձայն՝ սոցիալիստական և ազատական համակարգերի միջև տեղի է ունենում որոշակի հայեցակարգային մերձեցում, հանդիպակաց շարժում: Արդյունքում՝ ԱՄՆ–ում զարգացում էր ապրում պետական պլանավորման համակարգը, իսկ ԽՍՀՄ-ում՝ տնտեսական գործունեությունից շահույթ ստանալու մոտեցումը:

2. *Борис Дубин,* Pro et Contra, т. 13, # 1, 2009, с. 6.
3. *Г.Тер-Арутюнянц,* Холодная война – 2, Голос Армении, 04.12.2003; *Г.Тер-Арутюнянц,* Многополярная и асимметричная Холодная война, Вестник Академии Военных наук, #4(21), с. 23, 2007.

РАСПАД «СИСТЕМЫ»: ПРИЧИНЫ И ПОСЛЕДСТВИЯ

Гагик Арутюнян

Резюме

Анализ причин и последствий распада СССР продолжает оставаться одной из актуальных тем современного обществоведения, и естественно, что версий и предположений в этой области предостаточно. Вместе с тем складывается впечатление, что в некоторых работах по исследованию истории «советской империи» применяется методология, практически идентичная той, которую использовал советский «агитпроп» при «шельмовании» британской колониальной системы. Упрощенные представления имеют место и при интерпретации причин распада «системы», когда рассматриваются лишь частные причины произошедшего, тогда как столь глобальное явление было вызвано огромным комплексом внешних и внутренних, объективных, и не очень, причин. При этом необходимо дать определенную оценку месту и роли самого общества в идеологизированном государстве, которое во многом разделяло официальные установки. Характерно также, что даже после распада СССР и «соцлагеря» продолжается определенная, в некотором смысле на виртуальном уровне, конвергенция между ранее конфронтирующими системами управления.

ՀԱՅ ԳՐԻ, ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ[1]

Էդուարդ Լ. Դանիելյան

Միջքաղաքակրթական շփումների կարևոր գործոն է գիրը՝ թարգմանական և ինքնուրույն գրականության միջոցով: Հայոց բազմադարյա գրավոր ժառանգությունը համաշխարհային մշակույթի գանձարանում զգալիորեն նպաստում է համաշխարհային քաղաքակրթության անվտանգության երաշխիքի՝ քաղաքակրթությունների երկխոսությանը:

Գրի սկզբնավորումն ու զարգացումը մարդկության պատմության մեջ պայմանավորել են հոգևոր արժեքների բանավոր պահպանումն ու գրավոր փոխանցումն ապագա սերունդներին: Գրավոր աղբյուրներն առաջնային նշանակություն ունեն պատմության՝ որպես քաղաքակրթության պատմության ուսումնասիրման գործում, դրա համար էլ «գիր ունեցող հանրություններն իրենցից հետո անհամեմատ ավելին են թողել, քան չունեցողները» [1, p. XIII-XV]:

Հոգևոր-մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական հասկացությունների հանգուցակետում փիլիսոփայության ընդհանուր համակարգում «քաղաքակրթություն» եզրը գիտական շրջանառության մեջ մտցվեց XVIIIդ.՝ մարդկության պատմության որոշակի դարաշրջանների առումով [2]: Քաղաքակրթության հիմնական բաղադրիչների հետազոտությունը թույլ է տալիս քաղաքակրթությունների երկխոսությունը դիտարկել աշխարհաքաղաքական գործընթացների արդի միտումների համատեքստում [3, p. 57-72]:

Քաղաքակրթություն հասկացությունում մշակույթին՝ որպես մարդկային գործունեության կարևոր ստեղծարար ոլորտի, առաջնային նշանակություն է տրվում:

Օսվալդ Շպենգլեր. «Յուրաքանչյուր մշակույթ սեփական քաղաքակրթությունն ունի... Քաղաքակրթությունը մշակույթի անխուսափելի ճակատագիրն է» [4, p. 31-32]:

[1] Զեկույց՝ կարդացված «Քաղաքակրթությունների երկխոսություն» համաշխարհային հասարակական համաժողովում, Հռոդոսյան համաժողով, VII ամենամյա նստաշրջան, 2009թ. հոկտեմբերի 8-12, Հռոդոս (Հունաստան):

Վիլ Դյուրան. «Քաղաքակրթությունը սոցիալական այն կարգն է, որը նպաստում է մշակութային արարմանը: Այն կազմում են չորս տարր. տնտեսական վիճակը, քաղաքական կառուցվածքը, բարոյական ավանդույթները և գիտելիքների ու արվեստների ձգտումը: Քաղաքակրթությունն սկսվում է այնտեղ, որտեղ ավարտվում են քաոսն ու անհուսալիությունը» [5, p. 1]:

Առնոլդ Թոյնբի. «Մշակութային տարրերը քաղաքակրթության էությունն են» [6]:

Ն.Վ. Կլյագին. «Քաղաքակրթություն հասկացությունը կարող է նույնացվել մշակույթ հասկացության հետ» [7, c. 3]:

Մշակույթները՝ որպես քաղաքակրթությունների հիմնական բաղադրիչներ, կամուրջ են նետում դրանց միջև՝ ստեղծարար սկզբունքից ելնելով [8, p. 298-303]: Մինչդեռ, քաղաքակրթության մասին արդի որոշ տեսությունների համաձայն, ներկայումս աշխարհում մշակույթների հակամարտությունն այնքան է հասունանում, որ քաղաքակրթությունների բախման վերաճելու միտում է ստանում [9]: Սակայն ավերիչ ուժերը ծնվում են ոչ թե մշակութային գործոնից, այլ, ընդհակառակը՝ դրա բացակայությունից:

«Մշակույթի իրավունքների հռչակագրում» Դմիտրի Սերգեևիչ Լիխաչովը, մշակույթը համարելով մարդկային պատմության հումանիզացման գլխավոր աղբյուրը, գրում է. «Մշակույթը անձի և հասարակության ստեղծարար ներուժի իրացման որոշիչ պայմանն է, ժողովրդի յուրօրինակության հաստատման ձևն ու ազգի հոգևոր առողջության հիմքը, հումանիստական կողմնորոշիչն ու մարդու և քաղաքակրթության զարգացման չափանիշը: Մշակույթից դուրս ժողովուրդների, էթնոսների և պետությունների ներկան և ապագան զրկվում են իմաստից» (Հոդված 2):

Ըստ Ս.Ն. Իկոննիկովայի, միայն հումանիտար մշակույթը կարող է դառնալ էթիկայի, բարոյականության հիմքը [10]: Ջագդիշ Չանդրա Կապուրը ժողովուրդների խաղաղ ապագան տեսնում է մշակութային արարման և համագործակցության մեջ՝ ազգային ինքնատիպության պահպանմամբ [11, p. 23], դրանով իսկ «Մարդկային ապագան» դիտարկելով որպես քաղաքակրթությունների երկխոսության հիմք [12, p. 26]:

«Մշակույթի իրավունքների հռչակագրի» 6-րդ հոդվածում ասվում է. «Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթ իրավունք ունի մասնակցելու ողջ մարդկության հումանիստական զարգացմանը: Աշխարհի ժողովուրդների մշակութային համագործակցությունը, երկխոսությունը և փոխըմբռնումը արդարության և ժողովրդավարության գրավականն են, միջազգային և միջէթնիկ հակամարտությունների, բռնության և պատերազմների կանխման պայմանը»:

Մշակութային-պատմական ժառանգության ՝որպես «մարդկության համընդհանուր հոգևոր փորձի ամրապնդման և փոխանցման ձևի» (Հոդված 1ա),

մեջ գիրը կարևոր նշանակություն ունի:

Աշխարհի գրավոր լեզուների զարգացման պատմության մեջ հայ գիրը, որպես հայ ժողովրդի ստեղծագործ արարման միջոց և ազգային ինքնատիպության երաշխիք, որոշակի ավանդ ունի մշակույթի համաշխարհային գանձարանում, ինչը բարձր է գնահատվել արևմտաեվրոպական, ինչպես նաև ռուս գրականությունում և պատմագրությունում:

Դոմ Ավգուստին Կալմեն (1672-1757) գրում է. «Հայաստանը քաղաքակրթության օրրանն է» [13]: Ջորջ Գորդոն Բայրոնը 1816թ. այցելել է Սուրբ Ղազար կղզու հայկական միաբանություն և, ոգեշնչված հայ մշակույթով ու, մասնավորապես, գրական ժառանգությամբ, սկսել ուսումնասիրել հայոց լեզուն: Հայերի ու Հայաստանի մասին նա նշում է. «Ինչպիսին էլ լինի նրանց ճակատագիրը, իսկ այն դառն է եղել, ինչ էլ որ նրանց սպասի ապագայում, նրանց երկիրը միշտ պետք է լինի երկրագնդի ամենահետաքրքիր երկրներից մեկը, և գուցե նրանց լեզուն միայն ավելի մեծ ուսումնասիրություն է պահանջում... Դա հարուստ լեզու է... Եթե Սուրբ Գիրքը ճիշտ է մեկնաբանվում, դրախտը Հայաստանում է գտնվել... Հայաստանում է առաջինը ջրհեղեղը նահանջել և աղավնին նստել» [14, p. 8, 10-12]:

Սերգեյ Նիկոլաևիչ Գլինկան (1776-1847) Հայաստանի պատմությունն ընկալել է մարդկային քաղաքակրթության ակունքների հետ նրա առնչակցության ոգով [15, с. 77]: Նա գրում է. «Հայկական լեռների գագաթներին է, և՛ ըստ աստվածաշնչյան ավանդությունների, և՛ ըստ ժողովրդական ավանդությունների, կանգ առել մարդկային ցեղի երկրորդ օրրանը» [16, с. III]:

Դավիդ Մարշալ Լանգը նույն ոգով գրում է. «Հնագույն երկիր Հայաստանը տեղադրված է բարձր լեռներում... Թեև Միջագետքն է իր հնագույն՝ Շումերի և Բաբելոնի քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ մեկտեղ, սովորաբար համարվում քաղաքակրթական կյանքի հիմնական աղբյուրն արդի ընկալմամբ, Հայաստանը նույնպես կարող է որակվել որպես մարդկային մշակույթի օրրաններից մեկը: Նախ, ինչպես Ծննդոց գրքում է ասվում, Նոյի տապանը կանգ է առել Արարատ լեռան գագաթին, Հայաստանի հենց կենտրոնում... Անկախ այն բանից՝ ինչ-որ կարևորություն տալի՞ս ենք արդյոք Ծննդոց գրքին՝ որպես պատմական սկզբնաղբյուրի, թե՞ ոչ, ոչ ոք չի կարող ժխտել Նոյան տապանի մասին նրա հաղորդածի խորհրդանշական կարևորությունը, որը հիշողության մեջ պահպանում են ողջ աշխարհի հավատացյալներն ու անհավատները: Բացի այդ, Հայաստանը մեր ուշադրությունն է պահանջում որպես հնագույն մետաղագործության հիմնական օջախներից մեկը, որը սկիզբ է առնում, առնվազն, հինգ հազար տարի առաջ: Ավելի ուշ Հայաստանը դարձավ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին մեծ թագավորությունը՝ հանդիսանալով եկեղեցական ճարտարապետության այն

ոճի սկզբնավորողը, որը մեր սեփական՝ արևմտյան գոթիկայի կանխագործումն էր» [17, p. 9]:

Հայոց լեզվի (որպես հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղի)[1] և գրի ծագման և զարգացման արմատները Հայաստանում հազարամյակների խորքն են գնում[2]:

II-IIIդդ. անտիկ հեղինակները որոշ տեղեկություններ են հաղորդում հայ գրերի մասին: Հույն սոփեստ և հռետոր Լուցիոս Փլավիոս Փիլոստրատոսը (մոտ 170-247թթ.) նշում է. «Ասում են, թե մի անգամ Պամփյուլիայում[3] բռնում են մի հովազ, որի ոսկե վզնոցին հայերեն տառերով գրված էր. «Արշակ թագավորը Նյուսայի աստծուն»[4]: Հռոմեացի աստվածաբան և գրող Հիպպոլիտոսը (IIIդ.) հայերին հիշատակել է դպրություն ունեցող ժողովուրդների (հույներ, հրեաներ, հռոմեացիներ, մարեր և այլք) թվում [18, p. 58]:

Մեծ Հայքի թագավոր Տրդատ III-ի հովանավորությամբ սբ. Գրիգոր Լուսավորչի կողմից հայերի մկրտությամբ քրիստոնեությունն աշխարհում առաջինը պետական կրոն հռչակվեց Հայաստանում (301թ.): Երկրում հիմնվում են դպրոցներ, որոնցում դասավանդվում էին հունարեն և ասորերեն, ինչպես ժամերգությունների ընթացքում Աստվածաշնչի[5], այնպես էլ արքայական դիվանատուն մտնող փաստաթղթերի բանավոր թարգմանությունն ուսուցանելու նպատակով:

IV դարի վերջին Մեծ Հայքի Վռամշապուհ արքան, Հայ Առաքելական

---

[1] Ենթադրվում է, որ ընդհանուր հնդեվրոպական լեզվի բարբառների բաժանման սկիզբը մ.թ.ա. V-IV հազարամյակն է (*Т.В. Гамкрелидзе, Вяч.Вс. Иванов,* Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984, т. I, с. XLVIII, т. II, с.865, 898, 912-913, *Գ.Բ. Ջահուկյան,* Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 31-32):

[2] Այդ մասին են վկայում ժայռապատկերներում, դամբարանների պատերին և պաշտամունքային խեցեղենի վրա եղած պատկերագրերը (մ.թ.ա. V- IV հազարամյակներ) (*Հ.Ա.Մարտիրոսյան,* Կրոնական հավատալիքների և արվեստի ծագումը, տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 262) և հիերոգլիֆները (Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 115, *Мовсес Хоренаци,* История Армении, перев. с древнеарм. яз., введение и примеч. Г.Саркисяна, Ереван, 1990, с. 237, прим. 261, *A.Movsisyan,* The Writing Culture of Pre-Christian Armenia, Yerevan, 2006, p. 55-148), Վանի թագավորության դարաշրջանի (մ.թ.ա. IX-VIIդդ.) սեպագիր աղբյուրներում պահպանված բառապաշարն ու քերականական ձևերը (*Գ.Բ. Ջահուկյան,* Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հայկական բնույթի հնարավորության մասին – ՊԲՀ, N 1, էջ 124-129), ինչպես նաև մեհենական դպրությունը (Մովսէս Խորենացի, էջ 176):

[3] Կիլիկիայից արևմուտք:

[4] *Photius.* Bibliothque, t. V, 1967, p. 172, 324b 4-11. Հայաստանում Արշակ II-ից (350–368թթ.) դարեր առաջ գահակալած Արշակ անունով թագավորի հիշատակել են Տակիտոսը (55-120թթ.) իր «Տարեգրքեր» երկում [(Արտաշատում Հայոց թագավոր Զենոն-Արտաշես III-ից (18-34թթ.) հետո գահակալեց Արշակը (34-35թթ.)՝ պարթևական թագավոր Արտավան III-ի (12-38թթ.) որդին (P.Cornelii Tacit libri qui supersunt, t. I, Lipsiae, 1962, VI, 31-33)] և Մովսես Խորենացին իր «Պատմութիւն Հայոց» գրքում [*Արշակ Առաջին,* պարթևական արքա Արշակ Մեծի եղբոր՝ Հայաստանում գահակալած Վաղարշակի որդին (Մովսէս Խորենացի, էջ 118-119):
Նիւսա (*Նյուսա* կամ *Նիսա*) են կոչվել օլիմպիական աստվածներից ամենից երիտասարդին՝ Դիոնիսոսին (*J.E. Zimmerman.* Dictionary of Classical Mythology, New York-London, 1980, p. 88) նվիրված մի քանի լեռներ (*H.G.Liddell and R.Scott.* Greek-English Lexicon, Oxford, 1966. p.1185), ինչպես նաև քաղաքներ (*Photius.* Bibliothque, նույն տեղում, տես նաև՝ *Է.Լ.Դանիելյան,* Իսիդոր Քարակացու Պարթևական կայանները, - «Պատմա-բանասիրական հանդես», 1971 N4, էջ 174, 180):

[5] Հ.Մարկվարտը կարծիք է հայտնել, թե սբ. Գրիգոր Լուսավորիչը պատանեկան հասակից ծանոթ է եղել թե՛ հայերենին և թե՛ հունարենին [(*Jos. Marquart.* "Über den Ursprung des armenischen Alphabets in Verbindung mit der Biographie des Heilige Maštoc", տե՛ս *Հ.Մարկվարտ,* Հայոց այբուբենի ծագումը և Ս.Մաշտոցի կենսագրությունը – տե՛ս Մեսրոպ Մաշտոց: Հոդվածների ժողովածու, Երևան, էջ 120):

եկեղեցու[1] կաթողիկոս Սահակ Պարթևը, Մեսրոպ Մաշտոցը (361-440) և հայ եպիսկոպոսները, ըստ Մովսես Խորենացու (V դար), ժողով էին գումարել՝ «հոգալ զգիւտ դպրութեան Հայոց» [19, էջ 325]:

Դանիել եպիսկոպոսի՝ Միջագետքում գտնված նշանագրերով մանուկներին ուսուցման ընթացքում պարզվեց, որ դրանք բավական չեն հայերեն լեզվի բոլոր վանկերն (*զսիւղոբայս զկապս*) արտահայտելու համար, «մանավանդ զի և նշանագիրքն իսկ յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք դիպեցան» [20, էջ 48]:

V դարի հայ պատմիչ Ղազար Փարպեցու վկայությամբ, Մաշտոցը մտածում էր հայ գրերի գոյության մասին [21, էջ 30]: Հայ գրերը որոնելու ընթացքում Մաշտոցն իր աշակերտների մի խմբին ուղարկում է Սամոսատ, մյուսին՝ Եդեսիա՝ Սբ. Գրքի հունարենից և ասորերենից թարգմանությանը պատրաստվելու նպատակով: Վարդապետ Կորյունը և Մովսես Խորենացին գրում են, որ սբ. Մեսրոպ Մաշտոցի գործը սրբագործվել է Աստծո Աջով: Ըստ Կորյունի՝ Մաշտոցը շատ նեղություններ քաշեց իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար: «Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ, հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ Աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք» [20, էջ 50]: Գալով Սամոսատ՝ Մաշտոցը գտավ հելլենական դպրության մի գրագիր, Հռոփանոս անունով, «որով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն եւ զլայնագոյնն, զկարճն եւ զերկայնն, զառանձինն եւ զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ եւ յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնայն հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեաց գաւառէն, եւ երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն» [20, էջ 51-52]:

Հայոց լեզուն, հազարամյակների ընթացքում իր զարգացման շնորհիվ, V դարի շեմին հասավ այնպիսի կատարելության, որ հայերեն այբուբենի ստեղծումից հետո (405թ.) սբ. Մեսրոպ Մաշտոցն իր աշակերտների հետ ձեռնամուխ եղավ Աստվածաշնչի՝ հին հունարենից գրաբար թարգմանությանը, որը նրանք սկսեցին Սողոմոնի առակների գրքից, և առաջին նախադասությունն էր. «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Վերադառնալով Հայաստան՝ Մաշտոցն իր աշակերտների հետ միասին Հին Կտակարանից հետո թարգմանում է Նոր Կտակարանը[2] [19, էջ 327]:

Հայ գրերի գյուտը նոր դարաշրջան բացեց հայ մշակույթի պատմության

[1] Մ.թ. I դարի առաջին կեսին սբ. Թադեոս և սբ. Բարդուղիմեոս առաքյալների վարդապետությամբ հիմնադրվում է Հայ Առաքելական եկեղեցին, ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց թագավոր Աբգարի օրոք: Եվսեբիոս Կեսարացին (Eusebius. The History of the Church, London, 1989, p. 31, 32) և Մովսես Խորենացին պահպանել են «Թուղթ Աբգարու առ Փրկչին» և «Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալ հրամանաւ Փրկչին» (Մովսէս Խորենացի, էջ 149-150):

[2] Սբ. Մաշտոցը նշանագրեր ստեղծեց նաև վրացերեն և Կուրի ձախափնյա Աղուանքի ցեղերից՝ գարգարացվոց լեզուների համար [19, էջ 328, 329; 20, էջ 110, 112, 116]:

մեջ: Հին հայերենն այնքան հարուստ էր, և մեսրոպյան այբուբենով ստեղծված թարգմանական և ինքնուրույն գրական ժառանգությունն՝ այնքան կատարյալ, որ V դարը համարվում է հայ մշակույթի պատմության «Ոսկե դար»: Հայաստանի լուսավորչական կյանքն ընթանում էր «Լաւ է կոյր աչօք, քան՝ կոյր մտօք» կարգախոսով [22, էջ 28]:

Սերգեյ Գլինկան, ուշադրություն դարձնելով Մեսրոպ Մաշտոցի աստվածային տեսիլքի մասին Կորյունի և Մովսես Խորենացու հաղորդած տեղեկություններին, նշել է. «Ասես ոգեշնչումով սբ. Մեսրոպն ստեղծեց հայերեն տառերը...»: Հիշատակելով Մ.Լակրոզի (1661-1739) բարձր գնահատականը, որը Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն անվանել է «Թարգմանությանց թագուհի», Սերգեյ Գլինկան կարծում է, որ թարգմանության ճշգրտությանը, «անշուշտ, նպաստել է նաև հայերեն խոսքի ուժը» [16, c. 90]:

Վալերի Բրյուսովը (1873-1924), խոսելով մինչև Մաշտոցի գրերի գյուտը հայերենի զարգացման բարձր մակարդակի մասին, գրում է, որ գրերի գյուտից հետո մայրենի լեզվով ազգային գրականության արագ զարգացումը «ստիպում է ենթադրել, որ դրան նախորդել են հայ գրողների ստեղծագործությունները ոչ միայն օտար լեզուներով: Ժամանակակից գիտությունը հրաժարվում է ընդունել, թե միևնույն դարը կարող է տեսնել և՛ հայ գրերի ծնունդը, և՛ դրա հարուստ ծաղկումը, որն արտահայտվել է Սբ. Գրքի գերազանց թարգմանությամբ... և դրան հաջորդած հայ գրականության «Ոսկե դարով»: Ուստի, ենթադրում են, թե դեռ գրերի գյուտից առաջ գոյություն են ունեցել հայ գրավոր խոսքի սաղմեր... Բայց այդ հնագույն գիրը վերացել է, և մեզ համար հայ գրականությունն սկսվում է ոչ շուտ, քան V դարից» [23, c. 45]:

V դարում Հայաստանում ծաղկում է հայ թարգմանական և ինքնուրույն գրականությունը, ազգային դպրոցի հիմնարար զարգացմամբ: Թարգմանությունների բարձր մակարդակն ապահովվում էր հայ գիտնականների ջանքերի շնորհիվ, որոնք փայլուն տիրապետում էին մայրենի լեզվին և իրենց գիտական և աստվածաբանական կրթությունը շարունակել էին հունարեն և այլ լեզուներով անտիկ գիտության և մշակույթի հայտնի կենտրոններում՝ Աթենքում, Ալեքսանդրիայում և այլուր [24, c. 142-143]:

Հունարենից հայերեն թարգմանվեցին Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստը», Փիլոն Ալեքսանդրացու 14 աշխատությունները, Կեղծ-Կալիսթենեսի «Պատմութիւն վարուց Աղեքսանդրի»-ն, Իրենեոսի «Ցոյցք առաքելական քարոզութեան»-ը և «Ընդդեմ հերձուածոց»-ը, Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեանց»-ը, Տիմոթեոս Էլուրոսի «Հակաճառութիւն առ սահմանեալսն ի ժողովոյն Քաղկեդովնի»-ն, Պորփյուրի «Ներածութիւն»-ը, Արիստոտելի «Ստորոգութիւնք»-ը («Կատեգորիաներ») և «Յաղագս մեկնութեան» և այլ աշխատություններ [24, c. 186-188]: Հենց միայն թարգմանական գրականության ցանկը վկայում է անտիկ ժառանգության հանդեպ հայ փիլիսոփայական և պատմագիտական մտքի լայն ճանաչողական հետա-

քրքրության մասին, ինչը հիմք է տվել, որպեսզի հայ թարգմանիչներին համարեն հունաբան դպրոցի ներկայացուցիչներ [25][1]:

Թարգմանական գործունեության ընթացքում տեղի էր ունենում որոշակի եզրերի [24, c. 140] և տեքստերի ստեղծագործական իմաստավորում և կիրառում հայերենի բառապաշարի հիման վրա: Հայերեն թարգմանությունների շնորհիվ են պահպանվել Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակականքը», Արիստիդես Աթենացու «Քրիստոնեական հավատի ջատագովությունը», Փիլոն Ալեքսանդրացու 7 աշխատությունները, Հերմես Եռամեծի «Սահմանք»-ը, Մեթոդիոս Ողիմպիացու «Ազատ կամքի մասին»-ը, Եպիփան Կիպրացու «Ընդդեմ հերձվածոց»-ը և այլն, որոնց հին հունարեն բնագրերը ժամանակի ընթացքում կորսվել են:

V դարում թարգմանական գրականության հետ մեկտեղ զարգանում էր ինքնուրույն գրականությունը՝ պատմագրությունը և փիլիսոփայությունը, որոնք ներկայացված են Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Կորյունի, Մովսես Խորենացու, Եղիշեի, Ղազար Փարպեցու, Դավիթ Անհաղթի, Եզնիկ Կողբացու և իրենց ժամանակակից մյուս հեղինակների աշխատություններով: «Ոսկե դարի» հայ մտածողների և գիտնականների համաստեղության ստեղծագործական ժառանգությունը կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի, ինչպես նաև հարևան երկրների և ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Սբ. Գրիգոր Լուսավորչի կյանքի և հայերի մկրտության մասին է պատմում Ագաթանգեղոսն իր «Հայոց պատմություն» գրքում: Կորյունը «Վարք Մաշտոցի» երկում մանրամասն նկարագրել է իր ուսուցչի՝ սբ. Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը: Փավստոս Բուզանդն իր «Հայոց պատմություն» երկում ներկայացրել է Մեծ Հայքի թագավորության՝ IV դարի առաջին տասնամյակներից մինչև Հայաստանի պարսկա-հռոմեական բաժանումը (նույն դարի 80-ական թթ. կեսեր) ընկած ժամանակաշրջանի պատմությունը:

Հայ պատմագրության պսակն է Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկը, որը բաղկացած է երեք մասից և պարունակում է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև Vդ. 40-ական թթ. սկիզբը: Մովսես Խորենացին իր գիրքը գրել է Հայոց պետականության բուն էթնիկ արմատների, հայ ժողովրդի ազատասեր ոգու խոր իմացությամբ՝ արտացոլելով նրա հավատարմությունը ազգային և քրիստոնեական հոգևոր արժեքներին:

Եղիշեն հեղինակն է մի քանի աշխատությունների, որոնցից առավել հայտնին «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի»-ն է (450-451թթ.): Ղազար Փարպեցին իր «Հայոց պատմություն» աշխատությունը նույնպես նվիրել է հայ ժողովրդի ազատագրական պատերազմին՝ Վարդան Մամիկոնյանի, իսկ հե-

[1] Հայ ժողովուրդը, ի հիշատակ թարգմանիչների գործունեության, ամեն տարի (հոկտեմբերին) նշում է ազգային-եկեղեցական սիրված տոներից մեկը՝ Սրբոց Թարգմանչաց տոնը:

տո՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ (481-484թթ.):

Հենվելով հայկական սկզբնաղբյուրների վրա՝ Սերգեյ Գլինկան օտար նվաճողների գաղափարախոսությանը հակադրում է հայերի՝ Հայրենիքի պաշտպանության բարոյական հիմքերը, քանզի «ըստ իրենց բարոյական հատկանիշների բուն ոգու... Հայրենիքի պաշտպանությունը, հարազատ անկախության պաշտպանությունը, արտաքին բռնության ոտնձգություններին դիմակայելը. ահա նրանց սպառազինումների գլխավոր նպատակը» [16, c. VII]:

IV դարում մեծ հեղինակություն էր վայելում հայ մտածող, ճարտասան և մանկավարժ Պարույր Հայկազնը (276-367թթ.) [26, p. 480; 24, c. 25]:

Փիլիսոփա և աստվածաբան՝ Հայ Առաքելական եկեղեցու դավանաբանության ջատագով Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» երկում, պաշտպանելով քրիստոնեական հավատքը, մանրամասն դիտարկում է անտիկ հեղինակների փիլիսոփայական հայացքները, ինչպես նաև քննադատական վերլուծության ենթարկում զրադաշտական կրոնը (որը Սասանյանները վերածել էին իրենց նվաճողական քաղաքականության գաղափարախոսական սպասարկուի) և տարբեր աղանդները:

Դավիթ Անհաղթը V դարի հայ փիլիսոփայական մտքի նշանավոր ներկայացուցիչն է: Նրա աշխատություններից ամենահայտնին «Սահմանք իմաստասիրութեանն» է: Բնութագրելով իմաստասիրության սահմանումները՝ Դավիթ Անհաղթն անդրադարձել է նաև գիտությունների դասակարգմանը՝ բնափիլիսոփայություն, մաթեմատիկա, աստվածաբանություն: Բնության ճանաչման լավագույն միջոցն Անհաղթը համարել է փիլիսոփայությունը, քանի որ նրա գլխավոր խնդիրն այն ճանապարհների բացահայտումն է, որոնց հետևելով հնարավոր է մերժել չարը և ընտրելով բարին՝ հասնել հոգևոր կատարելության՝ առաքինության: Դարեր շարունակ Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքները հիմնարար նշանակություն են ունեցել հայ փիլիսոփայական մտքի զարգացման գործում:

«Ոսկե դարի» նվաճումների հիման վրա Մեծ Հայքում՝ Հայոց Բագրատունյաց թագավորության (885-1045թթ.) և հաջորդ ժամանակներում, և Կիլիկիայի Հայկական պետությունում (1080-1198թթ.՝ իշխանություն, 1198թ. հունվարի 6-ից մինչև 1375թ.՝ թագավորություն) հայկական մշակույթն ու կրթությունը հասան նոր բարձունքների:

Գլաձորի համալսարանում (1280-1340թթ.), որը ժամանակակիցներն անվանում էին «Մայր իմաստության», «Տուն իմաստության», «Երկրորդ Աթենք», և Տաթևի համալսարանում (1390-1435թթ.), շարունակելով նախորդ դարաշրջանների ավանդույթները, դասավանդում էին եռյակ (քերականություն, ճարտասանություն և փիլիսոփայություն) և քառյակ (թվաբանություն, երաժշտություն, երկրաչափություն և աստղաբաշխություն)՝ «յոթ ազատ արվեստներ»

կազմող առարկաների հիման վրա, որոնց համակարգմանը, իր ժամանակին, մեծապես նպաստել էին Դավիթ Անհաղթի աշխատությունները [24, c. 295]:

Հայ միջնադարյան մշակույթը, ի մի բերելով նախորդ դարաշրջանների նվաճումները, նոր արժեքներ ներդրեց ազգային և համաշխարհային մշակույթի գանձարանում: Ըստ Վալերի Բրյուսովի բնորոշման. «Հայաստանը Եվրոպայի և Ասիայի ավանգարդն է». վաղուց առաջարկված այս բանաձևը ճիշտ է բնորոշում հայ ժողովրդի տեղը մեր աշխարհում: «Հայ ժողովրդի պատմական առաքելությունը՝ թելադրված նրա զարգացման ողջ ընթացքով, Արևելքի և Արևմուտքի սինթեզը որոնելն ու գտնելն է: Եվ այս ձգտումն էլ ավելի ամբողջական արտահայտվել է Հայաստանի գեղարվեստական ստեղծագործության, նրա գրականության և պոեզիայի մեջ» [23, c. 27]:

Աշխարհաքաղաքական գործընթացների արդի փուլում, պատմական ճշմարտությունը միջքաղաքակրթական երկխոսության անկյունաքարը համարելով, Վլադիմիր Յակունինը գրում է. «Մարդկային հասարակությունները մշտական շարժման մեջ գտնվող, մշտապես զարգացող ինքնություններ են: Նրանց էվոլյուցիայի փիլիսոփայությունը որոշվում է պատմական պայմաններով, որոնցում դրանք ձևավորվել են: Տարբեր ժամանակաշրջաններում այդ գործընթացը ձեռք է բերում տարբերակվող ասպեկտներ, այն միշտ ուղիղ է, ավելին՝ կանխատեսելի... Խելամիտ կլիներ սահմանված նպատակներին մոտենալ և հետևողական ապրոքսիմացիայի գործընթացում միջոցներ ընտրել՝ հավատարիմ մնալով պատմական ճշմարտությանն ու չխախտելով ունիվերսալի և առանձնահատուկի միասնությունը ժողովուրդների և ռասաների մերձեցմանն ուղղված միջքաղաքակրթական երկխոսության դերի և տեղի մասին բանավեճերի գործընթացում» [11, p. 141]:

Քաղաքակրթությունների երկխոսության հայեցակարգում հիմնարար գաղափարը համաշխարհային անվտանգության ճգնաժամի կանխման սկզբունքն է [27]: Դրանով իսկ անկախ ժողովուրդների և պետությունների համագործակցությունը *մշակույթների երկխոսության [28]* միջոցով դիտարկվում է որպես կարևոր սկզբունք քաղաքակրթությունների միջև երկխոսությունում:

Գոյաբանական սկզբունքի տեսանկյունից, ելնելով քաղաքակրթությունների երկխոսության գաղափարի կարևորությունից՝ Վ.Սեգեսվարին գրում է. «Միջքաղաքակրթական երկխոսությունը պետք է հիմնված լինի փոխըմբռնման վրա», որը «պահանջում է հավատարիմ լինել սեփական քաղաքակրթական արժեքներին և աշխարհայացքին՝ գնահատելու համար մյուսներից ունեցած տարբերությունները: Մենք չենք կարող հասկանալ գոյաբանության հիմնարար կարգը և իրերի էական կարգը տիեզերքում՝ առանց դրանցում մեր տեղի» [29, p. 8-9]:

Մարդկության քաղաքակրթական ապագայի փիլիսոփայական իմաս-

տավորումը հենվում է քաղաքակրթությունների երկխոսության ուղիների բացահայտման և խորացման վրա՝ հիմք ընդունելով առանձին վերցրած յուրաքանչյուր ժողովրդի և ընդհանրապես համաշխարհային քաղաքակրթության պատմական փորձը [30, p. 7-17]: Անհրաժեշտ է գիտակցել և միջազգային մակարդակով իրականացնել յուրաքանչյուր ժողովրդի պատմամշակութային ժառանգության (ճարտարապետական հուշարձաններ, արվեստի գործեր, ձեռագրեր և այլն) պաշտպանությունը, հատկապես՝ հայ ժողովրդի, իր հայրենիքի տարածքում՝ ներառյալ նրա պատմական մասերը: Դա կարող է համաշխարհային քաղաքակրթության անվտանգության երաշխիք լինել քաղաքակրթությունների երկխոսության միջոցով:

Գիրը միջքաղաքակրթական շփման կարևոր օղակ է պատմամշակութային ժառանգության համակարգում: Ինքնուրույն և թարգմանական գրականությամբ ներկայացված հայ դպրությունը, լեզվական, հոգևոր-մշակութային, էթնո-ժողովրդագրական և սոցիալ-քաղաքական առանձնահատկություններով բնութագրվող պատմական իրողությունների համատեքստում՝ քաղաքակրթական-միջմշակութային կապերի զարգացման հարուստ ավանդույթներ ունի, որոնք նպաստում են քաղաքակրթությունների երկխոսությանը:

Հունվար, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. The Mainstream of Civilization. Sixth edition, New York, 1990.
2. *Ferguson A.,* An Essay in the History of Civil Society. Edinburgh, 1767; *И.Н.Ионов, В.М. Хачатурян,* Теория цивилизаций от античности до конца XIX века, СПб, 2002, с. 369, http://abuss.narod.ru/Biblio/ionov_civ.htm
3. *Danielyan E.L.,* Civilization's Theory in Geopolitical Conceptions. – "XXI century", N 1, 2009.
4. *Spengler Oswald,* The Decline of the West. Form and Actuality, vol. 1, 1945, New York.
5. *Durant Will,* The Study of Civilization. Part I, Our Oriental Heritage. New York, 1954.
6. *Toynbee Arnold,* A Study of History, vol. II, Oxford University Press, London, New York, Toronto, 1955, p. 1 and vol. IV, p. 57.
7. *Клягин Н.В.,* Происхождение цивилизации (социально-философский аспект) М., 1996.
8. *Danielyan E.L.,* Cultural Basis of the Dialogue of Civilizations. – Scientific magazine «Logos», Tbilisi, 2008.
9. *Samuel P.Huntington,* The Clash of Civilizations, Foreign Affairs. Summer 1993, v 72, n 3, from the Academic Index (database on UTCAT system), Council on Foreign Relations Inc. 1993, p. 1-3.

10. *Иконникова С.Н.,* История культурологии: идеи и судьбы.- СПб., 1996, http://www.countries.ru/library/uvod/ks.htm.
11. *Jagdish Chandra Kapur,* Dialogue of Civilizations: a Philosophy for a Humane Order. – Dialogue of Civilizations in the Contemporary Epoch, authors Vladimir I.Yakunin, Jagdish Chandra Kapur, Nicholas Papanicolaou, Englewood, NJ, 2008.
12. *Jagdish Kapur,* Our Future Eternal or Temporal. – World Public Forum "Dialogue of Civilizations", Bulletin, 2009.
13. Calmet (Rev. Pére Dom Augustin) in Dictionnaire de la Bible-Paris: Aux Ateliers Catholiques du Pont Montrouge, 1846, տես՝ Léonian R., "Les Arméniens de France sont-ils assimilés?", Issy-les-Moulineaux, 1986.
14. Lord Byron's Armenian Exercises and Poetry. Venice: in the Island of St. Lazzaro, 1870.
15. *Даниелян Э.Л.,* Философское осмысление истории Армении в сочинении Сергея Глинки. – « 21-й век», N3, 2009.
16. *Глинка С.Н.,* Обозрение истории армянского народа, М., 1832, ч. II.
17. *David M. Lang,* Armenia Cradle of Civilization. London, 1970.
18. *Hippolitus,* Werke, IV, Bd. Die Chronik, Leipzig, 1929.
19. *Մովսիսի Խորենացւոյ,* Պատմութիւն Հայոց, Երևան, 1991:
20. *Կորյուն,* Վարք Մաշտոցի, Երևան, 2005:
21. *Ղազարայ Փարպեցւոյ* Պատմութիւն Հայոց: Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Երևան, 1982:
22. *Եղիշէ,* Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989:
23. Поэзия Армении с древнейших времен до наших дней, под ред. В.Брюсова, Ереван, 1973.
24. *Аревшатян С.,* Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973.
25. *Սանանդյան Հ.,* Հունաբան դպրոցը և նրա զարգացման փուլերը, Վիեննա, 1928:
26. *Philostratus and Eunapious,* The Lives of the Sophists, Cambridge, 1961.
27. Intercultural Dialogue and Conflict Prevention Project, Expert Colloquy, Dialogue serving intercultural and interreligious communication, Strasbourg, 7 to 9 October 2002, Council of Europe, Role of Religion in the 21st Century. Prevention of Crisis among Civilizations, Contribution by Prof. Masanori Naito, Directorate General IV: Education, Culture and Cultural Heritage, Youth and Sports, Directorate of Culture and Cultural and Natural Heritage, Cultural Policy and Action Department, DGIV/CULT/PREV-ICIR (2002) 4E, 3.
28. Lyndon H. La Rouche, Jr. Earth's Next Fifty Years. Executive Intelligence Review. The Dialogue of Eurasian Civilizations, December 19, 2004 www.larouchepub.com/lar/2005/3201_next_50_years.html.
29. *Segesvary V.,* Inter-civilizational relations and the destiny of the West : dialogue or confrontation? Lewiston, N.Y. 1998.
30. *Danielyan E.,* The Fundamental Questions of Armenian History in the Light of Tendencies of Modern Democracy - Armenian Philosophical Academy, "Armenian Mind", Vol. V, No. 1-2, 2000.

ИСТОРИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ АРМЯНСКОЙ ПИСЬМЕННОСТИ, ПЕРЕВОДЧЕСКОЙ И ОРИГИНАЛЬНОЙ ЛИТЕРАТУРЫ В АСПЕКТЕ ДИАЛОГА ЦИВИЛИЗАЦИЙ

Эдуард Л. Даниелян

Резюме

В истории человечества зарождение и развитие письменности обусловили словесное сохранение духовных ценностей и их письменную передачу будущим поколениям. Письменные источники имеют первостепенное значение в изучении истории как истории цивилизации, поэтому «общества, имеющие письменность, оставили гораздо больше за собой, чем те, у которых ее нет».

Письменность – важное звено межцивилизационного общения в системе культурно-исторического наследия. Армянская письменность, представленная оригинальной и переводческой литературой, в контексте исторических реалий, характеризуемых языковыми, духовно-культурными, этно-демографическими и социально-политическими особенностями, имеет богатые традиции в развитии цивилизационных и межкультурных связей, способствующих диалогу цивилизаций.

ԼՈԲԲԻՆԳԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ. ԼՈԲԲԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Կարեն Վերանյան

Հոդվածը նվիրված է Միացյալ Նահանգներում լոբբինգի ինստիտուտի ձևավորման նախապատմության ու հետագա զարգացման քաղաքական, իրավաքաղաքական հիմքերի վերլուծությանը: Ներկայացվում են երկրում գործող լոբբիստների ու լոբբիստական խմբերի գործունեության առանձնահատկություններին, լոբբիստական հիմնական մեթոդներին ու տեխնոլոգիաներին, ինչպես նաև իշխանություն-լոբբիստներ փոխհարաբերություններին վերաբերող հիմնահարցերը: Առանձնակի կարևորություն է տրվում Միացյալ Նահանգներում իրականացվող լոբբիստական գործունեությունը սահմանող օրենսդրության ստեղծման ու հետագա մշակման գործընթացների ու դրանց առանձնահատկությունների վերլուծությանը, մեր օրերում ոլորտում արձանագրված իրավական փոփոխություններին ու միտումներին:

Հոդվածում շոշափվող հիմնահարցերի ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի Միացյալ Նահանգներում հայկական լոբբիստական խմբերի ու նրանց իրավաքաղաքական գործունեության, ոլորտում առկա ռեսուրսների ու խնդիրների վերաբերյալ ընդհանրական պատկերացումների ձևավորման համատեքստում: Նշյալ հարցերի լուսաբանումը արդիական ու հրատապ է հայաստանյան հասարակությունում՝ կապված վերջին շրջանում հայ-թուրքական հարաբերությունների բարելավման գործընթացին զուգահեռ Միացյալ Նահանգներում հայ և թուրք-ադրբեջանական լոբբիստական խմբերի ակտիվացման գործընթացների հետ:

1. Լոբբինգի ինստիտուտը

«Լոբբիզմ» եզրը առաջացել է անգլերեն *lobby* բառից, որը թարգմանաբար նշանակում է «կուլուարներ», «միջանցք»: Մի վարկածի համաձայն, «լոբբինգ» եզրը առաջին անգամ կիրառվել է 19-րդ դարի 20-ական թթ., երբ սենատորները խորհրդակցությունների ընդմիջմանը հավաքվում էին Ներկայացուցիչների պալատի «լոբբիում»՝ սպասասրահում և քննարկում այս կամ այն հիմնահարցը: Այդ մասին ամերիկյան թերթերից մեկը գրել է դեռևս 1820թ.[1]: Հետազոտող-

[1] *Майкл Бернстам,* «Музыку в США заказывают лоббисты», 30 октября 2008г., http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm

ների զգալի մասը, սակայն, հակված է այն տեսակետին, որ «լոբբիզմ» եզրը առաջացել է 19-րդ դարի երկրորդ կեսին, ԱՄՆ-ում, երկրի 18-րդ նախագահ Ուլլիս Սիմփսոն Գրանտի նախագահության ժամանակաշրջանում (*Ulysses Simpson Grant,* 1869-1877թթ.)։ Վաշինգտոնի *Willard* հյուրանոցի սպասասրահում *(lobby)* ԱՄՆ նախագահը, նախարարներն ու սենատորները հանդիպում էին տարբեր մարդկանց հետ, լսում նրանց խնդրանքներն ու ցանկությունները՝ պետության քաղաքականության հարցերի հետ կապված։ Հավաքված մարդիկ փորձում էին համոզել երկրի նախագահին ընդունել կամ մերժել այս կամ այն որոշումը՝ դրանով իսկ որոշակիորեն ազդելով պետության ներքին կամ արտաքին քաղաքականության վրա։

Լոբբինգը իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեություն է պետական իշխանության դաշնային մարմինների նկատմամբ՝ վերջիններիս կողմից օրենքով սահմանված իրենց լիազորությունների կատարման վրա ազդեցություն գործելու նպատակով։ Սկզբնական շրջանում Միացյալ Նահանգներում իշխանության մարմինների հետ լոբբիստների փոխհարաբերությունները կրել են կոռումպացված բնույթ, ինչի պատճառով ամերիկյան իրականությունում լոբբիստի մասնագիտությունը երկար ժամանակ համարվում էր ոչ այնքան վայելուչ։ «Ամերիկյան քաղաքականության բառարանի» (*Dictionary of American politics*) առաջին հրատարակությունում (1892թ.) «լոբբի» եզրի սահմանման համաձայն, «լոբբին» վերաբերում է այն մարդկանց, որոնք իրականացնում են օրենսդիրների վրա կոռումպացված եղանակով ազդելու բիզնես։ Այդ մարդիկ կոչվում էին լոբբիստներ» [1]։

ԱՄՆ-ում ընտրողների ու իշխանության ներկայացուցիչների միջև անշահախնդիր միջնորդության ավանդույթը սկսեց տարածվել միայն 19-րդ դարի վերջերից։ Երկրի լոբբիստական գործունեության նախկին կոռումպացված մեխանիզմները փոփոխությունների ենթարկվեցին լոբբիստական մասնագիտության պրոֆեսիոնալացման գործընթացի արդյունքում։ Որոշումների ընդունման գործընթացի վրա կոռուպցիոն ավանդույթների ազդեցությունից առաջինը հետքայլ կատարեց հայտնի լոբբիստ և հռետոր Սեմ Ուորդը (*Sam Ward*, 1814-1884թթ.), որը կազմակերպում էր բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ ընթրիքներ, գործընկերային հարաբերություններ հաստատում սենատորների և պետքարտուղարների հետ։ Սեմ Ուորդը համոզում էր պաշտոնյաներին ու սենատորներին ոչ թե գումարով, այլ խոսքով, ինչը հեղափոխություն առաջացրեց ամերիկյան լոբբիստական իրականությունում։ Սեմ Ուորդը լոբբիստական տեխնոլոգիական ավանդույթում «համոզելու» հնարքի մեծ վարպետ էր, նրան կոչում էին «*Rex Vestiari*»՝ «լոբբիի թագավոր» [1]։

ԱՄՆ լոբբիստական գործունեությունում կոռուպցիոն գործարքներն արմատախիլ անելու գործում 1930-ականներին զգալի է եղել ԱՄՆ սենատոր, դե-

մոկրատ Հյուգո Լաֆայեթ Բլեքի (*Hugo LaFayette Black,* 1886-1971թթ.) ներդրումը: Սենատորը պայքարում էր հատկապես վաշինգտոնյան լոբբիստական գործունեությունում տարածված կոռուպցիայի վերացման դեմ՝ հաստատելով լոբբիստների գրանցման, նրանց եկամուտների ու ծախսերի, ինչպես նաև լոբբիստական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման անհրաժեշտությունը [2]: Արդյունքում՝ «անշահախնդիր» լոբբիստների շնորհիվ լոբբիստի մասնագիտությունն աստիճանաբար դարձավ հարգելի և բարձր վարձատրվող, մեծացավ լոբբիստների ու լոբբինգով զբաղվող կազմակերպությունների թվաքանակը:

Միացյալ Նահանգներում լոբբինգի ինստիտուտի զարգացմանը նպաստեցին նաև տարբեր ժամանակաշրջաններում իրականացված օրենսդրական բարեփոխումները: Հիշարժան են 1960-1970թթ. ԱՄՆ պետական մարմինների և, մասնավորապես, Կոնգրեսի բարեփոխումները, ինչի արդյունքում Կոնգրեսը դարձավ առավել բաց հասարակության համար: Կոնգրեսում ձևավորվեցին բազմաթիվ հանձնաժողովներ, որոնք վերահսկվում էին մեծ թվով «շահերի խմբերի» (*interest groups*) կողմից: Արդյունքում՝ լոբբիստական կազմակերպություններն ու լոբբիստներն սկսեցին ներգրավվել իշխանության օրենսդիր մարմիններում որոշումների կայացման գործընթացում:

ԱՄՆ-ում լոբբիստական գործունեությունը զարգացած սոցիալական, քաղաքական ինստիտուտ է, որն իր սուբյեկտների՝ ճնշման խմբերի ու շահերի խմբերի հետ միասին, կազմում է պետություն-լոբբիստական խումբ յուրահատուկ հարաբերություններ: Ամերիկյան իրականությունում (ինչպես և արևմտյան այլ երկրներում) լոբբիստները բարձրակարգ մասնագետներ են, որոնք հավաքում են անհրաժեշտ տեղեկատվություն և իշխանության կառույցներին շեղում հօգուտ այն խմբի որոշման ընդունմանը, որի շահերը նրանք պաշտպանում են: Լոբբիստներն այսպիսով իրականացնում են միջնորդի դեր տարբեր տեսակի գործարքներում շահերի խմբերի և իշխանության օրենսդիր ու գործադիր մարմինների միջև՝ զգալի ազդեցություն ունենալով տվյալ երկրի ներքին ու արտաքին քաղաքականության վրա: Այս տեսանկյունից լոբբինգը էական տեղ է զբաղեցնում երկրի ժողովրդավարության մեխանիզմում՝ հանդիսանալով պետության ժողովրդավարության կարևոր ցուցիչներից մեկը:

Տվյալ երկրի իրավաքաղաքական, կառավարման համակարգում լոբբիստական գործունեության դրական նշանակությունից բացի, մասնագետները նշում են նաև լոբբինգի բացասական կողմերը. օրինակ, երբեմն գտնվելով լոբբիստների ճնշման տակ՝ ԱՄՆ կառավարությունը բավարարում է մասնավոր շահերը, որոնք կարող են այնքան էլ չհամապատասխանել պետության ազգային շահերին: Մյուս կողմից, բավական տարածված է այն տեսակետը, ըստ որի՝ լոբբինգը զգալիորեն խթանում է կոռուպցիան: Ոլորտում քիչ չեն եղել

աղմկահարույց դեպքերը, որոնք հանգեցրել են այս կամ այն ազդեցիկ քաղաքական գործչի հրաժարականին ու հեղինակազրկմանը: Միջադեպերից մեկը կապված էր 1990-ական թթ. սկզբներին ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Ջիմ Ռայթի անվան հետ: Երբ վատնվել էին Ռայթի հիմնական ֆինանսական միջոցները, լոբբիստները կարողացան համոզել նրան, որ իր քաղաքական վարկանիշի բարձրացման նպատակով լոբբիստների ֆինանսավորմամբ որևէ գիրք հեղինակի: Ռայթը քաղաքական հուշեր գրեց *("Reflections of a Public Man")*, որի դիմաց լոբբիստների բավական լավ ֆինանսավորում ստացավ[1]: Գիրքը, սակայն, այդպես էլ չհրատարակվեց, քանի որ գործարքը բացահայտվել էր Ներկայացուցիչների պալատի «Պաշտոնյայի վարքականոնի չափորոշիչների հանձնաժողովի» (հայտնի է որպես «Էթիկայի հանձնաժողով») հետաքննության արդյունքում՝ հանգեցնելով Ջ.Ռայթի հրաժարականին: Վերջին ժամանակների մյուս միջադեպը կապված է հայտնի լոբբիստ Ջեք Աբրամոֆի անվան հետ (2006թ. հունվար), որի արդյունքում վերջինը և մի քանի կոնգրեսական, ինչպես նաև նախկին նախագահ Բուշի վարչակազմի պաշտոնյաներ (Ջեք Աբրամոֆը Ջ. Բուշ կրտսերի վարչակազմի առանցքային դեմքերից ու լոբբիստներից էր, վարչակազմի անդամ) ձերբակալվեցին՝ պաշտոնյաներին կաշառելու և ԱՄՆ հնդկացիական լոբբինգին խաբելու համար: Աբրամոֆը զգալի աշխատանք է կատարել ամերիկյան խոշոր կազմակերպություններին հարկերից ազատելու գործում, հատուկ տնտեսական պայմաններ ապահովել Մարիանյան կղզիների համար՝ ազատելով վերջիններիս ամերիկյան աշխատանքային օրենսդրությունից: Որոշ տվյալներով, Աբրամոֆը լոբբիստական աջակցություն է ցուցաբերել նաև ռուսաստանյան *«Сибнефть»* ընկերությանը (1997թ.)[2]:

2. Լոբբիստական խմբերն ու նրանց գործունեությունը

Երկրի իրավաքաղաքական համակարգում լոբբիստական գործունեության բնույթը, առանձնահատկություններն ու նպատակները պայմանավորված են թե՛ երկրի իրավաքաղաքական, պետական կառավարման համակարգով, թե՛ լոբբինգի սուբյեկտի ներուժով ու օբյեկտի հիմնական առանձնահատկություններով: Լոբբիստական գործունեության օբյեկտներն են իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինները, իսկ սուբյեկտները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք (ԱՄՆ)[3]: Լոբբիստական գործունեության տեսակները տարբերակվում են՝ հետևյալ գործոններից կախված.

[1] James Claude Wright Jr., http://en.wikipedia.org/wiki/Jim_Wright

[2] *Майкл Бернстам,* «Музыку в США заказывают лоббисты», 30 октября 2008г., http://news.bbc.co.uk/hi/russian/international/newsid_7695000/7695523.stm.

[3] Գերմանիայում լոբբիստական գործունեության սուբյեկտ են հանդիսանում միայն իրավաբանական անձինք:

ա) լոբբինգի օբյեկտից (օրենսդրական, գործադիր կամ դատական լոբբիզմ),

բ) լոբբինգի սուբյեկտից (քաղաքական, տնտեսական, սոցիալական, տարածաշրջանային, արտերկրյա լոբբինգ),

գ) լոբբինգի օբյեկտի և սուբյեկտի հարաբերություններից,

դ) նպատակներին հասնելու մեխանիզմներից,

դ) գործողության ժամանակից (երկարաժամկետ, կարճաժամկետ և այլն) [3]։

Լոբբիստական գործունեությունը փոխազդեցության մեջ է այն օբյեկտների հետ, որոնց ուղղությամբ իրականացվում է լոբբինգը։ Լոբբիստական խմբերի ռազմավարությունը կարող է ձևավորվել տվյալ երկրի օրենսդրական դաշտի առանձնահատկություններից ելնելով [4]։ Եվ հակառակը, մեծ ներուժ ունեցող լոբբիստական խմբերը կարող են զգալիորեն ազդել երկրի օրենսդիր դաշտի կազմակերպչական աշխատանքների, նպատակների ձևավորման և ուղղորդման գործընթացների վրա [5]։

Տվյալ պետությունում լոբբիստական գործունեությամբ կարող են զբաղվել ինչպես անհատ գործիչները, այնպես էլ քաղաքական, սոցիալ-տնտեսական խմբերը, կազմակերպություններն ու շարժումները, հասարակական-քաղաքական, պետական ինստիտուտները։ Նշված սուբյեկտները լոբբիստական գործունեությամբ միմյանցից տարբերակվում են իրենց նպատակներով, այդ նպատակներին հասնելու միջոցներով, գործունեության դաշտով։ Նման խմբերն ընդունված է անվանել լոբբիստական, նաև «ճնշման խմբեր», «շահերի խմբեր»։ Այս կամ այն շահերը հետապնդող հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական խումբը համարվում է լոբբիստական՝ հետևյալ հատկանիշներից ելնելով.

1. տվյալ խմբում ներառված անհատների միջև որևէ գաղափարի կամ նպատակի շուրջ փոխհամաձայնության առկայություն,
2. նպատակի հասնելու համար տվյալ խմբում ընդգրկված մարդկանց ինքնակազմակերպվածության առկայություն,
3. տվյալ խումբը կամ կազմակերպությունը հետևում է որոշակի սոցիալական կամ այլ շահերի պաշտպանության քաղաքականությանը,
4. խումբը տիրապետում է առաջադրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ տեղեկատվական ու տեխնոլոգիական ռեսուրսների,
5. կազմակերպությունը չի ձգտում գալ իշխանության,
6. խումբը տիրապետում է իշխանության գործադիր կամ օրենսդիր այս կամ այն ինստիտուտի, պաշտոնյաների վրա ազդելու մեխանիզմների, ունի հստակ մշակված ռազմավարական ծրագիր կամ գործողությունների պլան։

Շահերի խմբերը հիմնականում կամավոր միություններ են, որոշ դեպքերում՝ մի շարք մարդկանց կողմից ստեղծված կազմակերպություններ՝ իրենց պահանջների ու բողոքների արտահայտման և դրանք իշխանությանը հասցեագրելու միջոցով հօգուտ իրենց շահերի որոշումներ ակնկալելու նպատակով: Լոբբիստական խմբեր են, օրինակ, արհմիությունները, ՀԿ-ները, մասնագիտական խմբերը (իրավաբանների կամ բժիշկների միություն), այլ երկրում գործող լոբբիստական էթնիկ խմբերը, որոնք իրենց հայրենիքի շահերն են հետապնդում բնակության երկրում:

Լոբբիստական խմբերը կարելի է դասակարգել նաև ըստ գործունեության ուղղվածության [6].

1. *քաղաքական լոբբիստական խմբերը* ֆինանսատնտեսական ու սոցիալական ընկերություններ են, որոնք ձգտում են հասնել երկրի գործադիր ու օրենսդիր իշխանության վրա անհրաժեշտ ազդեցության՝ քաղաքական պայքարին և ընտրարշավներին մասնակցելու միջոցով: Արևմտյան Եվրոպայում լոբբիստական գործունեության այս սուբյեկտի օրինակ կարող է ծառայել Իտալիայի գործող վարչապետ Սիլվիո Բերլուսկոնիի՝ 1994թ. ստեղծած «Հառաջ, Իտալիա» շարժումը, որը ներկայացնում է ֆինանսաարդյունաբերական խոշոր ընկերությունների ու խմբերի շահերը [3]:
2. *Սոցիալական լոբբիստական խմբեր*, որոնց շարքին դասվում են արհմիությունները, վետերանների, կանանց, երիտասարդական, բնապահպանական կազմակերպությունները: Այս խմբերի լոբբիստական ներուժն ուղղակի համաչափ է ներկայացվող ճյուղի տնտեսական նշանակությանը: Օրինակ, նավթային ոլորտում ներգրավված լոբբիստները, սոցիալական այլ ոլորտի ներկայացուցիչների համեմատությամբ (օր.՝ գիտություն, կրթություն), տիրապետում են իրենց շահերի լոբբինգի անհամեմատ զգալի ռեսուրսների: Սոցիալական լոբբիստական խմբերն էական ազդեցություն ունեն հատկապես զարգացած երկրներում, որտեղ ժողովրդավարությունը բարձր մակարդակի վրա է:
3. *Տնտեսական լոբբիստական խմբեր*, որոնց համար պետական որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցության լծակներում տիրապետող են հատկապես տնտեսական գործոնները: Տնտեսական լոբբիստական խմբերի շարքին են դասվում ֆինանսաարդյունաբերական կազմակերպություններն ու կորպորացիաները, որոնք շուկայում զբաղեցնում են մենիշխան կարգավիճակ, ունեն սեփական ֆինանսաբանկային կառույցները, ԶԼՄ, ներկայացուցիչներ իշխանության գործադիր ու օրենսդիր մարմիններում [7]:
4. *Տարածաշրջանային լոբբիստական խմբեր*, որոնք ձգտում են ստանալ որոշակի արտոնություններ իրենց տարածքներում կամ նահանգային շրջաններում:

5. *Օտարերկրյա լոբբիստական խմբերը* համարվում են ազդեցիկ օտարերկրյա «ճնշման խմբեր» *(press groups),* քաղաքական համատեքստում ամենից հաճախ հանդիպում են որպես «էթնիկ շահերի խմբեր» *(ethnic interest groups):* Օտարերկրյա բազմաթիվ խմբերի ակտիվ գործունեության օրինակ է Միացյալ Նահանգները:
6. *Հատուկ լոբբիստական խմբեր,* որոնք հաճախ գործում են ոչ ինքնակամ, այլ իրենց ներկայացուցիչների միջոցով: Հատուկ լոբբիստական խմբերը գործի են դրվում այն ժամանակ, երբ տվյալ ընկերությունն օբյեկտիվ պատճառներով չի կարող արդյունավետ և ուղղակի դերակատարում ունենալ լոբբիստական գործընթացում, ուստի ֆինանսավորում է հատուկ լոբբիստական խմբերին՝ տվյալ որոշման վրա ազդելու նպատակով [8]:

3. Էթնիկ լոբբիստական խմբեր

Էթնիկ խմբերը, որոնք հաճախ անվանվում են նաև արտաքին քաղաքականության շահերի խմբեր, ձևավորվել են մշակութային, էթնիկական, կրոնական կամ ռասայական կապերի հիման վրա՝ բնակության երկրի արտաքին քաղաքականության վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն գործելու միջոցով իրենց հայրենիքի կամ ժողովրդի շահերը պաշտպանելու նպատակով: Էթնիկ լոբբիստական խմբերի զգալի մասը կապեր ունի իր հայրենիքի ներսում:

ԱՄՆ-ում ազգային փոքրամասնությունների էթնիկական ինքնագիտակցությունը զգալիորեն խթանվեց հատկապես Առաջին աշխարհամարտից հետո: Հիմնվեցին տարբեր լոբբիստական խմբեր՝ աջակցելու համար պատերազմի մեջ գտնվող իրենց եվրոպական հայրենիքներին: Թոմաս Ամբրոսիոյի խոսքերով. «Սառըպատերազմյան շրջանում ԱՄՆ էթնիկ լոբբիստական խմբերի ազդեցությունը երկրի օրենսդիր մարմնում որոշակիորեն սահմանափակված էր՝ պայմանավորված միջազգային ռազմաքաղաքական համակարգով և ԱՄՆ սառըպատերազմյան արտաքին քաղաքականությամբ, որը կենտրոնացած էր երկրի գործադիր իշխանության էլիտաների ձեռքերում» [9]: Սառըպատերազմյան ժամանակաշրջանի ավարտին և հատկապես խորհրդային կարգերի փլուզման արդյունքում, սակայն, համաշխարհային գործընթացներում ԱՄՆ դերի միջազգայնացման գործընթացը պայմանավորեց տեղի էթնիկ խմբերի հետ փոխհարաբերությունները՝ էապես նպաստելով վերջիններիս ակտիվացմանը երկրի արտաքին քաղաքականությունում:

ԱՄՆ-ում էթնիկ լոբբիստական գործունեության ակտիվացմանը զգալիորեն նպաստել են նաև ժողովրդավարական բարեփոխումները: ԱՄՆ Կոնգրեսի լոբբիստական խմբերի գործունեության ակտիվացմանը խթանեց «կոնգրե-

սական խորհուրդների» *(caucus)* ստեղծումը, որտեղ Ներկայացուցիչների պալատի անդամները ներկայացնում են տարբեր էթնիկական խմբերի շահերը:

Մասնագետ Ջեյմս Լինդսիի կարծիքով, առկա են մի շարք պայմաններ, որոնք ներգաղթած խմբերին դարձնում են էթնիկ լոբբիստական խմբեր [10]. նախ՝ ԱՄՆ ներգաղթածները, որոնք եկել են երկիր որպես քաղաքական փախստականներ (օր.՝ կուբացիները), առավել հաճախ են կազմակերպում էթնիկ լոբբիստական խմբեր, քան «տնտեսական» պատճառներով ներգաղթածները (օր.՝ իտալացիները): Երկրորդ՝ իրենց հարևան երկրների հետ հակամարտող երկրներից գաղթածները (Իսրայել, Հայաստան) առավել ակտիվ են իրականացնում լոբբիստական գործունեություն ի պաշտպանություն իրենց հայրենիքի շահերի, քան առավել բարեկեցիկ երկրներից ներգաղթածները (Նորվեգիա, Գերմանիա և այլն): Երրորդ՝ առավել ուժեղ քաղաքականացված լոբբի ձևավորվում է տնտեսապես հաջողակ էթնիկական խմբերի կողմից (հրեաներ, հայեր, հնդիկներ, հույներ): Եվ չորրորդ՝ էթնիկական լոբբիստական գործունեությունն առավել հաջողակ է, երբ դրված նպատակներն աջակցություն են գտնում ԱՄՆ քաղաքական էլիտաների կողմից և հակառակը:

Էթնիկ լոբբիստական խմբերը ձգտում են ուղղակի ազդեցություն գործել ԱՄՆ քաղաքականության վրա երեք հիմնական ճանապարհով՝ ա) հիմնահարցի ձևակերպում, երբ փորձում են կառավարության օրակարգ մտցնել որևէ հարց և դրանով ազդել կառավարության քաղաքականության վրա, բ) տեղեկատվության ապահովում, երբ խմբերը զգալի աշխատանք են կատարում օրենսդիրներին տվյալ հարցի հետ կապված անհրաժեշտ տեղեկատվական և քաղաքական վերլուծություն տրամադրելու հարցում. բազմապիսի հարցերի հետ առնչվելիս օրենսդիրները, ժամանակի սղության պատճառով, հակված են դիմելու լոբբիստների տեղեկատվությանն ու վերլուծությանը, գ) քաղաքականության մոնիթորինգ, երբ էթնիկ խմբերը մանրամասն մոնիթորինգի են ենթարկում տվյալ հարցի առնչությամբ կառավարության քաղաքականությունը և իրականացնում տեղեկատվական գրոհ՝ նամակագրական արշավներ, ընտրարշավներում աջակցություն որևէ թեկնածուին և այլն [10]:

ԱՄՆ-ում գործող էթնիկ լոբբիստական խմբերի գործունեության հիմնական առանձնահատկություններն են.

- ԱՄՆ Կոնգրեսի անդամներին ու կառավարության ներկայացուցիչներին անհրաժեշտ տեղեկատվության մատակարարում այս կամ այն հիմնահարցի շուրջ:
- Ակտիվ մասնակցություն Կոնգրեսի որոշումների ու օրինագծերի մշակման գործընթացում՝ կապված երկրի ներքին կամ արտաքին քաղաքականության հիմնահարցերի հետ:

- Քարոզչական և լրատվական գործունեության կազմակերպում՝ ուղղված ԱՄՆ հասարակական կարծիքի նպատակային ձևավորմանը:
- Ընտրարշավում աջակցություն «սեփական» թեկնածուին:

4. Լոբբինգի իրականացման տեխնոլոգիաների շուրջ

Լոբբինգի արդյունավետությունը պայմանավորված է նաև տվյալ նպատակին հասնելու համար կիրառվող մեթոդների ու տեխնոլոգիաների ճիշտ ընտրությամբ: Լոբբիստական գործունեությունում հաճախ կիրառվող տեխնոլոգիաներից են.

1. Հասարակական կարծիքի մոբիլիզացումը (զանգվածային ակցիաների նախաձեռնում, իշխանություններին հասցեագրված զանգվածային դիմումների կազմակերպում, ակտիվ գործունեություն ԶԼՄ դաշտում, դատական գործընթացների նախաձեռնում):
2. Ընտրարշավները (ընտրություններում անհատական մասնակցություն կամ «սեփական» թեկնածուի առաջադրում ու աջակցում):
3. Ֆորմալ կապերի կիրառումը (օրինագծերի մշակում, իշխանության ներկայացուցիչների խորհրդատվություն և ընդունվող որոշումների փորձաքննություն, մասնակցություն իշխանության մարմինների աշխատանքներին):
4. Ոչ ֆորմալ կապերի կիրառումը (գիտաժողովների կազմակերպում, անձնական կապերի օգտագործում, ոչ ֆորմալ հանդիպումների կազմակերպում):
5. Իշխանության ներկայացուցիչների վրա հոգեբանական ազդեցության կիրառումը (զանգեր, նամակներ, հեռագրեր):

ԱՄՆ լոբբինգում վերջին մի քանի տասնամյակում ակտիվ կիրառվող տեխնոլոգիաներից մեկը, որն արդյունավետ է գործում ժողովրդավարական ու քաղաքացիական զարգացած ինստիտուտներ ունեցող հասարակություններում, *«Lobbying the grassroots»* (խոտի արմատներ) լոբբինգն է [11]: Տեխնոլոգիայի համաձայն, լոբբիստը դիմում է ոչ թե տվյալ պաշտոնյային, այլ հասարակության ներկայացուցիչներին, որոնց վրա կարող է ազդել իշխանության այս կամ այն որոշումը: Լոբբիստը բացատրում է իրավիճակը, տվյալ հարցի հետ կապված քաղաքացիների շահերն ու կորուստները, հորդորում նրանց կապվել պաշտոնյաների ու օրենսդիրների հետ՝ տվյալ որոշումն ընդունելու կամ մերժելու պահանջով: Երբ տվյալ սենատորին հասցեագրվում են տասնյակ նամակներ ու բողոքներ՝ կապված որևէ որոշման ընդունման կամ մերժման հետ, օրենսդիրը ստիպված է լինում հիմնականում լսել ու հետևել հասարակական կարծիքին: Հասարակական կարծիքի հաշվառումն էական նշանա-

կություն ունի նաև սենատորի համար նահանգային կամ տեղական մարմիններում վերընտրվելու հարցում: Այս տեխնոլոգիայի իրականացման գործընթացում կատարվում են հետևյալ հիմնական գործողությունները.

1. Զանգվածային գործողությունների նախաձեռնում (ցույցեր, երթեր՝ լոբբիստի նախաձեռնությանն աջակցելու նպատակով):
2. Պաշտոնյաներին ու օրենսդիրներին հասցեագրված մշտական հեռախոսազանգերի կազմակերպում: Մշտական հեռախոսազանգերի կազմակերպումը կարող է շարունակվել ընդհուպ մինչև նրանց՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունից կտրելը:
3. Էլեկտրոնային փոստով բազմաքանակ նամակների առաքում՝ վերջինիս արգելափակման նպատակով:
4. Բնակչության տարբեր զանգվածների կողմից նամակների, հեռագրերի ուղարկում՝ լոբբիստի կողմից ներկայացված առաջարկությանն աջակցելու պահանջով:
5. Հասարակական ազդեցիկ գործիչների այցերի կազմակերպում՝ տվյալ նախաձեռնությանն աջակցելու կամ մերժելու դիմումով[1]:

Տեխնոլոգիան արդյունավետ կիրառվել է ԱՄՆ խոշոր լոբբիստական կազմակերպություններից մեկի՝ «ԱՄՆ զենքի ազգային ասոցիացիայի» կողմից 1980-ական թթ.: Ասոցիացիան հակազդում էր զենքի վաճառքի արգելման մասին օրենքի ընդունմանը և 22 ժամվա ընթացքում ԱՄՆ Կոնգրես ուղարկեց 3 միլիոն հեռագիր, ինչպես նաև հեռախոսազանգերով կազմակերպեց Կոնգրեսի շենքի հեռախոսային շրջափակումը, ինչի արդյունքում օրենքը չընդունվեց: Նշենք նաև, որ այդ նախաձեռնության իրականացման թիկունքին կանգնած էին ԱՄՆ զենքի արտադրության խոշոր ընկերությունները[2]:

5. Լոբբիստական գործունեությունը ԱՄՆ նահանգների մակարդակով

ԱՄՆ լոբբիստական գործունեության կարևոր առանձնահատկություններից մեկն էլ վերաբերում է դրա ապակենտրոնացմանը՝ կենտրոնից դեպի նահանգային կամ տեղական կառավարման համակարգերի փոխանցմանը, որը շոշափելի է դարձել վերջին երկու տասնամյակում: Խոշոր կորպորացիաներն ու խմբերը, որոնք ավանդաբար գործում էին իշխանության դաշնային մարմիններում, վերջին շրջանում սկսել են մեծացնել քաղաքական ներկայացվածությունը նահանգների օրենսդիր մարմիններում *(«Legislatures»)*[3]՝ դաշնային

[1] Профессиональный словарь лоббистской деятельности (составитель к.п.н. *П.А. Толстых*), *Grass roots lobbying* http://www.lobbying.ru/dictionary_word.php?id=18.

[2] Նույն տեղում:

[3] Словари и энциклопедии на Академике, Легислатура. http://dic.academic.ru/dic.nsf/lower/15828

ծրագրերի մի մասը նահանգների պատասխանատվությանը հանձնելու և վաշինգտոնյան լոբբիստների ճնշումները թուլացնելու նպատակով: Արդյունքում՝ դաշնային ծրագրերի թիվը կայուն կերպով սկսեց նվազել. եթե 20-րդ դարի 70-ականներին նահանգների կառավարություններն ունեին շուրջ $85 մլրդ բյուջե, ապա 90-ականներին այն արդեն $260 մլրդ էր [12, p. 66]: Նման միտման առաջացման համար կարելի է առանձնացնել երեք հիմնական պատճառ.

1. ԱՄՆ իշխանությունում կենտրոնից տեղական կառավարման մարմիններին որոշ լիազորությունների հանձնումը օբյեկտիվ գործընթաց է. այդ ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկվեցին Ռ.Նիքսոնի նախագահության ժամանակ, երբ ընդունվեց դաշնային եկամուտների մասնաբաժնի՝ իշխանության նահանգային և տեղական մարմինների միջև բաշխման ծրագիրը [13]: Նահանգների կողմից իրենց հատկացված ֆինանսների օգտագործման հարցում չէին գործում խիստ պահանջներ, արդյունքում՝ նահանգապետերը հնարավորություն ստացան կարգավորելու առաջացած խնդիրները [14]:
2. Լոբբիստական խմբերի շահերին առնչվող տեղական նշանակության հիմնախնդիրների ավելացման միտում:
3. Նահանգային կամ տեղական կազմակերպությունների քաղաքական գործունեության ակտիվացում: Երկրի բնակչությունն, իր հերթին, հիմնախնդիրները սկսել է կարգավորել տեղական իշխանությունների հետ [13]:

Նշյալ գործոնները չէին կարող չանդրադառնալ նահանգներում լոբբինգի ինստիտուտի զարգացման գործընթացի վրա: Նահանգներում լոբբիստական գործունեության ակտիվացման լուրջ քայլեր ձեռնարկվեցին հատկապես 1980-ական թթ., ինչի արդյունքում տեղական հիմնահարցերում ներգրավվեցին վաշինգտոնյան լավագույն լոբբիստներից շատերը: Ներկայում տեղական կամ նահանգային մակարդակում լոբբիստական գործունեությունն այնքան զարգացած է, որ, ըստ էության, չի տարբերվում դաշնային լոբբինգի մակարդակից:

Օրենսդիրների ուղղակի լոբբինգավորման ակտիվությունը կախված է նաև նահանգի օրենսդրական ժողովի աշխատանքային համակարգից: Տնտեսապես և քաղաքականապես առավել զարգացած նահանգներում ու շրջաններում (Կալիֆորնիա, Նոր Անգլիա) օրենսդրական մարմիններն աշխատում են նստաշրջանների մշտական ռեժիմով՝ 7-9 ամիս, իսկ այլ նահանգներում (օր.՝ Տեխաս) մշտական գործող նստաշրջան ընդհանրապես գոյություն չունի: Որքան կարևոր է տվյալ նահանգում օրենսդրության նշանակությունը, այնքան երկար է նստաշրջանը և, հետևաբար՝ ակտիվ լոբբիստական գործունեությունը: Կալիֆորնիայում՝ խոշոր և հարուստ նահանգներից մեկում, օրենսդիր

մարմնի դերը զգալի մեծ է: 1993-1994թթ. նահանգի օրենսդրական մարմնում լոբբինգավորման համար ծախսվել է $250 մլն, ինչը համեմատելի է տասնյակ նահանգներում իրականացվող լոբբիստական գործունեությանը տրվող ծախսերի հետ [15]: Նահանգում շահերի խմբերն առավել ուժեղ են, երբ այնտեղ գերիշխող դիրքեր ունի որևէ խոշոր կորպորացիա, և երկրորդ՝ երբ նահանգը քիչ է բնակեցված և արդյունաբերական տեսանկյունից քիչ զարգացած [16]:

6. ԱՄՆ լոբբինգի ինստիտուտի իրավաքաղաքական հիմքերը

ԱՄՆ-ում լոբբիզմն իրականացվում է 1789թ. ընդունված երկրի առաջին սահմանադրական փոփոխության համաձայն (10 փոփոխություն - *Bill of Rights),* որը երաշխավորում է իրենց բողոքներով իշխանության պաշտոնական մարմիններին դիմելու քաղաքացիների իրավունքը: Սահմանադրական փոփոխությունների փաթեթի առաջին փոփոխությունում նշվում է. «Կոնգրեսը չպետք է հրապարակի որևէ օրենք, որը կվերաբերի կրոնի սահմանմանը կամ էլ կարգելի դրա ազատ դավանումը, կամ էլ կսահմանափակի խոսքի կամ մամուլի ազատությունը, կամ էլ ժողովրդի՝ խաղաղ հավաքների կազմակերպման և բողոքների բավարարման համար կառավարությանը դիմելու իրավունքը»[1]:

Երկար ժամանակ ԱՄՆ-ում լոբբիստական գործունեություն ասելով հասկացվում էր արտաքին քաղաքականության հարցերի լոբբինգը, և հենց այդ գաղափարն էր ամրագրված 1938թ. ընդունված «Օտարերկրյա գործակալների գրանցման մասին» օրենքում *(Foreign Agents Registration Act-FARA):* Օրենքն ընդունվել է ԱՄՆ-ում նացիստական և կոմունիստական քարոզչական գործունեության կանխարգելման նպատակով [17]: 1938թ. օրենքի «Սահմանումներ» գլխի 611-րդ պարագրաֆի համաձայն, «օտարերկրյա ներկայացուցչության գործակալ» եզրը տարածվում է այն անձի վրա, որը համարվում է «օտարերկրյա ներկայացուցչության կամ ֆիզիկական անձի հրամանով, պահանջով կամ ուղղորդմամբ, վերահսկողությամբ գործող գործակալ, ներկայացուցիչ կամ ծառայող, որի գործողություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկվում, ղեկավարվում, ուղղորդվում, ֆինանսավորվում կամ սուբսիդավորվում են, ամբողջական կամ մասնակի տեսքով, օտարերկրյա ներկայացուցչի կողմից կամ այլ անձի միջոցով»[2]: Օրենքը պարտավորեցնում էր նրանց գրանցվել և հաշվետու լինել կատարված գործունեության համար: Գրանցվողը պետք է նշի իր անունը, գործունեության հասցեն կամ հասցեները, իր կարգավիճակին վերաբերող մանրամասները, եթե անհատ է՝ նշի ազ-

[1] Конституция Соединённых Штатов Америки. Поправки к Конституции, Билль о Правах (1791)-Поправка I (1791), http://ru.wikisource.org/wiki/КонституцияСоединённыхШтатов_Америки#.D0.9F.D0.BE.D0.BF.D1.80.D0.B0.D0.B2.D0.BA.D0.B0_I_.281791.29.

[2] Foreign Agents Registration Act. United States Department of Justice, http://www.justice.gov/criminal/fara/links/indx-act.html

գությունը, կազմակերպության դեպքում՝ անվանումը, հասցեն, ներառված անդամների ազգությունը: Օրենքի հիմնադրույթների խախտման համար սահմանվում էին նաև տույժեր՝ $5-10 հազար գումարի սահմաններում կամ 6 ամսից մինչև 5 տարի ազատազրկում՝ կախված իրավախախտման աստիճանից:

1946թ. ընդունվեց հատուկ օրենք լոբբիստական գործունեության կարգավորման մասին *(Federal Regulation of Lobbying Act-FRLA),* որով սահմանվեց բոլոր պրոֆեսիոնալ լոբբիստների գրանցման անհրաժեշտության պահանջը: Օրենքի հիմնական նպատակն էր լոբբիստների գրանցման ու բացահայտման համապարփակ համակարգի ստեղծումը, երկրի իշխանության օրենսդիր մարմինների վրա լոբբիստական խմբերի գործադրած ճնշումների վերաբերյալ պետական տեղեկատվության ապահովումը [18]: Օրենքը տարածվում էր միայն ԱՄՆ Կոնգրեսում իրականացվող լոբբիստական գործունեության վրա, և ոչ մի խոսք չկար լոբբիստների ակտիվության վերաբերյալ գործադիր իշխանությունում: 266-րդ պարագրաֆի համաձայն, օրենքը տարածվում է յուրաքանչյուր անհատի վրա, որն «անմիջականորեն իր ներկայացուցիչների, կամ ծառայողների, կամ այլ անձանց միջոցով հավաքագրում կամ ստանում է դրամական միջոցներ, կամ էլ այլ արժեքավոր բաներ՝ հիմնականում դրանք հետևյալ նպատակներին ծառայեցնելու համար. ա) ԱՄՆ Կոնգրեսի կողմից որևէ օրենսդրական ակտի ընդունում կամ մերժում, բ) ուղղակի կամ անուղղակի ազդեցության կիրառում ԱՄՆ Կոնգրեսի կողմից որևէ օրենսդրական ակտի ընդունման կամ մերժման վրա: 267-րդ պարագրաֆում նշվում է Սենատի կամ Ներկայացուցիչների պալատի քարտուղարի կողմից լոբբիստների գրանցման կարգը: Լոբբիստը գրավոր հայտարարություն է ներկայացնում, որում պետք է նշվեն գրանցվող անհատի կամ ընկերության անունն ու հասցեն: Պահանջվում է մանրամասն հաշվետվություն, որտեղ նշվելու են ստացված ու ծախսված բոլոր ֆինանսական միջոցները, այն անհատները, որոնց փոխանցվել են դրամական միջոցներ, ինչպես և այն օգտագործված փաստաթղթերի, ամսագրերի և այլ հրատարակումների անվանումները, որոնցում անհատի նախաձեռնությամբ զետեղվել են հոդվածներ կամ նյու-թեր՝ տվյալ օրինագծին աջակցելու համար [17]:

ԱՄՆ լոբբիստական գործունեության ուղղությամբ համեմատաբար հզոր հարձակման ալիք նախաձեռնվեց 20-րդ դարի 70-ականներին: Հենց այդ ժամանակաշրջանում կիրառվեցին համապատասխան միջոցառումներ, որոնք մասնակիորեն կանոնակարգեցին լոբբիստների գործունեությունը, չնայած ոլորտում նոր օրենքի ամրագրման անհրաժեշտությունը շատերի համար ակնհայտ էր: 1971թ. ընդունվեց «Դաշնային ընտրարշավների մասին» օրենքը *(«Federal Election Campaign Act»)*[1], որն ուղղված էր դաշնային ընտրարշավնե-

[1] Մանրամասն տե՛ս «Federal Election Campaign Laws». The Federal Election Commission, April, 2008, http://www.fec.gov/law/feca/feca.pdf

րին հատկացվող ֆինանսական միջոցների բացահայտմանը: Արդյունքում՝ 1974թ. օրենքում տեղ գտած փոփոխությունների հիման վրա ամրագրվեցին ընտրարշավների ֆինանսական հատկացումների սահմանափակումները, այդ գործընթացների վերահսկողության մեծացման նպատակներով ստեղծվեց նաև «Դաշնային ընտրությունների հանձնաժողով» *(«Federal Election Commission»):* Օրենքը նպատակաուղղված էր ճնշման խմբերի ազդեցության սահմանափակմանը, որոնք ցանկանում էին ընտրություններին աջակցել ու առաջ մղել նախագահի իրենց թեկնածուին: Հայտնի է, որ ԱՄՆ նախագահներից շատերի թիկունքին, որպես կանոն, կանգնած են ազդեցության որոշակի ուժեր. Էյզենհաուերին աջակցում էր ռազմական լոբբին, Ջոնսոնին՝ Տեխասի նավթագործները և այլն:

1995թ. ԱՄՆ նախկին նախագահ Բիլ Քլինթոնը ստորագրեց նոր՝ լոբբիստական գործունեության բացահայտման մասին առավել խիստ մոտեցումներ ունեցող օրենք *(«Lobbying Disclosury Act»):* Նոր ընդունված օրենքի կարևոր առանձնահատկություններից մեկն այն էր, որ ակտն առաջին անգամ տարածվում էր լոբբիստական գործունեության վրա ոչ միայն ԱՄՆ Կոնգրեսում, այլև գործադիր իշխանության վրա, ինչը պայմանավորված էր երկրի գործադիր իշխանությունում լոբբիստների ակտիվացմամբ ու գործադրվող ճնշումների ուժեղացմամբ:

Օրենքի երկրորդ գլխի առաջին կետում նշվում էր. «ԱՄՆ կառավարությունը պահանջում է դաշնային կառավարության օրենսդիր ու գործադիր մարմինների պետական որոշումների ընդունման գործընթացի վրա ազդեցություն գործելու համար վարձատրված լոբբիստների գործունեության վերաբերյալ պետական տեղեկատվության ապահովում» [19]: 1995թ. օրենքի համաձայն, «լոբբիստները և լոբբիստական ընկերությունները պարտավոր են գրանցվել ԱՄՆ Սենատի հասարակական արձանագրությունների քարտուղարի գրասենյակում *(Senate Office of Public Records):* Յուրաքանչյուր կես տարին մեկ լոբբիստներն ու լոբբիստական ընկերությունները պետք է ուղարկեն իրենց գործունեության վերաբերյալ մանրամասն հաշվետվություն Սենատի հասարակական արձանագրությունների գրասենյակ:

Նոր օրենքն առանձնանում էր նաև նրանով, որ ներառում էր սահմանումներ, որոնք մինչ այդ գործող օրենսդրությունում բացակայում էին: Օրենքի երրորդ՝ «Սահմանումներ» գլխում ԱՄՆ գործադիր ու օրենսդիր իշխանության՝ լոբբիստական գործունեության ազդեցությանը ենթակա բարձրաստիճան և այլ ծառայողները սահմանվում էին որպես «գործադիր կամ օրենսդիր մարմնի ներառված պաշտոնյա» *(Covered Executive/Legislative Branch Official):* «Գործադիր մարմնի ներառված պաշտոնյա» կատեգորիան տարածվում էր ԱՄՆ նախագահի, փոխնախագահի և այլ ծառայողների վրա: Ըստ «Սահմա-

նումներ» գլխի 9-րդ կետի՝ «Լոբբիստական ընկերություն» եզրը նշանակում է այն անձը կամ կազմակերպությունը, որն ունի մեկ կամ ավելի ծառայողներ, որոնք համարվում են տվյալ պատվիրատուի անունից ներկայացող լոբբիստներ...»: «Սահմանումներ» գլխի 10-րդ կետում «Լոբբիստ» եզրը նշում է յուրաքանչյուր անհատի, որը ծառայություն է մատուցում պատվիրատուին կամ վարձու աշխատում է նրա համար՝ մատուցած ծառայությունների համար ֆինանսական կամ այլ փոխհատուցման դիմաց, որոնք (ծառայությունները) ներառում են ավելի քան մեկ լոբբինգային հաղորդակցություն, և որը վեց ամսվա ընթացքում իր գործունեության 20%-ից ավելին հատկացնում է լոբբիստական գործունեությանը» [19]:

Օրենքով խստություն մտցվեց նաև լոբբիստական գործունեության ընթացքում տեղ գտած իրավախախտումների վերաբերյալ, ինչի արդյունքում տույժերը մեծացան հինգ անգամ, սակայն ազատազրկում իրավազանցներին չէր սպառնում:

Նման օրենքի ընդունումն այդ ժամանակաշրջանի հրամայականն էր, որը պայմանավորված էր աշխարհում ռազմաքաղաքական, հասարակական ու տնտեսական գործընթացների գլոբալացմամբ, ինչի արդյունքում ԱՄՆ-ում ուժեղացավ լոբբիստական գործունեության ազդեցությունը: Նոր օրենքի ընդունումը կարևորվում էր նաև նրանով, որ մինչ այդ երկրում գործող հինգ լոբբիստներից միայն մեկն էր, որպես կանոն, գրանցվում, իսկ մնացյալը գերադասում էին չհրապարակել իրենց գործունեությունը և հանդես էին գալիս որպես փորձագետներ, խորհրդատուներ և այլն:

2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունները զգալի ազդեցություն ունեցան Միացյալ Նահանգներում լոբբիստների գործունեության վրա: Անվտանգության միջոցառումների ուժեղացումը սահմանափակումներ մտցրեց ԱՄՆ Կոնգրեսի շենք լոբբիստների ու լոբբիստական կազմակերպությունների մուտքի հարցերում: Արդյունքում՝ լոբբիստական կապերի հաստատման գործում լայն տարածում գտան ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաները, ստեղծվեցին պրոֆեսիոնալ էլեկտրոնային կայքեր և այլ անհրաժեշտ տեխնոլոգիական միջոցներ՝ օրենսդիրների հետ հաղորդակցման և այս կամ այն որոշման ընդունման գործընթացի վրա ազդեցություն գործելու նպատակներով:

Իշխանության գալով՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, իր հերթին, սկսեց զգալի ուշադրություն դարձնել ԱՄՆ գործադիր ու օրենսդիր իշխանությունում լոբբիստական գործունեության վրա՝ փորձելով հնարավորինս կանոնակարգել նրանց միջև հարաբերություններն ու նվազագույնի հասցնել առկա ռիսկերը: Ի տարբերություն նախորդ նախագահների, Օբաման կենտրոնացավ հատկապես ԱՄՆ գործադիր իշխանությունում լոբբիստական բարոյական սկզբունքների և վերջինիս վրա լոբբիստների գործունության ազդեցության խնդիրների վրա:

2009թ. հունվարի 21-ին Բ.Օբաման հրապարակեց 13490 որոշումը՝ «Գործադիր իշխանության անձնակազմի բարոյական հանձնարարականներ» խորագրով *(«Ethics Commitments by Executive Branch Personnel»),* որտեղ հստակեցվում էին գործադիր իշխանության յուրաքանչյուր պաշտոնյայի համար անհրաժեշտ լոբբինգի բարոյական նորմերը: Այդ որոշմամբ խստացվեցին լոբբիստների համար գործող նախկին կանոնները: Նախագահական նոր նախաձեռնության համաձայն, արգելվում էր լոբբիստների կողմից վարչակազմի աշխատակիցներին տրվող նվերներ ընդունելը, նորանշանակ պաշտոնյան իրավունք չուներ նշանակման օրվանից երկու տարվա ընթացքում զբաղվել նախկին լոբբիստական գործունեության հետ առնչվող գործարքներով, և պահանջվում էր կառավարական աշխատանքի տեղավորման հարցում առաջնորդվել որակական հատկանիշներով, գիտելիքներով ու փորձառությամբ, այլ ոչ թե քաղաքական կապերով» [20]:

2009թ. մարտ-հուլիսին ԱՄՆ նախագահը ստորագրեց հուշագրեր, որոնք կոչված էին կառավարելու գրանցված լոբբիստների և իշխանության գործադիր մարմնի՝ 2009թ. ընդունված «Ամերիկյան վերականգնման ու վերներդրումային ակտի» *(«American Recovery and Reinvestment Act of 2009»)* հիմնադրամները ղեկավարող ծառայողների հաղորդակցությունը: «Ամերիկյան վերականգնման ու վերներդրումային ակտը», որն ընդունվեց ԱՄՆ Կոնգրեսի կողմից 2009թ. փետրվարի 29-ին, տնտեսության խթանման ծրագրերի ու գործողությունների փաթեթ է՝ ընդհանուր առմամբ $787 մլրդ արժողությամբ: Սպիտակ տան վարչակազմը որոշակի սահմանափակումներ մտցրեց լոբբիստների գործունեությունում՝ կապված «Ամերիկյան վերականգնման ու վերներդրումային ակտի» հետ, քանզի մտավախություն ուներ, որ լոբբիստները կարող էին զգալի ազդեցություն ունենալ ակտի իրագործման գործընթացների ու նպատակների ուղղությամբ: Սահմանափակումները վերաբերում էին լոբբիստների ու իշխանության գործադիր մարմնի ծառայողների միջև ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր հաղորդակցություններին [21]: ԱՄՆ նախագահի հուշագիրը իշխանության գործադիր մարմնի յուրաքանչյուր գործակալությունից պահանջում էր էլեկտրոնային կայքում ամփոփագիր տեղադրել լոբբիստների հետ բանավոր ու գրավոր կապերի մասին:

Այսպես, 2009թ. մարտի 20-ին նախագահ Օբաման հրապարակեց «Նախագահական հուշագիրը» *(«Presidental Memorandum»)* հասցեագրված գործադիր իշխանության դեպարտամենտների ու գործակալությունների ղեկավարներին, որտեղ ներկայացվում էին «Վերականգնման ակտի» հետ կապված լոբբիստների հետ բանավոր հաղորդակցության սահմանափակումները: Նախագահական հուշագիրը «Վերականգնման ակտի» ֆոնդերի բաշխման հարցում գործադիր իշխանության դեպարտամենտների ու գործակալությունների համար սահմանում էր 4 քաղաքական ուղեգիծ.

1. Երաշխավորել, որ ընդունվող որոշումն արժանահավատ է դրամաշնորհներ ու դաշնային ֆինանսական աջակցության այլ ձևեր տալու համար։
2. Խուսափել «ոչ խելամիտ» նախագծերի ֆինանսավորումից։
3. Երաշխավորել գրանցված լոբբիստների հետ հաղորդակցությունների թափանցիկությունը։
4. Հուշագրի իրականացման համար ապահովել «Կառավարման և բյուջետային գրասենյակի՝ դեպարտամենտներին ու գործակալություններին ցուցաբերվող աջակցությունը [22]։

Գործադիր իշխանության դեպարտամենտներում ու գործակալություններում գրանցված լոբբիստների հետ հաղորդակցություն հաստատելիս անհրաժեշտ թափանցիկության երաշխավորման համար նախագահական հուշագրի երրորդ գլխում առանձնացվում են լոբբիստների հետ փոխգործակցության հինգ խորհուրդներ կամ ուղենիշներ.

1. Գործադիր իշխանության դեպարտամենտներն ու գործակալությունները չեն կարող հաշվի առնել լոբբիստների տեսակետները՝ կապված նախագծերի, հայտարարությունների հետ։
2. Գործակալության պաշտոնյաները չեն կարող բանավոր հաղորդակցվել (մարդու միջոցով կամ հեռախոսով) գրանցված լոբբիստների հետ՝ «Վերականգնման ակտի» նախագծերի, հայտարարությունների կամ ֆինանսավորման հայտարարությունների վերաբերյալ և պետք է տեղեկանան, որ անհատները կամ կազմակերպությունները չեն հանդիսանում 1995թ. ընդունված «Լոբբիստների բացահայտման ակտով» գործող լոբբիստներ[1]։
3. Գրանցված լոբբիստի գրավոր հաղորդակցությունը պետք է պաշտոնապես տեղադրվի հասցեատեր հանդիսացող գործակալության կամ կառավարական կազմակերպության կողմից՝ վերջինիս էլեկտրոնային կայքի համապատասխան մասում՝ ստացման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում[2]։
4. Գործադիր իշխանության դեպարտամենտներն ու գործակալությունները կարող են բանավոր հաղորդակցվել գրանցված լոբբիստների հետ, եթե տվյալ նախագծերը, հայտարարությունները չեն քննարկվել...
5. Գործակալության պաշտոնյաները հաղորդակցությունների ցուցակագրման ժամանակ պետք է վերահաստատեն, որ հաղորդակցություններին մասնակից որևէ անհատ կամ ընկերություն գրանցված լոբբիստ չէ [22]։

[1] Հուշագրի համաձայն, լոբբիստները կարող են առաջարկել իրենց մեկնաբանությունները գրավոր տեսքով և հասցեագրել գործադիր իշխանության դեպարտամենտներին ու գործակալություններին։
[2] Յուրաքանչյուր գործակալություն պետք է ունենա Վերականգնման ակտի կայք։

Սպիտակ տունը չսահմանափակվեց գործադիր իշխանության հետ հաղորդակցության գործում գրանցված լոբբիստների ու լոբբիստական խմբերի իրավական սահմանափակումներով: Նախորդ տարվա սեպտեմբերի 23-ին ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայտարարեց նոր քաղաքականության մասին, որով սահմանափակումներ էին մտցվելու գործակալությունների խորհրդատվական խորհուրդներում ու հանձնաժողովներում («Դաշնային խորհրդատվական հանձնաժողովները» - *«Federal Advisory Committees».* գործում են մոտավորապես 1000 նման հանձնաժողովներ) աշխատող գրանցված լոբբիստների թվաքանակի մեջ՝ «Վաշինգտոնում հատուկ շահերի խմբերի ազդեցության թուլացման կամ նվազեցման նպատակներով» [23]: Այս նախաձեռնությունը հիմնականում ուղղված էր նրան, որպեսզի գործակալությունների խորհրդատվական խորհուրդներում ու հանձնաժողովներում չկարողանան նշանակվել գրանցված լոբբիստները: Նախաձեռնության համաձայն, գործադիր իշխանության գործակալությունների խորհրդատվական հանձնաժողովները նոր նշանակումների ժամանակ այսուհետ չպետք է այլևս վերանշանակեին այն անհատներին, որոնք գրանցված լոբբիստներ են[1]:

ԱՄՆ գործադիր իշխանության դեպարտամենտներում ու գործակալություններում գրանցված լոբբիստների մուտքի սահմանափակումները փոփոխություններ մտցրին լոբբիստների ու «ներառված գործադիր իշխանության պաշտոնյաների» փոխհարաբերություններում: 2008թ. որոշակիորեն նվազեց վաշինգտոնյան գրանցված լոբբիստների թվաքանակը. եթե 2007թ. նրանց թիվը 15.405 էր, 2008-ին այն կազմում էր 15.150: Ընդ որում, լոբբիստների թվի նվազման միտումը եղել է առաջին անգամ վերջին տասնամյակի ընթացքում. 1998թ. ի վեր նրանց թվաքանակը կայուն աճման միտում է արձանագրել[2]:

Այսպիսով, Առաջին աշխարհամարտից սկսած Միացյալ Նահանգներում գործող լոբբիստական գործունեության ակտիվացման արդյունքում լոբբիստներն ու լոբբիստական խմբերը կարողացան էապես ներգրավվել երկրի ներքին ու արտաքին քաղաքականությունում և զգալի ազդեցություն ունենալ պետական որոշումների կայացման գործընթացում: ԱՄՆ իշխանության վրա լոբբիստական խմբերի ազդեցության մեծացումը խիստ մտահոգիչ դարձավ երկրի վերնախավի համար Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ ԱՄՆ ղեկավարությունը սկսեց ակտիվորեն ներգրավվել գործող լոբբիստական խմբերի գրանցման պահանջների խստացման իրավական հիմքերի ամրագրման ուղղությամբ: Վերջին տասնամյակներում լոբբիստական գործունեության, այդ թվում և ԱՄՆ գործադիր իշխանությունում կտրուկ ակտիվացման արդյունքում երկրի ղեկավարությունը ոլորտում մի շարք իրավական սահմանափակումներ մտցրեց: 2001թ. սեպտեմբերյան ահաբեկչությունից հետո երկրում անվտանգու-

[1] *Norm Eisen*, «Lobbyists on Agency Boards and Commissions», September 23, 2009 / http://www.whitehouse.gov/blog/Lobbyists-on-Agency-Boards-and-Commissions.

[2] «Оборот лоббистской индустрии США увеличивается, несмотря на кризис 2009», Март-12/09. WashingtonPrfile, liga.net /http://www.lobbying.com.ua/news/2009-03-12-61-ի նյութերով:

թյան ապահովման միջոցառումների խստացումները նույնպես ազդեցին երկրի լոբբինգի ինստիտուտի իրավական գործողությունների վրա:

Իշխանության գալով՝ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման, իր հերթին, նոր իրավական սահմանափակումներ մտցրեց, ինչի արդյունքում խստացվեցին պետական ներկայացուցիչների ու լոբբիստների միջև փոխհարաբերությունները, Վաշինգտոնում հատուկ շահերի խմբերի ազդեցության թուլացման նպատակով նվազեցվեց ԱՄՆ գործակալությունների խորհրդատվական խորհուրդներում ու հանձնաժողովներում գործող լոբբիստների թվաքանակը՝ այդ-տեղից նրանց դուրսմղման հետագա մտադրությամբ:

Փետրվար, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Kathryn Allamong Jacob*, ”King of the Lobby”, The Johns Hopkins University Press, 2010.
2. *Craig Holman,* «Origins, Evolution and Structure of the Lobbying Disclosure Act», Public Citizen, 2005.
3. *Минченко Е.Н., Студеникин Н.В.,* «Современные тенденции в технологиях лоббизма», 21 мая 2004г.
4. *Jennifer Nicoll Victor,* «Strategic Lobbying: Demonstrating How Legislative Context Effects Interest Groups' Lobbying Tactics», Chicago, 2002.
5. *Randall S. Kroszner and Thomas Stratmann,* «Interest Group Competition and the Organization of Congress:Theory and Evidence from Financial Services' Political Action Committees», American Economic Review, 1998.
6. *Перегудов С.П., Семененко М.С.,* «Лоббизм в политической системе России», Мировая экономика и международные отношения, 1996г., номер 9.
7. *Бятец М.В.,* «Лоббизм в правотворческой деятельности», журнал «Правоведение», 1998г. - № 1./ с. 46 – 52.
8. *Thomas P. Lyon, John W. Maxwell,* «Astroturf: Interest Group Lobbying and Corporate Strategy». Journal of Economics & Management Strategy, Volume 13, Number 4, 2004.
9. *Thomas Ambrosio,* «Ethnic Identity Groups and U.S. Foreign Policy», Printed in the United States of America, 2002.
10. *James Lindsay,* “Getting Uncle Sam's Ear”, Council on Foreign Relations (Winter 2002).
11. *Conor McGrath,* «Grass Roots Lobbying: Marketing Politics and Policy 'Beyond The Beltway». Paper Deliveredto the conference «Elections on the Horizon: Marketing Politics to the Electorate in the USA and UK», British Library, 15 March, 2004.
12. *Thomas C., Hrebenar R.,* “Nationalization of Interest Groups and Lobbying in the States”. In Interest Group Politics. Ed. by A. Cigler, B. Loomis., Washington, 1991.
13. *Никита Иванов,* «Лоббизм в легислатурах американских штатов», Национальная лаборатория внешней политики, 24 апреля 2002г.
14. *Rosenthal A.,* The Third House.”Lobbyists and Lobbying in the States”, Washington, 1993.
15. *Hrebenar R.,* “Interest Group Politics in America”, 3rd edition, New York, 1997.
16. *Morehouse S.,* «State Politics, Parties and Policy», New York, 1981.
17. «History of the Lobbying Disclosure Act», Public Citizen, July 23, 2005.
18. *Craig Holman*, «Making the U.S. Lobbying Disclosure Act Work as Intendeed: Implica-

tions for the Eouropean Transparency Initiative». Public Citizen, 2008.
19. «Lobbying Disclosure Act», Public Law 104-65, Section 2, (1). 104th Congress. Dec. 1995.
20. Executive Order 13490. «Ethics Commitments by Executive Branch Personnel», 74 Federal Register 4673. January 26, 2009.
21. *Jacob R. Straus*, «Lobbying the Executive Branch: Current Practices and Options for Change», Congressional Research Service, Dec. 1, 2009.
22. The President: «Memorandum of March 20, 2009: Ensuring Responsible Spending of Recovery Act Funds»", 74 Federal Register 12531, March 25, 2009.
23. The White House. «Lobbyists on Agency Boards and Commissions», Blog Post. September 23, 2009.

ИНСТИТУТ ЛОББИНГА В СОЕДИНЕННЫХ ШТАТАХ. ПРАВОВЫЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ОСНОВЫ ЛОББИСТСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Карен Веранян

Резюме

В результате активизации деятельности лоббистских групп, действующих в США со времен Первой мировой войны, лоббисты и лобистские группы сумели существенно внедриться во внутреннюю и внешнюю политику страны и оказывать значительное влияние на процесс принятия государственных решений. Усиления влияния лоббинга на власти США вызывало серьезную озабоченность элиты Соединенных Штатов в годы Второй мировой войны, когда руководство страны стало активно вмешиваться в процесс закрепления правовых норм, ужесточающих требования по регистрации лоббистских групп. В результате наблюдавшейся в последние десятилетия резкой активизации лоббистской деятельности, в том числе в исполнительной власти США, вызвавшей значительное усиление влияния разных лоббируемых частных интересов на принятие государственных решений, руководство страны ввело целый ряд правовых ограничений в этой сфере. Ужесточение мер по обеспечению безопасности страны после сентябрьских событий 2001г. также повлияло на правовую деятельность института лоббинга в стране.

Придя к власти, действующий президент США Барак Обама в свою очередь ввел новые правовые ограничения, в результате чего были ужесточены взаимоотношения между представителями государства и лоббистами; для ослабления влияния лоббистских групп в Вашингтоне количество лоббистов, действующих в консультационных советах ведомств и коммисиях США, было уменьшено с тем, чтобы в дальнейшем и вовсе вывести лоббистов из их составов.

ԱՐԴԻ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հրանտ Միքայելյան

1991թ. անկախության ձեռքբերումից հետո Վրաստանը հայտնվեց քաոսի իրավիճակում: Տնտեսությունը լիովին փլուզվեց լրջագույն մի շարք խնդիրների հետևանքով. Աբխազիայի և Օսիայի հետ պարտությամբ ավարտված պատերազմ, քաղաքացիական պատերազմ, կառավարման նախկին համակարգի փլուզում: Գումարվեց նաև այն ժամանակվա իշխանությունների ոչ ճիշտ քաղաքականությունը, այդ թվում Շևարդնաձեի նախաձեռնությունը՝ դրամական միջոցները դնել Խնայբանկում՝ գումարը կրկնապատկելու խոստումով: Արդյունքում՝ Վրաստանի տնտեսությունը փաստորեն սնանկացավ, ընդ որում՝ ճգնաժամից դուրս չի եկել ցայսօր[1]: Հոդվածը նվիրված է այս և վրացական հետագա իրողությունների ուսումնասիրությանը:

1. Վրաստանի ներքին քաղաքականությունը մինչև Սահակաշվիլին

Վրաստանի առաջին նախագահ Զվիադ Գամսախուրդիան զգալի տարբերությամբ հաղթեց ընտրություններում՝ հավաքելով ձայների 86%-ը[2]: Մի քանի ամիս անց նրա վարած համընդհանուր ոչ ճիշտ գծի պատճառով Գամսախուրդիայի վարկանիշն զգալիորեն ընկավ, ուժեղացավ նրա ընդդիմությունը, և քաղաքացիական պատերազմ սկսվեց, ինչը ցավալի հետևանքներ ունեցավ Վրաստանի համար: Շուտով Վրաստան եկավ Էդուարդ Շևարդնաձեն, որն իր հերթին հավաքեց մոտ 80%:

Շևարդնաձեի օրոք կլանայնությունը Վրաստանում հատկապես ակնհայտ էր. նրա կուսակցությունը բաղկացած էր երկու խմբից՝ «հին կերտվածքի» մարդկանցից (նրա ընկերներն ու հարազատները) և երիտասարդ ռեֆորմատորներից: Շևարդնաձեի ռեժիմն իր հիմնական նվաճումն էր համարում կայունության ձեռքբերումը, ընդ որում՝ խոստացված տնտեսական զարգա-

[1] Հարավային Կովկասի հանրապետությունների մեջ միայն Վրաստանն այդպես էլ չկարողացավ հաղթահարել խորհրդային ժամանակվա տնտեսական զարգացման շեմը: Այսպես, 2007թ. գներով բնակչության մեկ շնչի գնողունակությունը Վրացական ԽՍՀ-ում 1985թ. կազմել է $7604, իսկ 2007-ին՝ $4400: Համեմատության համար. Հայաստանում 2007թ. այն կազմել է $5693: Վրաստանից բացի խորհրդային ցուցանիշներին չեն հասել նաև Ուկրաինան, Մոլդովան, Ղրղզստանը, Տաջիկստանը: Տե՛ս UNPD HDI (Human Developement Index) 2009 Complete report, pp 195-198, Table "Economy and inequality".

[2] *Фатех Вергасов*. Гамсахурдиа. — Псевдология (Pseudology.org), 17.03.2007. — № 0241.

ցումն այդպես էլ տեղի չունեցավ[1]: Վրաստանի կառավարական «Վրաստանի քաղաքացիների միություն» կուսակցության ռեֆորմատորների թևում նրանք էին, ովքեր հետագայում դարձան ապագա հեղափոխության առաջնորդները՝ Զուրաբ Ժվանիա, Նինո Բուրջանաձե, Միխայիլ Սահակաշվիլի, Վանո Մերաբիշվիլի, Գիա Բոկերիա և շատ ուրիշներ: Զուրաբ Ժվանիան և Նինո Բուրջանաձեն հասցրին լինել խորհրդարանի նախագահներ, Միխայիլ Սահակաշվիլին՝ արդարադատության նախարար: Ի դեպ, հետխորհրդային տարածքին բավական բնորոշ է, որ երիտասարդ ռեֆորմատորների շրջանակներից նախկին բարձրաստիճան չինովնիկները դառնում են ընդդիմադիրներ և պահանջում հեղափոխական ճանապարհով փոխել երկրի իշխանությունը:

1990-ական թթ. Վրաստանը նման էր հետխորհրդային շատ երկրներին. աստիճանավորների կամայականություն, զանգվածային կոռուպցիա, միջազգային դրամաշնորհների և հումանիտար օգնության (որը Վրաստանն ստանում էր բավական երկար ժամանակ) թալան: Ինչպես նաև հացի քարտեր ու հերթեր, էլեկտրաէներգիայի մատակարարման խափանումներ, խարույկներ բակերում և էլի նման շատ բաներ: Վրաստանը սառեցված երկու հակամարտություն ուներ՝ Աբխազիա և Հարավային Օսիա: Երկու դեպքում էլ հանրապետությունը պարտվող կողմ դուրս եկավ. պատճառներին անդրադարձը դուրս է հոդվածի շրջանակներից:

1990-ական թթ. առաջին կեսին Վրաստանում իսկական քաոս էր տիրում. մանր «իշխանները» վերահսկում էին երկրի մեծ մասը, ապահովված չէր ճանապարհների անվտանգությունը, գույքի անձեռնմխելիությունը և, առհասարակ, քաղաքացիների կյանքի անվտանգությունը. մեծ էր հանցավորության և քրեական տարրերի տարածման աստիճանը: Բացի այդ, բոլորովին չէր վերահսկվում Ասլան Աբաշիձեի Աջարիան. դա այն ժամանակվա Վրաստանի մի առանձին երևույթ էր:

Ասլան Աբաշիձեն 1991թ. Աջարիայի ղեկավարի պաշտոնին առաջադրվեց Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիայի կողմից[2]: Աբաշիձեն Աջարիայում ստեղծեց «քվազիպետության» մոդել: Այն բնութագրող մի քանի փաստ.

1. կառավարման ողջ ընթացքում Աբաշիձեն Վրաստանի կենտրոնական բյուջե չի փոխանցել և ոչ մի սենթ,
2. Աբաշիձեին հաջողվեց խուսափել քաղաքացիական պատերազմից Աջարիայում՝ Ռուսաստանի աջակցության շնորհիվ,

[1] Այսպես, 1996-1997թթ. տնտեսական աճը փոխարինվեց լճացմամբ: 1996 և 1997թթ. Վրաստանի տնտեսությունն աճեց 110-111%-ով, իսկ 1998-2002թթ. տնտեսական աճը կազմում էր տարեկան 1-5%, ինչը երկրի բնակիչները չէին զգում: Տե՛ս Статистический комитет СНГ, Грузия. cisstat.org/rus/georg.html; Департамент статистики министерства экономического развития Грузии, statistics.ge.

[2] Զվիադ Գամսախուրդիան այն ժամանակ հայտարարեց պատգամավորներին. «Նա, ով աջակցում է Վրաստանի անկախությանը, քվեարկում է Ասլան Աբաշիձեի ընտրության օգտին»:

3. Աջարիան փաստական պետական սահման և սահմանակետեր ուներ ոչ միայն Թուրքիայի, այլ նաև մնացյալ Վրաստանի հետ,
4. Աջարիան ուներ սովորական պետությունում գործող պետական կառույցների մեծամասնության նմանակներ՝ սեփական խորհրդարան, զինված ուժեր՝ կազմված Վրաստանի ԶՈւ 25-րդ բրիգադից, ընդ որում՝ նրանց թվաքանակը վրացական չափանիշներով բավական մեծ էր՝ մոտ 3.000,
5. նավահանգստի և ծովից եկող ու դեպի Թուրքիա տարանցումից ստացվող բոլոր եկամուտների վերահսկողություն հետխորհրդային ողջ տարածքի համար,
6. Աջարիան տնտեսական կոլապսի մեջ չէր,
7. Աբաշիձեի ռեժիմն, ըստ էության, ուներ արտգործնախարարություն Եվրոպական տարածաշրջանների ասամբլեայի գրասենյակի ցուցանակի ներքո,
8. Աբաշիձեն անկախ արտաքին քաղաքականություն էր վարում, այդ թվում որոշ հաջողությունների էր հասել՝ Ռուսաստանի և եվրոպական կառույցների աջակցությանը[1]:

Հետաքրքիր են նաև Վրաստանի տարբերությունները հետխորհրդային այլ երկրներից: Նախ՝ էլեկտրաէներգիայի հետ կապված խնդիրներն անհամեմատ ավելի երկարեցին, չնայած այն բանին, որ Վրաստանը շատ հարուստ է հիդրոռեսուրսներով: 2004թ. Վրաստանի մայրաքաղաքը դեռ մթության մեջ էր: Երկրորդ՝ քաղաքական համակարգի անկայունությունը հաճախ արտահայտվում էր նախագահի վրա կատարված մահափորձերով: Երրորդ՝ Վրաստանը գործնականում մարտունակ բանակ չուներ, զորքի թիվը կազմում էր 12 հազար, իսկ զորակոչն ապահովվում էր ընդամենը 3-10%-ով: Չորրորդ՝ Վրաստանում շատ արագ զարգանում էին երրորդ սեկտորը (հասարակական կազմակերպություններ) և ազատ ԶԼՄ-ն, ընդ որում՝ ոչ կառավարական կազմակերպությունների զարգացման գործում մեծ դեր խաղաց Զուրաբ Ժվանիան: Այս հանգամանքն էլ դարձավ ապագա հեղափոխության հիմքը:

2. Նախագահ Սահակաշվիլին և 2003-2008թթ. Վրաստանը

Վերը թվարկվածով հանդերձ Վրաստանը թևակոխեց 21-րդ դար և դիմավորեց «վարդերի հեղափոխությունը»: Ինչպես կարելի է կռահել, հեղափոխության հետևանքը դարձավ իրավիճակի փոխակերպումն իր *բացարձակ* հակառակին: Այսպես, նրա առաջին քայլը եղավ նախագահական իշխանության ամրապնդումը: Այնուհետև հաջորդեցին հին կոռումպացված պաշտոնյաների ձեր-

[1] 1992թ. Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինը Աջարիայի Գերագույն խորհրդի նախագահին շնորհեց Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի գեներալ-մայորի կոչում, արդեն 2004թ. Եվրախորհրդի քարտուղար Վալտեր Շվիմերը ոչ մի խնդիր չտեսավ, երբ Աջարիայում իր աչքերի առջև ցրում էին հանրահավաքը:

բակալություններն ու բռնաճնշումները, այդ թվում և այն բանի համար, որ ավելի վաղ ժողովրդին տրված պոպուլիստական խոստումների կատարումն անհնար էր, իսկ մեղավորներին գտնել էր պետք մինչև ձմեռ: 2004թ. հունվարի 4-ի ընտրություններում Սահակաշվիլին հավաքեց ձայների գրեթե 97%-ը՝ էլ ավելի համոզիչ հաղթանակ տանելով, քան իր նախորդները: Այս փաստը կանխորոշեց հետագա տարիներին շատ գործընթացների զարգացումը Վրաստանում:

Այն, ինչ հետո էր կատարվում, կարելի է անվանել պետության ստեղծման գործընթաց: Սահակաշվիլին գնաց իշխանական ուղղահայացի ստեղծման ճանապարհով՝ կառավարման ավտորիտար, երբեմն էլ՝ բռնապետական ոճով: Նրա հենարանը դարձան ուժային նախարարությունները, և ելնելով այն բանից, որ Սահակաշվիլին վստահում էր շատ քիչ թվով մարդկանց, այդ ժամանակվանից ի վեր և առայսօր տեղի է ունենում նախարարների փոխատեղում տարբեր պաշտոններում, յուրաքանչյուր նախարար մեկ պաշտոնում մնում է մոտավորապես միջինը կեսից մեկ տարի: Այսպես, հաճախ կրթության նախարարը դառնում է պաշտպանության նախարար, իսկ պաշտպանության նախարարին հանձնարարվում է գինու սպառման շուկաներ գտնել: Անփոփոխ է մնում միայն ներքին գործերի նախարար Վանո Մերաբիշվիլին[1]:

Աղյուսակ 1

Վրաստանի տնտեսությունը 2003-2008թթ.

	Տնտեսական աճ	Վրաստանի բյուջեի եկամուտները, մլն $	Պաշտպանության ծախսերը, մլն $	Սոց. պաշտպ. ծախսերը, մլն $
2003	+11.1%	617,3	28,6	160
2004	+5.9%	1189,1	83,5	250,6
2005	+9.6%	1799,5	218,8	345,4
2006	+9.4%	2488,8	405,7	037,7
2007	+12.3%	3548,5	884	376,5
2008	+2.3%		1052,4	

Աղբյուրները: *Georgian Statistical Yearbook, 2008, p. 247;*
Cisstat.org, Грузия cisstat.org/rus/georg.html ;
IMF World Economic Outlook imf.org/external/pubs/ft/weo/2008/02/weodata/index.aspx

2004թ. մայիսին Սահակաշվիլին թավշյա հեղափոխություն սարքեց Աջարիայում և «գահընկեց արեց» Ասլան Աբաշիձեին. զգալիորեն նվազեցվեցին կոռուպցիան և կաշառակերությունը տեղերում, վերացվեց ՊԱՏ ծառայությունը, ինչը լուծեց բյուջեն լցնելու խնդիրը: Հուժկու տեմպերով ավելանում էին ուժային բլոկի՝ ՆԳՆ և բանակի ծախսերը, ընդ որում՝ բանակին տրվող հատկացումները, որոնք մինչև Սահակաշվիլին կազմում էին տարեկան մոտ $30 մլն, ավելացան գրեթե 30 անգամ և 2007թ. հասան $1 մլրդ-ի: Մոտ երկու

[1] Նշենք, որ 2001թ. ներքին գործերի նախարար Կախի Թարգմաձեի, որը Շևարդնաձեի աջ ձեռքն ու հենարանն էր, պաշտոնանկությունն էլ անօգնական դարձրեց ռեժիմը 2003թ. նոյեմբերյան հեղափոխությունից առաջ:

անգամ քիչ զումար էին կազմում ներքին և պետանվտանգության ապահովման ծախսերը: Ընդ որում՝ սոցիալական կարիքների, կրթության և առողջապահության համար ծախսերն ավելի դանդաղ էին աճում[1]:

Վրաստանի զինված ուժերի անձնակազմի թվաքանակն ավելացավ մոտ 3 անգամ և հասավ 36.5 հազարի: Սահակաշվիլին անողորմ պատերազմ հայտարարեց քրեական տարրերին ու տեղերում հարցերն ինքնուրույն լուծելուն: Էլեկտրաէներգիայի հետ կապված հարցերը բավական հեշտ լուծվեցին. պետք է ասել, որ Վրաստանն ուներ դրանք լուծելու պոտենցիալը, իսկ լույսի և ջերմության բացակայության հիմնական պատճառներից էր այն, որ էլեկտրաէներգիան վերավաճառվում էր Թուրքիային: Քայլեր արվեցին իրավական պետության ստեղծման ուղղությամբ, սակայն այդ ամենն արվում էր ոչ ժողովրդավարական մեթոդներով:

Կառավարության հայտարարած պաշտոնական հայրենադարձությունը, ինչպես նաև առճակատումը Ռուսաստանի հետ 2005-06թթ. և Ռուսաստանից վրաց քաղաքացիների արտաքսումը տվեցին իրենց պտուղները. 2005թ. Վրաստան եկավ 76.3 հազար մարդ ավելի, քան հեռացավ: Չնայած Վրաստանի իշխանությունների պաշտոնական հռետորականությանը, վրացական արտադրության մի շարք ապրանքների վրա Ռուսաստանի հայտարարած էմբարգոն խիստ ազդեցություն ունեցավ Վրաստանի տնտեսության վրա. խնդիրը մասամբ լուծվեց համընդհանուր սեփականաշնորհմամբ և տնտեսական ռեֆորմներով, իսկ դա իրականացվեց էկոնոմիկայի նախարար Կախի Բենդուկիձեի կողմից, որն այն ժամանակ գործադրում էր «կվաճառենք ամեն ինչ, բացի մեր խղճից» կարգախոսով: Հետագայում ստեղծվեց պաշտոն հատուկ նրա համար՝ Տնտեսական ռեֆորմների կոորդինացման պետական նախարար, որտեղ էլ շարունակում էր իրականացնել երբեմն արմատական իր ռեֆորմները: Սեփականաշնորհման և մի շարք այլ միջոցառումների, ինչպես նաև վրացի քաղաքացիների զգալի թվաքանակի հայրենադարձության արդյունքում Վրաստանի կառավարությունն իր տրամադրության տակ ունեցավ զգալի նյութական միջոցներ, որոնք էլ մի քանի տարով խթանեցին երկրի զարգացումը:

Բացի այդ, և սա նույնպես հետաքրքիր է, Սահակաշվիլու իշխանությունը զբաղվեց ազատ ԶԼՄ սահմանափակմամբ: Այսպես, 2005թ. փակվեց «Սամշոբլո» հրատարակչությունը, որի շենքում գտնվում էին ընդդիմադիր մի շարք թերթերի խմբագրություններ և հեռուսաբնկերություններ: Պատրվակ հանդիսացավ շենքի սեփականաշնորհումն ու վերավաճառքը արտասահմանցի ներդրողին, սակայն նույնիսկ հիմա (2010թ.) շենքը քաղաքի կենտրոնում դատարկ

[1] Այսպես, պաշտպանության, ՆԳՆ և պետանվտանգության ընդհանուր ծախսերը 2003թ. կազմեցին բյուջեի ընդհանուր ծախսերի 10,9%-ը, 2007-ին դրանք կազմեցին բոլոր ծախսերի 36.6%-ը:

է: Փակվեցին մի շարք հեռուստաընկերություններ, մնացածների նկատմամբ ճնշումներ գործադրվեցին (տե՛ս *Աղյուսակ 2*):

Աղյուսակ 2

Քաղաքական վեճեր պարունակող վերլուծական հաղորդումների թվի դինամիկան 2003-2008թթ.

ՀՏ	Հոկտեմբեր, 2003	Հոկտեմբեր, 2006	Մարտ, 2008
Ռուսթավի-2	1 ամենօրյա	1 ամենշաբաթյա	2 ամենշաբաթյա
Իմեդի (Հույս)	1 ամենօրյա / 1 ամենշաբաթյա	2 ամենշաբաթյա	Ալիքը փակված է
Վրաստանի առաջին հանրային հեռուստատեսություն	1 ամենօրյա / 1 ամենշաբաթյա	Չկա	1 ամենօրյա
Մզե (Արև)	1 ամենօրյա	Չկա	Չկա
9 Արխի (9 ալիք)	1 ամենօրյա	Ալիքը փակված է	Ալիքը փակված է
Իբերիա	1 ամենօրյա	Ալիքը փակված է	Ալիքը փակված է
Կավկասիա	1 ամենօրյա	1 ամենօրյա	1 ամենօրյա
202	Չկա	1 ամենօրյա/ 1 ամենշաբաթյա	Ալիքը փակված է

Դրությունը 2003 և 2006թթ. - *"საქართველოს პოლიტიკური ლანდშაფტი", գրքից, էջ. 212 («Վրաստանի քաղաքական լանդշաֆտը», վրացերեն):*

Ի հավելումն ասվածի՝ Սահակաշվիլու իշխանությունը կարելի է նկարագրել հետևյալ բնութագրերով.

- Վրաստանի ներկայիս իշխանությունը այն «ամուր ձեռքն» է, որին երկար սպասում էր Վրաստանի բնակչությունը քաոսի ժամանակաշրջանում, բայց հիասթափվեց մի քանի տարի անց:
- Հեղափոխության հետևանք դարձավ ժողովրդավարական հռետորականության բարձրացումը և ժողովրդավարության մակարդակի իջեցումը, այն մակարդակի, որը թույլ տվեց, որ հեղափոխությունն իրականանա[1]:
- Սահակաշվիլու ընդգծված *մեսիականությունը*. Վրաստանի նախագահն իր նախաձեռնությունների մեծամասնությունը բնութագրում է որպես «առաջինը Վրաստանի պատմության մեջ», «առաջինը Եվրոպայում» (նույնիսկ աշխարհում). այստեղ կարելի է ավելացնել նաև մշտական զուգահեռների անցկացումը Վրաստանի պատմական արքաների, առաջին հերթին՝ Դավիթ Շինարարի հետ: Սա որոշ վերլուծաբանների

[1] Տե՛ս *Искандарян А.,* Феномен цветных революций, Кавказ-2004. Ежегодник Кавказского института СМИ, с. 13.

հիմք տվեց կարծելու, որ Սահակաշվիլու նպատակներից մեկը «Վրաստանի պատմության մեջ հետք թողնելն է»:

- Սահակաշվիլին խարիզմատիկ առաջնորդ է: Նրան բնորոշ են հուզականությունը, ագրեսիան և նպատակներին հասնելու հաստատակամությունը. դա շատ լավ ցուցադրվեց 2001-2003թթ. իրադարձությունների ժամանակ, երբ նա չհամաձայնեց երկրորդական դերին և կարողացավ հաղթել ավելի ուժեղ մրցակիցներին՝ հանձինս իշխանական կուսակցության, լեյբորիստների, Ժվանիայի և Բուրջանաձեի, Աբաշիձեի «Վերածնունդ» կուսակցության:
- Սահակաշվիլին երկրի արևմտականացման արմատական ուղղություն վերցրեց և կոշտ ռեֆորմներ է իրականացնում. դեպի Արևմուտք կողմնորոշումը զուգակցվում է հակառուսական հռետորականությամբ: Արդյունքում՝ այս ամենը հանգեցնում է այն բանին, որ նրան դիմակայում է բնակչության զգալի մասը, որն իրեն խաբված և մերժված է համարում:

Սահակաշվիլին շեշտը դնում էր միստիկայի և սիմվոլիզմի, երբեմն էլ՝ «թվերի մոգության» վրա՝ իր բոլոր մասշտաբային միջոցառումները կապելով կրոնական տոների և հիշարժան այլ ամսաթվերի հետ, ինչպես նաև ակնարկելով, որ դա կանխորոշված է ճակատագրով: Սակայն հետագայում այս մեթոդը նրանից կփոխառի ընդդիմությունը, և նա կհրաժարվի դրանից:

3. Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցը

Ինչպես նկատեցինք, մի շատ կարևոր հարց մնաց չքննարկված. դա սեցեսիոն հանրապետությունների՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցն է, որոնք իրենց անկախությունն ստացել են 1991-1994թթ. պատերազմների արդյունքում: Վրացիները շատ զգացմունքային ժողովուրդ են. նրանց ազգային առասպելում բավական նշանակալի մաս է զբաղեցնում վրացի մարտիկի կերպարը: Անջատված շրջանների հարցն առաջին հերթին Վրաստանի համար մնում էր զգացմունքային հարթությունում. դա վիրավորված արժանապատվության հարց էր:

Ըստ պաշտոնական թվերի՝ Աբխազիայից փախստական վրացիների թիվը կազմում է 300-500 հազար: Իրականում այդ թիվը բավական ուռճացված է: 1989թ. Աբխազիայի ԻԽՍՀ-ում ապրում էր 239 հազար վրացի. 2003թ. մարդահամարը ցույց տվեց Աբխազիայում ապրող մոտ 45 հազար վրացի (այդ թվում իրենց մեգրել նշածները)[1]: Հաշվի առնելով, որ այդ ժամանակաշրջանում բնական աճը Վրաստանում գրեթե զրոյի էր հավասար, իսկ փախստականների մեծ

[1] Աբխազիայի բնակչության 1897-2003թթ. մարդահամարների արդյունքները, http://www.ethno-kavkaz.narod.ru/rnabkhazia.html

մասը հեռացել էր Ռուսաստան, նրանց ընդհանուր թիվը կարելի է գնահատել 200±5 հազար, որոնց կեսից ոչ ավելին է այժմ ապրում Վրաստանում:

Նախընտրական շրջանում Սահակաշվիլու տված պոպուլիստական խոստումները, մեսիականության նրա գաղափարը, իսկ հետագայում նաև լեգիտիմության սուր անբավարարությունը նրան ակտիվ քայլերի են մղում Աբխազիայի և Հարավային Օսիայի նկատմամբ: Դրանցից հիմնականներն են. տեղային ռազմական դիմակայությունը Հարավային Օսիայի հետ կրակոցներում (2004), մաքսային շուկայի փակումը Էրգնեթում, որի հաշվին էր ապրում Հարավային Օսիայի բնակչության մեծ մասը (2005), Կոդորի կիրճի վերահսկողության սահմանումը, դրա վերանվանումը Վերին Աբխազիա և այնտեղ այլընտրանքային վարչակազմի տեղակայումը (2007), այլընտրանքային կառավարության ստեղծումը Հարավային Օսիայի՝ վրացական կողմից վերահսկվող մասում, Դմիտրի Սանակոևի գլխավորությամբ (2007), «Ալանիա» քարոզչական հեռուստաալիքի թողարկումը (2007) և գագաթնակետը՝ ռազմական հակամարտությունը Հարավային Օսիայի հետ, որն անմիջապես վերաճեց միջպետական հակամարտության Ռուսաստանի հետ, 2008թ. օգոստոսին:

Առանձնացած շրջանների թեման մինչ օրս խիստ ակտուալ է Վրաստանում: Բնակչության մի մասը շարունակում է սպասել, որ դրանք կվերադառնան Վրաստանի կազմ, իսկ մի մասը հաշտվել է դրանց վերջնական կորստի հետ: Եթե մինչև օգոստոսյան պատերազմը առաջինների թիվը զգալիորեն գերազանցում էր երկրորդ խմբին, ապա այսօր կարելի է ենթադրել, որ այդ խմբերը թվով գրեթե հավասար են:

4. Քաղաքական ընդդիմությունը Վրաստանում. ծագումը և արդի վիճակը

2003թ. խորհրդարանական ընտրություններն առավել մրցակցայինն էին Վրաստանի խորհրդարանի պատմության ողջ ընթացքում: 7%-ոց ընտրաշեմը հաղթահարեց 6 քաղաքական սուբյեկտ: Ոչ կառավարական «Արդար ընտրություններ» կազմակերպության անցկացրած այլընտրանքային հաշվարկը ցույց տվեց փոքր-ինչ այլ արդյունքներ: Դրանցում ընդդիմադիր կուսակցությունների հավաքած տոկոսներն ավելի բարձր էին, քան պաշտոնական արդյունքներում, կառավարության ստացած արդյունքներում դրանք, համապատասխանաբար, ցածր էին: Արդեն նոյեմբերի 25-ին, իր հրաժարականից հետո, Էդ. Շևարդնաձեն խոստովանեց, որ ընտրությունները կեղծված էին: Դրանք չեղյալ հայտարարվեցին, և 2004թ. գարնանը կրկնակի ընտրություն նշանակվեց:

Աղյուսակ 3

2003-2008թթ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները

Ընտրություններ	2.11.2003	28.3.2004	21.5.2008
«Հանուն նոր Վրաստանի»	21.32%		
«Վերածնունդ»	18.84%	3.86%	
«Ազգային շարժում»	18.80%	66.24%	59.18%
«Բուրջանաձե-դեմոկրատներ»	8.79%		
Լեյբորիստական կուսակցություն	12.04%	6.01%	7.44%
«Նոր աջեր»	7.82%	7.56%	
Միացյալ ընդդիմություն			17.73%
Հանրապետական կուսակցություն			3.78%
Քրիստոնեա-դեմոկրատական շարժում			8.66%

2004թ. սկզբին իրավիճակը խիստ փոխվեց: «Վարդերի հեղափոխությունը» չմասնակցած կուսակցությունները մարգինալացվեցին հասարակության աչքում և մեկուսացվեցին պաշտոնական քարոզչության ջանքերի շնորհիվ: Այնուամենայնիվ, նոր իշխանության կառավարման ավտորիտար մեթոդները հանգեցրին նրա հակառակորդների թվաքանակի աճի, և նրա վարկանիշը ազատ անկման մեջ հայտնվեց հենց նախագահական ընտրություններից հետո, երբ Սահակաշվիլին հավաքեց բոլոր ձայների մոտ 97%-ը:

2004թ. ընտրություններին իշխանությունները հավաքեցին 66%, զբաղեցրին խորհրդարանի 235 տեղից 220-ը: Հանրային դժգոհության աճի պայմաններում նման հարաբերակցությունն ամենևին չէր արտացոլում հասարակության մեջ քաղաքական կուսակցությունների ժողովրդականության հարաբերակցությունը: Խորհրդարանն աստիճանաբար սկսեց ընկալվել որպես մի ինչ-որ ոչ լեգիտիմ բան, մանավանդ որ նրա լիազորություններն ուժեղ նախագահի առկայության պայմաններում կրճատվեցին: Նոր իշխանության վարած քաղաքականությունը նորանոր մարգինալ ուրվագծեր էր ստանում, որոնցում հայտնվեցին հասարակության տարբեր շերտերը: Սկզբում դա Թբիլիսիի մտավորականությունն էր, հետո՝ փողոցային առևտրականները, տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները: Սահակաշվիլու փոխաբերությունը գնացքի մասին, որն սկսել է շարժումը, իսկ նրանք, ովքեր գնացքում չեն, մնում են դրսում, փաստորեն կարելի է մեկնաբանել «ով մեզ հետ չէ, մեր դեմ է»: Եվ արդյունքում այս քաղաքականությունը շրջվեց նրա դեմ:

Իրադարձությունների հետհեղափոխական զարգացման հետևանքով թուլացած ուժերը սկսեցին ակտիվանալ կառավարությանը քննադատելու ուղղությամբ, իսկ իշխանական թևն աստիճանաբար սկսեց մասնատվել. նրանից հեռացան որոշ հայտնի անձինք և խմբեր, ինչպես, օրինակ, Հանրապետական կուսակցությունը: Քաղաքական ակտիվության կենտրոնը խորհրդարանից տեղափոխվում էր սկզբում դեպի հեռուստաալիքներ, այնուհետև՝ փողոց: Հանրային դժգոհությունը գագաթնակետին հասավ 2007թ.: Սեպտեմբերին տեղի ունեցավ փորձնական հանրահավաք, իսկ նոյեմբերին սկսվեց բողոքի ակցիան: Ներկաների թվաքանակից դատելով՝ այն ամենամեծն էր հետխորհրդային Վրաստանի ողջ պատմության մեջ: Սակայն, քանի որ կուսակցությունների ծրագրերը տարբեր էին և անընդհատ փոխվում էին հանրահավաքի ընթացքում, ինչպես նաև բնական պատճառների հետևանքով, հավաքվածների թիվն արագ նվազում էր, և նոյեմբերի 7-ին հանրահավաքը ցրվեց, արդյունքը դարձան արտակարգ իրավիճակ մտցնելը և ընդդիմադիր ալիքների հեռարձակումների արգելքը:

Ընդդիմությունը Սահակաշվիլուց բազմաթիվ մեթոդներ էր փոխառել, բայց նրա հիմնական տարբերությունները տարիներ առաջվա Սահակաշվիլուց այն էին, որ չկար վճռականություն, միասնական խարիզմատիկ առաջնորդ և գոնե ինչ-որ ռազմավարական պլանավորում: Նրանց միավորել էր բողոքն իշխանության դեմ: Սակայն ընդդիմադիր կուսակցությունների կոալիցիայում համաձայնեցված չէր այն հարցը, թե ինչ պետք է արվի հետագայում: Նախնական որոշումն այն էր, որ պետք է խորհրդարանական հանրապետություն հռչակվի: Ընդդիմությունը հրաժարվեց 2008թ. ստացած մանդատներից և չընդունեց ընտրությունների արդյունքները: 2009թ. ապրիլ-սեպտեմբերին փողոցային ակցիաները շարունակվում էին, որոնք արդյունքում ոչնչով չավարտվեցին:

Լարվածությունը, որն սկսվեց Սահակաշվիլու ընտրությունից հետո, թուլանում է, սակայն դժգոհությունը բավական ուժեղ է մնում: Իհարկե, դժվար է խոսել ճշգրիտ թվերի մասին, բայց կարելի է փորձել որոշ գնահատականներ տալ սոցիալական մի շարք հարցախույզների և վերջին ընտրությունների հիման վրա:

Հարաբերակցությունը տվյալ պահին կարելի է գնահատել հետևյալ կերպ. մայրաքաղաքում՝ կողմնակիցներ – 30, հակառակորդներ – 50%, մյուսները տատանվում են; շրջաններում՝ կողմնակիցներ – 40, հակառակորդներ – 15%, մնացածները տատանվում են կամ անտարբեր են ներքաղաքական պայքարի հանդեպ:

Ինչ վերաբերում է արտաքին ուժերին, ապա Ռուսաստանը մինչև վերջերս աջակցում էր Իգոր Գիորգաձեին, որը Վրաստանի պետանվտանգության

նախարարն էր, բայց մեղադրվել էր Էդ.Շևարդնաձեի դեմ մահափորձի մեջ և Մոսկվա էր փախել դեռ 1990-ականներին: Վրաստանում նա վերջնականապես մարգինալացվեց 2005-06թթ., սակայն այլընտրանքային թեկնածու Մոսկվան գտնել չկարողացավ: Մինչև վերջին ժամանակներս Ռուսաստանն աջակցում էր միայն Գիորգաձեին, հիմա Ռուսաստանի աջակցությունը վայելող վրաց ընդդիմադիրների շրջանակն ընդլայնվում է: Ինչ վերաբերում է Վաշինգտոնին, ապա այնտեղ գերադասում են համագործակցել միաժամանակ մի քանի խմբի հետ՝ խուսափելու համար խնդրահարույց իրավիճակներից:

Եթե փորձենք ապագայի իրավիճակ մոդելավորել, ապա որևէ դինամիկա չի ակնկալվում, քանի որ Սահակաշվիլու անհաջողություններն ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտաքին քաղաքականությունում չեն դադարել: Ընդ որում, ընդդիմությունն ընդհանուր առմամբ անընդունակ գտնվեց Սահակաշվիլուն պաշտոնանկ անելու կամ մի որևէ լուրջ նպատակի շուրջ միավորվելու հարցում: Հավանաբար, երկրի քաղաքականությունից հիասթափված մարդկանց թիվը ժամանակի հետ ավելի ու ավելի կմեծանա:

Ներքաղաքական պայքարում հիմնական փաստարկներ են մնում «ազգային դավաճանությունը» և «համագործակցությունը Ռուսաստանի հետ», ընդ որում՝ առավել հաճախ դրանք կիրառվում են կառավարական շրջանակների կողմից:

5.Կրոնը Վրաստանի քաղաքականությունում

Հետխորհրդային Վրաստանի առանձնահատկություններից մեկը բնակչության առավել արտահայտված կրոնականությունն է և ուղղափառ եկեղեցու փաստացի մասնակցությունը քաղաքականությանը: Վրաստանի Սահմանադրությունը կրոնի ազատություն հռչակեց: Սակայն Սահմանադրության 9-րդ հոդվածում «պետությունը ճանաչում է Վրաց Ուղղափառ եկեղեցու բացառիկ դերը Վրաստանի պատմության մեջ և միևնույն ժամանակ հռչակում է... եկեղեցու անկախությունը պետությունից»: 2001թ. հոդվածին ավելացվել է երկրորդ կետ, որի համաձայն պետության և եկեղեցու փոխհարաբերությունները սահմանվում են Սահմանադրական պայմանագրով, որն արժանացել է ոչ միանշանակ գնահատականների[1]:

Վրաստանում կրոնի մասին օրենք դեռ չի ընդունվել, բազմաթիվ հիմնախնդիրներ կան՝ կապված կրոնական փոքրամասնությունների հետ: Առաջին հերթին խտրականության են ենթարկվում «Եհովայի վկաներ» աղանդը և Վրաստանում ավանդական՝ ՀԱԵ-ն, կաթոլիկ եկեղեցին և այլն: Ընդ որում,

[1] Религия в Грузии: 21 век. Ивлиан Хаиндрава. Религия и политика на Кавказе. Материалы международной конференции, CMI, Ереван, стр. 59, 62-63.

առայսօր կրոնական ոչ մի կազմակերպություն չի կարող գրանցել կառավարականից տարբեր իր կարգավիճակը, ինչը, բնականաբար, ձեռնտու չէ Հայ Առաքելական, կաթոլիկ և մյուս եկեղեցիներին:

2002թ. մարդահամարի համաձայն, վրացիների և ուղղափառների բաժինը գրեթե համընկնում է՝ 84%[1]: Սակայն ուղղափառ են նաև ռուսները, հայերի և մյուս ազգային փոքրամասնությունների մի մասը, վրացիների մի մասն էլ մահմեդական է[2]:

Վրացական եկեղեցին այսօր պետության մրցակիցն է ազգային նախագծերի հարցում և փորձում է բացարձակ ազդեցություն հաստատել: Նման պայմաններում բնական է ղեկավարության շահերի բախումը եկեղեցու՝ որպես կենտրոնացված կառույցի, հետ: Ընդ որում, երկու կողմն էլ փորձում է թաքցնել և հարթել այս կոնֆլիկտը: Եկեղեցին միակ համընդգրկուն կառույցն է Վրաստանում, որ համախմբող դեր է ունեցել խորհրդային շրջանում, և հավակնում է բարոյական բարձր հեղինակության, նրա դերն իսկապես բարձր է ու փաստորեն ավելի բարձր է, քան պետական համանման կառույցներինը:

Վրաց եկեղեցին, ըստ էության, այսօր զբաղված է ազգի համախմբման հարցով: Ասվածի բազմաթիվ հավաստումներ կարելի է գտնել, բայց բավական կլինի և մեկը. 2010թ. հունվարի 7-ին պատրիարքը, շնորհավորելով ժողովրդին Սուրբ ծննդյան կապակցությամբ, ասել է հետևյալը. «Կան ուժեր, որոնք դրդում են սակավ մտածող մարդկանց այն բանին, որ Աստվածաշունչը կամ այլ գրքեր թարգմանվեն մեգրելերեն, սվաներեն ու լազերեն՝ հող նախապատրաստելու համար, որպեսզի մոտ ապագայում վրաց լեզվի այդ ճյուղավորումներն արդեն առանձին լեզուներ հայտարարեն: ...Աշխարհում քարտեզներ և դասակարգումներ են տարածվում, թե Վրաստանն իբր աջարների, լազերի, սվանների, մեգրելների և այլոց արհեստական միավորումն է, իբր նրանցից յուրաքանչյուրն իր լեզուն ու մշակույթն ունի: Սրանով նրանք ցանկանում են մեր ազգը ներկայացնել որպես տարբեր ազգերի միավորում: Այստեղից մինչև պետության անկումը մեկ քայլ է»[3]: Եկեղեցական եզրաբանության մեջ սա ֆիլետիզմ է, բայց, ինչպես ասացինք, այսօր վրաց եկեղեցին հիմնական խնդիր է համարում հենց ազգի համախմբումը:

2001թ. պետական ինստիտուտների նկատմամբ վստահության մակարդակը չափազանց ցածր էր. ոստիկանությանը վստահում էր հարցվածների մոտ 4%-ը, իսկ եկեղեցուն՝ 63%-ը: Եկեղեցուց հետո երկրորդ տեղում էր օմբուդսմենի ինստիտուտը: Նրան վստահում էր 14%-ը[4]: Այդ ժամանակվանից ի

[1] Տե՛ս http://statistics.ge/_files/english/census/2002/Religious%20beliefs.pdf

[2] Գերազանցապես լազերը և աջարներն են:

[3] http://www.apsny.ge/2010/soc/1262901255.php

[4] «Ձեր իրավունքները»: Վրաստանի ժողովրդական պաշտպանի պարբերական հրատարակություն, №1, 2001 (վրացերեն):

վեր աճել է ինչպես պետական կառույցների, այնպես էլ եկեղեցու հեղինակությունը: Վրաց եկեղեցու դրության հետ կապված դինամիկան լավ պատկերացնելու համար հարկավոր է նշել, որ 1978թ. Թբիլիսիի պետական համալսարանի հարցման ենթարկված ուսանողների ընդամենը 1%-ն էր իրեն հավատացյալ համարել. 2000թ. այդպիսիների թիվն արդեն 89% էր[1]: Հասկանալի է, որ 1978թ. բոլոր հավատացյալները չէ, որ կհամարձակվեին հայտարարել այդ մասին, և 2000թ. էլ բոլոր աթեիստները չէ, որ կհամարձակվեին խոստովանել դա, բայց դինամիկան ակնհայտ է: Մեկ այլ հարցախույզի տվյալներով՝ բնակչության 65%-ն այն կարծիքին է, որ «հավատը և կրոնական արժեքները պետք է որոշեն հասարակության և պետության կյանքի բոլոր կողմերը»: Ընդ որում, արմատականության կողմնակիցների թվում հայտնվեց ուսանողների մոտ 70%-ը:

Կարևոր է նշել, որ կաթողիկոս-պատրիարք Իլյան պաշտոնավարում է արդեն 32 տարի[2]: Նրա գահակալության և ծննդյան օրերն այժմ նշում են որպես ազգային տոներ: Այսպիսով, արդի ուղղափառ եկեղեցին Վրաստանում և Իլյա Երկրորդի անունը հոմանիշներ են ներկայիս Վրաստանում: Նրան են դիմում Վրաստանի, առանց բացառության, բոլոր քաղաքական ուժերը, հատկապես ընդդիմությունը, որը հույս ուներ հանձին նրա նեցուկ գտնել Սահակաշվիլու դեմ պայքարում:

Այսօր Վրաց Ուղղափառ եկեղեցին (ՎՈՒԵ) փորձում է ինքնուրույն քաղաքականություն վարել, այդ թվում՝ *արտաքին*: ՎՈՒԵ-ն՝ Իլյա Երկրորդի գլխավորությամբ, դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Ռուսաստանի Ուղղափառ եկեղեցու (ՌՈՒԵ) հետ և որոշ արդյունքների հասել[3]: Այսպես, ՌՈՒԵ-ն մինչ օրս վրացական եկեղեցուց անկախ չի ճանաչել Աբխազիայի և Հարավային Օսիայի ինքնահռչակ եկեղեցիները և ՎՈՒԵ-ն համարում է իր գլխավոր դաշնակիցը Ուկրաինայի «հերձվածողների» դեմ պայքարում[4]:

Եկեղեցու և պետության միջև վերջին ժամանակներս տեղի ունեցած միջադեպերից կարելի է առանձնացնել Բաթումի շրջակայքում, լեռան վրա, ճիշտ է՝ առանց թույլտվության կառուցվող եկեղեցու քանդումը: Հետո արդեն սույն գործողությունը վերագրվեց ցածրաստիճան մի պաշտոնյայի, որը երբեք չէր համարձակվի նման քայլի դիմել, եթե ցուցում չունենար վերևից: Արդյունքում՝ հանրությունն այնքան զայրացած էր, որ եկեղեցին վերականգնվեց, ընդ որում՝ պետության հաշվին:

Արդեն 2009թ. վերջին Թեա Թութբերիձեն՝ «Ազատության ինստիտուտի»

[1] *Papuashvili Nugzar,* World religions in Georgia, Tbilisi, Liberty Institute, 2002.

[2] Գահակալությունը տեղի է ունեցել 1977թ. դեկտեմբերի 25-ին:

[3] Патриарх Грузии: Абхазия и Осетия вернутся в состав Грузии. По итогам встречи с патриархом России Кириллом в Баку http://ru.trend.az/news/politics/foreign/1611936.html

[4] http://www.stavropolye.tv/russian/view/12702

ղեկավարներից մեկը, մի քանի տեսահոլովակ պատրաստեց և դրանք զետեղեց *Facebook* ցանցում, ինչպես նաև հարցազրույց տվեց, որում «մերկացրեց» պատրիարքին ռուսամետ և հակապետական գործունեության մեջ: Սա մեծ աղմուկ բարձրացրեց վրաց հասարակությունում[1]. հակամարտությունն սկսեց թափ հավաքել, քանի որ «Ազատության ինստիտուտն» այն հիմնական կառույցներից էր, որն իշխանության բերեց Սահակաշվիլուն, և համարվում է արդի վրացական իշխանության գաղափարախոսական հենքը:

Որոշ ամփոփումներ

Վերջին հարյուրամյակում Վրաստանը ձգտում է միասնականացման, ինչին մասամբ հասել է, թեև առաջ են եկել հակամարտություններ Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ: Միջանկյալ լարվածությունը ազգամիջյան հարաբերություններում պահպանվում է:

Վրաստանում ակնհայտ արտահայտվածություն ունի վախը տարածքների կորստի և երկրի հետագա անկման նկատմամբ: Հակառուսական հռետորականությունը մնում է հիմնական քաղաքական փաստարկներից մեկը բոլոր քննարկումներում, թեև ընդդիմությունը փորձում է ինչ-որ կերպ թուլացնել լարվածությունը ռուս-վրացական հարաբերություններում:

Սահակաշվիլու և նրա իշխանության վարկանիշը մնում է 40%-ի սահմաններում և նրան գործողությունների որոշ ազատության հնարավորություն է տալիս:

Որոշ ուժեր կանոնավորապես հայրենիքի դավաճանության մեղադրանքներ են հնչեցնում Բաթում-Գյումրի ավտոճանապարհի շինարարության ու Կազբեկ-Վերին Լարս անցուղու բացման վերաբերյալ հայկական պահանջներին աջակցելու հետ կապված: Ընդ որում, ավելի հավանական է, որ Սահակաշվիլին իշխանության ղեկին կմնա մինչև երկրորդ ժամկետի ավարտը և հաջորդին կնշանակի իր թիմից:

Արտաքին քաղաքականության ազդեցությունը ներքինի վրա էական է, բայց, այնուամենայնիվ, վճռական չէ, և Ռուսաստանից կրած պարտության արդյունքում ներքին հակամարտությունը գրեթե թուլացել է ու չի ուժեղացել:

Քաղաքական ընդդիմության դերը կմնա կայուն առաջիկա ամիսների ընթացքում, այնինչ Վրաց Ուղղափառ եկեղեցու դերը կարող է մեծանալ: Եվ այս հանգամանքը կդժվարացնի ինչպես Հայաստանի հետ Վրաստանի միջպետական շփումները, այնպես էլ զիջումները Թբիլիսիի հայ համայնքին:

Հունվար, 2010թ.

[1] http://www.inosmi.ru/sngbaltia/20091027/156438658.html
http://evrazia.org/article/1143

ВНУТРЕННЯЯ ПОЛИТИКА СОВРЕМЕННОЙ ГРУЗИИ

Грант Микаелян

Резюме

После обретения независимости в 1991г. Грузия оказалась в хаосе. Экономика страны полностью развалилась вследствие ряда серьезнейших проблем: завершившаяся поражением война с Абхазией и Южной Осетией, гражданская война, распад бывшей управленческой системы, плюс неправильная политика властей того времени. Между тем, Грузия стремится к объединению, чего отчасти добилась, несмотря на то, что потеряла Абхазию и Южную Осетию.

В Грузии ярко выражена боязнь потери территорий и дальнейшего развала страны. Антироссийская риторика остается одним из основных политических аргументов во всех обсуждениях, хотя оппозиция пытается каким-то образом ослабить напряженность в российско-грузинских отношениях. Роль политической оппозиции стабильна, в то время как роль Грузинской православной церкви может возрасти.

Статья посвящена всестороннему изучению социально-экономических, военных, религиозных вопросов, внутренней и внешней политике Грузии.

ԱՆՕԴԱՉՈՒ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՄԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ

Արծրուն Հովհաննիսյան

Հոդվածում ներկայացվել և վերլուծվել են անօդաչու թռչող սարքերի արդյունավետ կիրառման օրինակները վերջին տասնամյակներում տեղի ունեցած լոկալ պատերազմներում: Ցույց է տրվել, որ նման սարքերի օգտագործումը հայկական ԶՈՒ-ում խիստ ակտուալ է և անհրաժեշտ:

Վերջին մի քանի տասնամյակում թռչող սարքերի (ԹՍ) կիրառության մեջ անօդաչու թռչող սարքերի (ԱԹՍ) դերն անընդհատ մեծանում է: Ժամանակակից ԱԹՍ-ներն ունեն տարատեսակ կառուցվածք, դրանցից ամենահզորներն ընդունակ են օդում՝ մոտ 20 կմ բարձրության վրա, մնալ ավելի քան 40 ժամ [1, c. 30–33]: ԱԹՍ-ները հեռակառավարմամբ և ծրագրով ինքնուրույն կատարում են բազմազան մարտական խնդիրներ [2, c. 6-8, 10-13]: Համաշխարհային շուկայում նման սարքերի պահանջարկը 2004թ. կազմել է $6,87 մլրդ, այն դեպքում, երբ վեց տարի առաջ այն հազիվ էր անցնում $2 մլրդ-ն: Միայն ՆԱՏՕ երկրներում կիրառվում է մոտ 60 հազար ԱԹՍ, որը կազմում է վերջին 15 տարում աշխարհում արտադրված նման սարքերի մոտ 80%-ը [3, c. 9]:

Ներկայումս զարգացած պետությունների ԶՈՒ կազմում Ռազմաօդային ուժերը (ՌՕՈՒ) ավելի զգայուն են արդի գիտատեխնիկական զարգացումների նկատմամբ: ՌՕՈՒ զարգացման համար նման պետություններում հատկացված միջոցները զգալիորեն գերազանցում են այլ զորատեսակների զարգացմանը հատկացված միջոցներին:

Առաջին համաշխարհային պատերազմից (1914-1918թթ.) սկսած՝ զինված հակամարտությունների ժամանակ ավիացիայի դերն ավելի է կարևորվում: Այսօր այդ դերն ստանձնել են ընդհանուր ԹՍ-ները կամ օդային հարձակման միջոցները (ՕՀՄ), որոնց մի մասն էլ կազմում է ավիացիան: Մենք ԹՍ-ներն ընդհանրացնում ենք ՕՀՄ-ների հետ այն պատճառով, որ դրանց կիրառության պատմությունն ապացուցեց, որ գրեթե չկա ԹՍ, որը հնարավոր չլինի կիրառել որպես կրակային կամ այլ հարված հասցնող ՕՀՄ[1]:

[1] Տարբեր ժամանակներում ստեղծված ամենամեծ և անհարմար դիրիժաբլները, բեռնատար, մարդատար ինքնաթիռները, տիեզերական կրող հրթիռներն անգամ՝ շատ չնչին տեխնիկական ձևափոխությունների արդյունքում, վերածվում էին հարվածային միջոցների, ռմբակոծիչի, հականավային ինքնաթիռի և այլն: Նշվածի լավագույն ապացույցն են գերմանական Ցեպպելին դիրիժաբլները, խորհրդային «Ռ-7» բալիստիկ հրթիռը, «Ալմազ» տիեզերակայանը, գերմանական «ՖՎ-200», ամերիկյան «Ց-130», «Բոինգ-747» և այլ ինքնաթիռները, չհաշված հարյուրավոր ուսումնական ԹՍ-ները, որոնք ներգրավվել են ամենատարբեր մարտական խնդիրների կատարման համար:

Հարկավոր է ճիշտ գնահատել ԹՍ-ների և ՕՀՄ-ների աճող դերն ու նշանակությունն ապագայի պատերազմներում, որոնք մարտավարական և ռազմատեխնիկական կատարելագործումների հետևանքով կվերածվեն գերճշգրիտ խոցման միջոցների պատերազմների: 20-րդ դարում ստեղծվեցին աննախադեպ տեսակների զենքեր, սակայն վերջին տասնամյակին ոչ մի զինատեսակ այդքան արագ չի զարգանում, որքան գերճշգրիտ զենքերը: Դրանց զարգացմանը հատկապես նպաստում են տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների զարգացումն ու ներդրումը ռազմական ոլորտում [4, c. 11-12]: Միաժամանակ, գերճշգրիտ զենքերը, կրճատելով խոցման ժամանակը և ծախսերը, բարձրացնում են արդյունավետությունը[1]:

Երկու-երեք տասնամյակի զինված ընդհարումների ընթացքում ՕՀՄ-ներով կրակային խոցման գործում դրանց կիրառության տեսակարար կշիռը 2-4%-ից աճեց մինչև 70%-ի [5, c. 68]: Մասնավորապես, 2003թ. Իրաքյան պատերազմում կիրառել են ավելի քան 12.000 գերճշգրիտ ավիացիոն սպառազինություն, և այն կազմել է ընդհանուր օգտագործվածների 70%-ը [6, c. 58-61]: Երկու Իրաքյան պատերազմների (1991 և 2003թթ.) փորձը ցույց է տվել, որ ավիացիան, կատարելով մոտավորապես նույն քանակության մարտական թռիչքներ (մոտավորապես 42.000), երկրորդ անգամ գերճշգրիտ սպառազինության շնորհիվ 4-5 անգամ ավելի շատ նշանակետեր է խոցել, համապատասխանաբար՝ 4500 և 20.000 [7, c. 50]: Նշենք, որ երկրորդ պատերազմն ավելի կարճ է տևել, ինչը նշանակում է, որ աճել են ոչ միայն գերճշգրիտ սպառազինության կիրառման դեպքերը, այլ նաև ՕՀՄ-ների կիրառման խտությունը: Ժամանակակից գերճշգրիտ ռումբերի և հրթիռների արդյունավետությունը շատ բարձր է [8, c. 106-108]: Գերճշգրիտ զինատեսակներն իրենք հիմնականում հանդիսանում են ԹՍ-ներ կամ կազմում են տարատեսակ ԹՍ-ների ու ՕՀՄ-ների բաղկացուցիչ մասնիկը: ԹՍ-ների դերի մեծացման ֆոնին հետաքրքրական է ներկայացնել զարգացած երկրների ԶՈւ-ում ՌՕՈւ տեսակարար կշիռը: Ըստ 2008թ. տվյալների՝ Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իսրայելի և Ֆրանսիայի ԶՈւ-ում այն անցնում է 20%-ից, Ռուսաստանի, Չինաստանի և Հնդկաստանի ԶՈւ-ում 20% չի կազմում: Միայն ԱՄՆ ՌՕՈւ-ն է կազմում ԶՈւ 32%-ը[2]:

Ներկայումս ՌՕՈւ սպառազինությունը բազմատեսակ սարքերն ու միջոցներն են, որոնք կլիմայական ցանկացած պայմաններում և օրվա բոլոր ժամերին, առանձին կամ այլ զորատեսակների հետ սերտ համագործակցությամբ, բարձր հուսալիությամբ կարող են վարել մարտական գործողություններ: Ժամանակակից ՌՕՈւ ունենալու համար հարկավոր է, որ տվյալ պետու-

[1] Տե՛ս militera.lib.ru/science/tactic/index.html

[2] Վերլուծությունը կատարված է ըստ *Зарубежное Военное Обозрение. 2008, № 7. стр. 76-110* ամսագրի, *The Military Balance 2007-2008, The Middle East Strategic Balance 2007-2008* պարբերականների, *Jane's* և այլ տեղեկատուների:

թյան զինված ուժերը զինված լինեն արդիական ԹՍ-ներով, զենքերով և համալիրներով: Չմոռանանք, որ բարձրակարգ տեխնիկան պետք է շահագործեն և սպասարկեն բարձրակարգ մասնագետներ:

Տեղային պատերազմների վերջին օրինակները ցույց են տվել, որ ցամաքային զորքերի (ՑԶ) համար ռազմական ավիացիայի կողմից կատարվող խնդիրների զգալի մասը լուծում է բանակային ավիացիան՝ գրոհիչները և ուղղաթիռները: Այսինքն՝ երևում է ավիացիայի զարգացման դինամիկան միջոցների փոքրացման և հարվածների ճշտության ուղղությամբ:

Մարտական ԱԹՍ-ներն իրենց գերճշգրիտ հարվածային հնարավորություններով կարող են ապագայում մասնակիորեն փոխարինել գրոհիչներին և ուղղաթիռներին:

ԹՍ-ների բնագավառում, գերճշգրիտ խոցող և այլ միջոցներից զատ, վերջին նվաճումներից են ԱԹՍ-ները, որոնք անվանում են նաև անօդաչու թռչող ապարատներ, անօդաչու ավիացիոն համակարգեր և այլն: ԹՍ-ների այս տեսակին վերջերս ամբողջ աշխարհում մեծ նշանակություն է տրվում: Հատկապես հետաքրքրական է նման սարքերի կիրառությունը մեր տարածաշրջանում:

1. ԱԹՍ-ն՝ որպես ԹՍ առանձին տեսակ

ԹՍ այս տեսակները գրեթե նորություն չեն ներկայացնում: Դրանք մարդկությանը հայտնի են նույն ժամանակներից, երբ ի հայտ եկան սովորական ԹՍ-ները:

ԱԹՍ ասելով կարելի է հասկանալ ԹՍ տարատեսակ, որը սարքի մեջ նստած մարդու կողմից չի ղեկավարվում: Այդպիսին կարող են համարվել տարատեսակ օդապարիկները, հրթիռները, ինքնաթիռները, ռումբերը, արբանյակները, անգամ «Բուրան» տիեզերական մաքոքը: Ներկայումս այս սարքերի համար աշխարհում դեռևս գոյություն չունի հստակ դասակարգում:

Հետախուզական ԱԹՍ-ների առաջին հաջողված դեբյուտը տեղի ունեցավ Վիետնամական պատերազմում: Օդային թիրախի հիման վրա ստեղծված «ԱՔՄ 34 Ֆայերբի» անունը կրող հետախուզական ԱԹՍ-ն փոխեց շատերի պատկերացումն օդային հետախուզության մասին:

Վիետնամական պատերազմի ընթացքում ամերիկյան օդային հետախուզության մոտ 80%-ը կատարել են «Ֆայերբիները» [9, c. 38–41]:

1964-1975թթ. նման սարքերը կատարել են ավելի քան 3400 մարտական թռիչք, և որ ամենակարևորն է, դրանց կորստի հետ մարդկային կորուստ տեղի չի ունեցել [9, c. 38–41]: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակամիջոցում մարտական ավիացիան կորցրել էր մոտ 2500 ինքնաթիռ, որոնց անձնակազմից շատերը գերի էին ընկել կամ սպանվել: Ամերիկյան այս փորձը շատ ուսանելի էր, և առաջինը դրանից օգտվեցին Իսրայելում: Նրանք մեծ գի-

տագործնական աշխատանք ծավալեցին փոքր ԱԹՍ-ների ստեղծման ուղղությամբ: Նախ 1969թ. մի քանի իսրայելական զինվորական և ինժեներ ռադիոհեռակառավարվող ավիամոդելների վրա տեղադրեցին նկարահանող սարք և փորձարկեցին: Արդյունքները գոհացուցիչ էին: Որոշ ժամանակ անց բանակը հետաքրքրվեց դրանով և մի քանի ինժեներների տրամադրեց գումար նման սարք ստեղծելու նպատակով: Չնայած ամեն ինչ այնքան էլ հարթ չէր. պետությունը մի կողմից խրախուսում էր նման սարքերի ստեղծման փորձերը, անգամ ընկերությունների հիմնումը, մյուս կողմից՝ ԱՄՆ-ից գնեցին «Ֆայերբիներ» և փորձարկված այլ սարքեր: Մի քանի տարի հետո, իհարկե, ամերիկյան փորձի և համապատասխան աշխատանքի համադրման արդյունքում իսրայելական նորաստեղծ ընկերություններն առաջատար դարձան այս ոլորտում:

1973թ. պատերազմում իսրայելցիները ԱԹՍ-ների կիրառության մեծ փորձ ձեռք բերեցին, ինչը շատ օգնեց նրանց հետագայում: Հաջորդ արաբա-իսրայելական պատերազմում՝ 1982թ., Բեքաայի հովտում իսրայելցիները գործում էին ավելի կազմակերպված: Նրանք ԱԹՍ-ներով նախ հայտնաբերում էին սիրիական զորքերի տեղակայումները, մեկ այլ տեսակի ԱԹՍ-ները, հանդիսանալով կեղծ թիրախներ, ստիպում էին միացնել սիրիական ռադիոլոկացիոն կայանները (ՌԼԿ)՝ մատնելով դրանց դիրքերը: Հանգամանք, որն օգտագործում էին իսրայելական ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցները և հարվածային ինքնաթիռները: Առանց ժամանակ կորցնելու դրանք խլացնում կամ ոչնչացնում էին ՌԼԿ-ները: Հակառադիոլոկացիոն հրթիռների հիմնական աղբյուրի՝ ՌԼԿ անջատման դեպքում նորից ԱԹՍ-ները լազերային լույսով ուղղորդում էին ինքնաթիռներից արձակված այլ տեսակի հակառադիոլոկացիոն հրթիռներ: Օդային իրադրության ամբողջ տեղեկատվությունը ստանում և հստակ վերահսկում էին ամերիկյան հեռակա հայտնաբերման և ղեկավարման «Ե-2Ց Հոկայ» ինքնաթիռները [9, c. 38–41]: Մարտական գործողությունների ժամանակ՝ ընդամենը մեկ ու կես ժամում, իսրայելցիները ոչնչացրին մոտ 25 արաբական զենիթահրթիռային համալիր (ԶՀՀ): 1982թ. դեպքերը հիշարժան են նաև նրանով, որ պատերազմի ժամանակ առաջին անգամ կիրառվում էին ԱԹՍ-ներ՝ հատուկ ՑԶ-ի համար [10, c. 93–95]:

1991թ. տեղի ունեցած «Փոթորիկ անապատում» գործողության ժամանակ դաշնակիցների հետախուզական ԱԹՍ-ները կատարել են օդային լուսանկարահանումների զգալի մասը, որի արդյունքում հայտնաբերվել էին անապատում լավ թաքցված և քողարկված ռազմական բունկերներ, օդանավարաններ և տարատեսակ այլ օբյեկտներ [11, c. 28-30]: ԽՍՀՄ-ը ևս ԱԹՍ-ների զարգացման բնագավառում որոշակի քայլեր կատարում էր: 1970-80-ական թթ. ԽՍՀՄ սպառազինության մեջ կային հազարավոր ԱԹՍ-ներ, սակայն դրանք շատ հին էին և անհուսալի: Խորհրդային սարքերը լայն կիրառություն

չէին ունեցել, չնայած առաքվել էին Չեխոսլովակիա, Ռումինիա, Իրաք և Սիրիա և մասնակիորեն կիրառվել:

Ժամանակակից ԱԹՍ-ները կարող են օդում մնալ ավելի քան քառասուն ժամ՝ մեծ ճշտությամբ կատարելով լուսանկարահանումներ և ռադիոհետախուզություն, գիշերը և ցերեկը՝ գտնվելով բավական մեծ բարձրության վրա: Ներկայումս ԱԹՍ-ների ստեղծմամբ զբաղվում են շատ պետություններ:

Ամերիկյան «Գլոբալ Հոկ» ԱԹՍ-ն ունի մեծ չափեր (երկարությունը՝ 14.5 մ, բարձրությունը՝ 4.7 մ, թևերի բացվածքը՝ 40 մ), կարող է օդում՝ մոտ 20 կմ բարձրության վրա, մնալ ավելի քան 40 ժամ [1, c. 30–33]: Վերջինս նախատեսված է ռազմավարական հետախուզության համար և թռչում է տրված ծրագրով [2, c. 6-8, 10-13]:

2006թ. Լիբանանյան պատերազմում, հուլիսի կեսից մինչև օգոստոսի կեսը, իսրայելական ԱԹՍ-ները կատարել են մոտ 1500 մարտական թռիչք, նույն ժամանակաընթացքում մարտական ինքնաթիռները կատարել են ավելի քան 10.000 մարտական թռիչք: Սակայն ԱԹՍ-ները, կատարելով ավանդական ավիացիայից մոտ 6 անգամ քիչ մարտական թռիչք, օդում մնացին մոտ 15.000 ժամ, այն դեպքում, երբ մարտական ինքնաթիռները՝ մոտ 12.000 ժամ[1]:

Սա ԱԹՍ կիրառության աճի դինամիկայի լավագույն հավաստումն է:

Հայտնի է, որ ներկայումս ավելի քան 75 պետություններում արտադրվել է ավելի քան 300 տեսակի ԱԹՍ [12]: Այստեղ ևս հետաքրքիր նրբություն կա. ժամանակին, երբ ինքնաթիռաշինության տեխնոլոգիան աստիճանաբար բարդացավ, իսկ նյութական ներդրումները մեծացան, արդիական մարտական ինքնաթիռներ ստեղծող պետությունների թիվը պակասեց՝ կես դարի ընթացքում մոտ երկու տասնյակից հասնելով երեք-չորսի: ԱԹՍ-ների զարգացման մեջ նկատվում է հակառակ միտումը. այսօր ներգրավվում են ավելի ու ավելի շատ պետություններ: Փաստորեն՝ մինի ավիացիան ծաղկում է նաև տեխնոլոգիայի պարզության և ցածրարժեքության շնորհիվ: Ահա այստեղ պետք է կանգ առնել՝ իմաստավորելու համար այն հարցը, թե մենք ինչ կարող ենք անել այս ոլորտում: Նախ՝ մենք ի՞նչ կարող ենք անել մեզ համար, և հետո՝ կարո՞ղ ենք արդյոք այս ոլորտում ճեղքում արձանագրելով՝ դուրս գալ միջազգային մակարդակ: Չէ՞ որ ԱԹՍ-ների տեխնոլոգիաների զարգացման համար անհրաժեշտ գրեթե ամեն ինչ կա մեզանում: Ժամանակին Իսրայելում հենց նման մոտեցման արդյունքում կարողացան հասնել բացառիկ ցուցանիշների:

Ժամանակակից ԱԹՍ-ները բարձր տեխնոլոգիական, գերճշգրիտ և հուսալի համակարգեր են, որոնց հիմնական աշխատանքի մեջ մարդկային գործոնը հասցված է նվազագույնի, իսկ անհաջողության ժամանակ մարդկային կորուստները գրեթե լիովին բացառված են: Այս ամենը խոստանում է էլ ավելի

[1] Տե՛ս http://www.waronline.org/IDF/Articles/2nd-lebanon-war-statistics/

բարձրացնել ընդհանուր ԹՍ-ների արդյունավետությունը: Նման հատկանիշներն առավել կարևոր են մեզ նման փոքր երկրների համար, որոնք չունեն հսկայական միջոցներ հզոր մարտական ինքնաթիռների ստեղծման, ձեռքբերման և օդաչուների պատրաստման համար: Համաշխարհային շուկայում նման սարքերի պահանջարկը 2004թ. կազմել է $6,87 մլրդ այն դեպքում, երբ վեց տարի առաջ այն հազիվ էր անցնում $2 մլրդ-ն: Ամերիկյան կազմակերպությունների գնահատմամբ, 2011թ. միայն ամերիկյան շուկայում պահանջարկը կգնահատվի ավելի քան $17 մլրդ: 2001թ. այս հարցի շուրջ ծավալված մասնագիտական քննարկումների ժամանակ մասնագետների կողմից կարծիք է հնչել, որ ոչ հեռու ապագայում ամերիկյան ՌՕՈ մոտ 30%-ը պետք է կազմեն ԱԹՍ-ները: Գործնական քայլերն արդեն տեսանելի են բոլորին. Պենտագոնը սկսել է հինգ անգամ ավելացնել անօդաչուների թիվը ԶՈ-ում: Ամերիկյան ներդրումներն այս ոլորտում մինչև 2009թ. նախանշված էին $16,2 մլրդ, սակայն ցանկություն կա ավելացնել հատկացումները: Յուրաքանչյուր տարի ԱՄՆ-ում փորձարկվում է մի քանի նման ԱԹՍ, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես ուղղաթիռատիպ ԱԹՍ-ները:

Պենտագոնի Անվտանգության ծառայության՝ վերջերս հրապարակած հաշվետվությունում ընդգծվում է, որ դատելով գործունեության ինտենսիվությունից՝ քառակի մեծացել է արտասահմանյան հետախուզական գործակալությունների հետաքրքրությունն ԱԹՍ-ների ստեղծման վերաբերյալ գաղտնի տեղեկատվության նկատմամբ [13, էջ 13]:

ԱԹՍ-ները սովորական ինքնաթիռների և ուղղաթիռների համեմատ ունեն հստակ ընդգծված և առարկայական առավելություններ: Դրանք են.

- Անձնակազմի պատրաստման ցածրարժեքությունը
- Անձնակազմի կորստի բացակայությունը և մարտական տեխնիկայի սակավ կորուստը
- Օդանավակայանների անհրաժեշտության բացակայությունը
- Սարքերի համեմատաբար ցածր գինը և սպասարկումը
- Սարքերի ընդհանուր փոքր չափերը և, հետևաբար, որոշ տվյալների բարելավումը
- Հակառակորդի ՀՕՊ-ի համար ավելի դժվար հայտնաբերվող և խոցվող նշանակետերը:

ԱԹՍ-ների կողմից կատարվող մարտական խնդիրները մասնագետներն օրեցօր ընդլայնում են: Ստորև թվարկվող մարտական խնդիրները ԱԹՍ-ների կողմից լիովին կամ մասամբ արդեն կատարվել են շոշափելի հուսալիությամբ.

- Հակառակորդի մասին ամենատարբեր տեղեկատվության հավաքում ժամանակի իրական ընթացքում
- Հակառակորդի նշանակետերի վրա սեփական հրետանու, ավիացիայի և խոցման այլ միջոցների կրակի ուղղորդում, նշանառում

- Հակառակորդի ՀՕՊ միջոցների աշխատանքի խափանում ռադիոպայքարի ազդեցության միջոցների շնորհիվ, օդային իրադրության բարդացում սովորական թռիչքներով և կեղծ թիրախի հանդիսացում
- Հակառակորդի կապի խափանում
- Հակառակորդի որոշակի նշանակետերի ոչնչացում՝ ճշգրիտ հարվածներով
- Կապի փոխհեռարձակում:

2.Անօդաչու թռչող սարքերի կիրառման առանձնահատկությունները

Ինչի՞ են ընդունակ այս սարքերը, և ի՞նչ պոտենցիալ ունեն գալիք զինված հակամարտությունների ժամանակ: Որո՞նք են դրանց կիրառման մարտավարական սահմանները և ձևաչափերը, կիրառության առանձնահատկությունները:

Խնդիրը հատկապես կարևոր է այլ զորատեսակների՝ լեռներում վարած մարտական գործողությունների առանձնահատկությունների հետ կապված (վերջին հանգամանքն ավելի մեծ նշանակություն ունի ավիացիայի համար, քանզի ավիացիոն ստորաբաժանումները հիմնականում գործում են համազորային ստորաբաժանումների հետ համատեղ, նպաստում են նրանց խնդիրների բարեհաջող կատարմանը և որքան էլ հզոր են, հակառակորդին հաղթելու վերջնական խնդիրն ինքնուրույն չեն կարող լուծել):

Մինչ օրս մասնագետների կողմից դեռ հստակ հաստատված չեն ԱԹՍ-ների դասակարգումը և նրանց ներկայացվող պահանջները: Ըստ քաշի, թռիչքի բարձրության, հեռավորության և ժամանակի՝ ընդունված է ԱԹՍ-ները բաժանել.

- «Միկրո» (մինչև 10 կգ ընդհանուր քաշ, 1 կմ թռիչքի բարձրություն, 1-ժամյա թռիչք)
- «Մինի» (մինչև 50 կգ ընդհանուր քաշ, 3-5 կմ թռիչքի բարձրություն, միքանիժամյա թռիչք)
- «Միդի» (մինչև 1000 կգ ընդհանուր քաշ, 9-10 կմ թռիչքի բարձրություն, 10-12-ժամյա թռիչք)
- «Ծանր» (մինչև 20 կմ թռիչքի բարձրություն, մինչև 24-ժամյա թռիչք):

Ներկայումս ԱԹՍ-ների կողմից լուծվող տարատեսակ մարտական ու ոչ մարտական խնդիրները կարելի է բաժանել երեք խմբի: Առաջին և հիմնական խնդիրն ամենաբազմազան հետախուզությունն է, երկրորդը՝ մարտական հարվածների լայն ոլորտը (մեծ հեռանկար ունի այս երկու խնդիրների մեկտեղումը) և վերջապես երրորդ խումբը՝ ամենատարբեր խնդիրների լուծման ապահովումը:

Մինչ օրս ԱԹՍ-ների լայն կիրառությունը հիմնականում հարուստ է հետախուզական կենսագրությամբ: Որոշ մարտական գործողությունների ժամանակ ԱԹՍ-ների կատարած հետախուզության մասշտաբները նույնիսկ գերազանցում են սովորական ինքնաթիռների և անգամ արբանյակների կատարած հետախուզության մասշտաբները:

Ռազմարվեստի պատմությունը վաղուց փաստել է, որ հետախուզական լավ տվյալները հաճախ կանխորոշում են պատերազմի ելքը:

Ելնելով ստեղծված իրադրությունից՝ ԱԹՍ-ների կիրառությունը հետախուզական նպատակներով ավելի ու ավելի պահանջված է դառնում:

ԱԹՍ-ների կիրառությունը ժամանակի ընթացքում ստացել է բազմակի ձևեր ու երանգներ. հատկապես ի հայտ է գալիս ԱԹՍ-ների մասնակի և համակարգային կիրառության գաղափարը: ԱԹՍ-ները հիմնականում կիրառվում էին մեկ զորատեսակի և անգամ կոնկրետ ստորաբաժանումների համար, որը հենց մասնակի կիրառության տեսակն է: Իրաքյան վերջին՝ 2003թ. պատերազմի ժամանակ ամերիկյան «Դելտա» հատուկ ստորաբաժանման զինվորներն իրենց պաշտպանական սաղավարտներին ամրացված էկրաններին անմիջապես տեսնում էին իրենց շրջակայքում տեղի ունեցող ամեն ինչ: Տեղեկությունը ստացվում էր «Դռեզոն Էյ» հետախուզական ԱԹՍ-ներից: Հատուկ ստորաբաժանման մարտիկները հետախուզական ԱԹՍ-ների հաղորդած տվյալներով հայտնաբերված «խոչընդոտները» վերացնելու համար կարող էին դիմել մարտական «Փրեդատոր» ԱԹՍ-ներին, վերջինս կիսավտոմատ ռեժիմում խոցում էր հայտնաբերված թիրախները: Ոչնչացման ենթակա թիրախները կարող էին լինել մինչև անգամ առանձին դիպուկահարներ: Սա արդեն համակարգային կիրառության փոքրիկ տարբերակ է, սահմանափակ տարածքում սահմանափակ խնդիրների լուծման համար:

ԱԹՍ-ների մասնակի կիրառությունը համարվում է ավելի թույլ մակարդակ, սակայն դեռ իրեն չի սպառել և որոշ դեպքերում կարող է բերել լուրջ հաջողություններ: ԱԹՍ-ների նույնիսկ մասնակի կիրառությունը սահմանափակ ստորաբաժանումների կամ ստորաբաժանման կողմից, սահմանափակ տարածքում և ժամանակում, կոնկրետ տեղեկատվություն ստանալու համար կարող է զգալիորեն բարձրացնել տվյալ ստորաբաժանման և անգամ ամբողջ զորամիավորման մարտական հնարավորությունները: Մեր տարածաշրջանում, օրինակ, մեկ համազորային զորամիավորմանը տրված ԱԹՍ-ների ստորաբաժանումը կարող է այդ զորամիավորումն ապահովել անընդհատ հետախուզական ստույգ տվյալներով՝ ռազմաճակատի ամբողջ երկայնքով և խորությամբ: Ներկայումս գոյություն ունեցող և բազմիցս կիրառված ԱԹՍ-ներն ապացուցել են այդ հնարավորությունները: Ստորաբաժանման մեջ կա մի քանի ԹՍ, և ստորաբաժանումը կարող է արագ տեղաշարժվել՝ մանևրելով զորամիավոր-

ման ամբողջ ճակատով: Մասնակի կիրառման լավ օրինակ կարող է հանդիսանալ նաև հատուկ ԱԹՍ-ների կիրառումը՝ որպես նշանառու-խոցող միջոցներ, այսպես ասած «քիլլերներ»: ԱԹՍ-ները զինելով մեծ տրամաչափի դիպուկահար զենքերով՝ կարելի է ստանալ ցանկալի արդյունքներ: Նշված հնարավորությունները հատկապես կարևոր են հայկական զինված ուժերի համար:

Մասնակի կիրառության աճող ծավալներն են հիմք տալիս մասնագետներին ավելի լուրջ վերաբերվել ԱԹՍ-ների՝ որպես համակարգային և որ ավելի կարևոր է՝ մարտական կիրառության հեռանկարին: Հիմա ԱԹՍ-ների հեռանկարայնությունն այլևս քննարկման առարկա չէ, խնդիրը նրանց կիրառության մասշտաբների որոշման, կիրառման մարտավարական և ռազմավարական մոտեցումների, նրանց շնորհիվ մարտն ավելի կազմակերպված դարձնելու մեջ է:

Մասնակի կիրառման մասին նշելիս ակնարկեցինք համակարգային կիրառության պարզ դեպքերի մասին:

Համակարգային կիրառության դեպքում ԱԹՍ-ն ընդհանուր տեղեկատվական դաշտի ապահովման կարևորագույն գործիքներից է: Համակարգային կիրառության դեպքում ԱԹՍ-ն հետախուզական թռիչքը կատարում է միաժամանակ մի քանի օղակների համար, կամ նրա տված տեղեկատվությունը միաժամանակ ստանում են տարբեր համակարգեր ու գերատեսչություններ: Տեղեկատվության ստացման միջոցները կարող են ունենալ տարբեր նպատակներ և խնդիրներ, կարող են լինել առանձին սարքեր՝ հանդիսանալով մեկ համակարգի բաղկացուցիչ մասնիկներ: Դրանք կարող են համագործակցել, և այդ համագործակցությունը կարող է մեծապես կախված լինել ԱԹՍ-ների հաղորդած տեղեկություններից: Օրինակ՝ ԱԹՍ-ները, հետախուզելով տեղանքը, տվյալները միանգամից հաղորդում են և՛ կենտրոնական, և՛ հարվածային ԹՍ-ներին:

ԱԹՍ-ների համակարգային կիրառության համար ներգրավվում են ավելի մեծ քանակությամբ համալիրներ՝ իրենց ԹՍ-ներով և կառավարման ավելի բարդ տեխնոլոգիաներով: Համակարգային կիրառման ժամանակ խնդիրն արդեն միայն հետախուզումը չէ, նույնիսկ հետախուզված տեղեկությունները մշակելը և հասցեատիրոջը հասցնելը բավարար չեն: Հայտնաբերված նշանակետերին հարվածելու համար կոորդինատների մշտական ապահովում, արդյունքների ստուգում. սա արդեն բարդ համակարգ է, սակայն անվիճելիորեն ավելի հուսալի և արդյունավետ: Նման համակարգային կիրառումը, թվարկված բարդություններով հանդերձ, հրամանատարությանը թույլ է տալիս լուծել համակարգային խոշոր խնդիրներ: Նմանատիպ խնդիրների լուծման ժամանակ առանցքային դեր են խաղում ԱԹՍ-ները:

Մարտական կիրառությունն ինքնին համակարգայինի մի մասնիկ է, քա-

նի որ, երբ դրանք կիրառվում են, տեղեկատվական ապահովումը, ղեկավարումը և այլ քայլերը կատարվում են այլ ԱԹՍ-ների ու համալիրների միջոցով: Սա մասնակի կիրառության դասական ձևից մեկ քայլ վեր է, այսինքն՝ մասնակի կիրառություն համակարգային որոշակի երանգներով:

ԱԹՍ-ները, ի սկզբանե հանդիսանալով ԹՍ-ների հասարակ տեսակը, վերաճել են ռազմավարական խնդիրներ կատարող համալիր միջոցների: Ուշագրավն այն է, որ նրանք, ելնելով իրենց ոչ մեծ արագությունից, մարտական մասի փոքր չափերից և այլ բնութագրերից, տեղավորվում են ավանդական մարտավարական օդակի սպառազինությունների չափանիշների մեջ, սակայն, ելնելով տեղեկատվական այն հզոր բազայից, որը տրամադրում են նրանք՝ առանց ժամանակային ձգձգման: Տրամադրված տեղեկատվության շնորհիվ, օպերատիվ և ռազմավարական համակարգերի հետ համագործակցության անհրաժեշտությունից, ինչն ապահովում է մարտի ղեկավարման ճկունություն, անօդաչուները վերաճել են ռազմավարական միջոցների: Ասել է թե՝ այս հասարակ ու պարզ մեքենաները լուծում են բարդ ու կարևորագույն խնդիրներ:

Ահա այսպես, առաջին հայացքից պարզագույն հիմունքներով է արտահայտվում մարտական ԱԹՍ-ների համակարգային կիրառության նախնական տեսությունը:

Եզրակացություն

Փոքր պետությունների համար, ինչպիսին ՀՀ-ն է, ներկայումս դժվար է ինքնուրույն ստեղծել և արտադրել լավ տվյալներ ունեցող ԱԹՍ-ներ: Կարելի է սկզբի համար այլ պետություններից գնել պատրաստի տեսակներ, փորձ ձեռք բերել, իսկ հետո փորձել ստեղծել սեփական ուժերով:

Ամեն դեպքում, ելնելով պետության ռազմատեխնիկական անկախությունից՝ նպատակահարմար է ԱԹՍ-ները, ինչպես և ցանկացած սպառազինություն, ստեղծել սեփական միջոցներով և չներկրել արտասահմանից: Հաստատապես անքննարկելի է այն, որ ՀՀ ԶՈՒ-ին անհապաղ հարկավոր են ԱԹՍ-ներ, և ոչ մեկ-երկուսը: Մեր տարածաշրջանի համար առանձնահատուկ կարևորություն ունեն ԱԹՍ-ների որոշակի բնութագրեր: Օրինակ՝ հարկավոր է, որ ԱԹՍ-ն ունենա ոչ պակաս, քան 6 կմ թռիչքային բարձրություն, լինի կատապուլտային արձակմամբ, անկարգելով կամ հատուկ հարմարանքով վայրէջք կատարող: Սովորական թռիչքուղուց թռչող և նույն տեղում վայրէջք կատարող ԱԹՍ-ները մեզ մեծ ծառայություններ չեն կարող մատուցել: Մեզանում շատ կարևոր է զարգացնել նաև այլ տեսակի ԱԹՍ-ները, մասնավորապես՝ օդապարիկներ: Օդային սահմանի վերահսկողության, օդուժի կիրառության և անգամ խաղաղ թռիչքների կազմակերպման գործում այս սարքերի դե-

րը շատ կարևոր է: Առանձնահատուկ նրբություններ շատ կան: Թեման առհասարակ պետք է լինի մեր ուշադրության կենտրոնում, հատկապես, երբ մեր հարևան երկրներն ակտիվորեն զարգացնում են այս տեխնոլոգիաները: Այսինքն՝ այստեղ կա նաև մրցակցության խնդիր:

Ժամանակակից ՕՀՄ-ների զանգվածային կիրառմամբ հենց մարտական գործողությունների սկզբից հնարավոր է հաղթանակ տանել: Կիրառության մասսայականությունն աննախադեպ է [5, c. 70]: Առաջին էշելոնի զորքերն այնքան արագ են շարքից դուրս գալիս, որ երկրորդ էշելոնը կամ ռեզերվը չի հասցնում միջամտել [14, c. 28]: Խրամատային ամուր, պասիվ պաշտպանությունը, որը կարծրատիպ է դարձել, արդեն չի կարող ապահովել հուսալի պաշտպանություն [15, c. 18-24]: Հարձակողական դատողությունը հակամարտության ժամանակ դառնում է գերակայող [16, c. 73-80]: Ամբողջ աշխարհն անցնում է հիմնական ստորաբաժանումների փոփոխման: ՕՀՄ-ների, ԹՍ-ների և այլ համակարգերի հագեցվածության շնորհիվ հիմնական դարձող բրիգադներն ավելի մեծ հարվածային և շարժունակության հնարավորություններ ունեն, քան նախկին դիվիզիաները:

Մարտական գործողությունների ծանրության կենտրոնը վաղուց գետնից շարժվում է դեպի երկինք:

Այս պարզ ճշմարտության ընկալումը կարող է հաղթանակներ ու գերակայություն ապահովել ապագայում և հակառակը՝ կորուստներ պատճառել այն չընդունելու պարագայում: Նման դառնություններ թույլ տալու հնարավորություն մենք չունենք: Մեզանում, որպես կանոն, ուշադրություն է դարձվում ցամաքային զինատեսակների և զորատեսակների զարգացմանը, իսկ ԹՍ-ների, ՕՀՄ-ների զարգացումը թերի է: Այդպիսի ուշադրությունն ՕՀՄ-ների նկատմամբ չի կարող լինել բավարար, քանզի այս զինատեսակները կարևոր են, և օրեցօր նրանց դերն ու նշանակությունն ավելի են մեծանում: Յուրաքանչյուր դարաշրջանում գերակայող մի զորատեսակ իր նշանակությամբ թելադրում է մարտավարության ձևաչափը: Փոփոխվում է պատերազմի վարման ավանդական պատկերացումը, գալիս են նոր գաղափարներ և մոտեցումներ: Հարկավոր է ճիշտ հասկանալ նրանց շունչը և ոչ թե սպասել այդ փոփոխություններին: ԱԹՍ-ները միայն նոր տեսակի ԹՍ-ներ չեն, դրանք գալիք պատերազմներում նոր տեսակի ավիացիա են, ցավոք, այս պարզ ճշմարտությունը մինչ օրս հասկացել են շատ քչերը:

Ժամանակակից ռազմատեխնիկական, ռազմաքաղաքական զարգացումները, սպառազինությունների զարգացման տեմպերը և ուղղվածությունները նոր մարտահրավերներ են նետում ցանկացած պետության առաջ, որոնք սուր են, խիստ և դաժան: Նման մարտահրավերները պետք է հասկանալ, ընդունել ճիշտ և ժամանակին: Մարտահրավերները պահանջում են համարժեք

և կտրուկ պատասխաններ, որոնք պետք է դիտարկել համաշխարհային փորձի հետ համադրելով (թեկուզ անհրաժեշտության դեպքում բովանդակային փոփոխություն կատարել) և կիրառել մեր պայմաններում: Այս դինամիկ տեմպերից դուրս մնալով՝ մենք կարող ենք, ի վերջո, կորցնել պետության անվտանգության երաշխիքները:

Դեկտեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Каримов А.,* Беспилотные летательные аппараты большой высоты и продолжительности полета: уникальность и эффективность, Авиация и Космонавтика, № 4, 2003.
2. *Григорьев И.,* Глобал Хок пилотируется с земли, Авиа Панорама, сентябрь-октябрь, 2004.
3. *Исламов В.,* Беспилотники: сто лет в воздухе, Независмое военное обозрение, № 32 (583), 2009.
4. *Коротченко Е.Г.,* Тенденции развития современного оперативного искусства, Военная мысль, № 1, 1999.
5. *Захаров Н.,* Операция «Лис пустыни»: развитие стратегии и оперативного искусства, Военная мысль, № 5, 1999.
6. *Белкин В., Мухаметжанова А.,* Является ли высокая точность оружия «Абсолютной»?, Вестник Воздушного Флота, май-июнь, 2003.
7. Зарубежное Военное Обозрение, № 4, 2008.
8. *Белкин В., Мухаметжанова А.,* Новое поколение высокоточного оружия, Вестник Воздушного Флота, июль-август, 2003.
9. *Амусин Б., Лосев Е.,* Летающие роботы, Армейский Сборник, № 2, 2002.
10. *Маначинский А., Чумак В.,* «Беспилотники» над барханами, Армейский Сборник, №8, 1996.
11. *Колпакчиев И.,* Бумеранг, Техника Молодежи, № 9, 1993.
12. *Даффи П., Кандалов А.,* А.Н. Туполев. Человек и его самолеты, М., Московский рабочий, 1999.
13. «Հայ Զինվոր» թերթ, № 21, 2-9 հունիսի, 2007թ.:
14. *Вахрушев В.А.,* Локальные войны и вооруженные конфликты, Военная мысль, N4, 1999.
15. *Воробьев И.Н.,* Какие войны грозят нам в будущем веке?, Военная мысль, N2, 1997.
16. *Печуров С.Л.,* Революция в военном деле: взгляд с Запада, Военная мысль, N4, 1997.

ПЕРСПЕКТИВЫ ПРИМЕНЕНИЯ БЕСПИЛОТНЫХ ЛЕТАТЕЛЬНЫХ АППАРАТОВ В НАШЕМ РЕГИОНЕ

Арцрун Оганесян

Резюме

В последних локальных войнах все больше проявилось растущее значение средств воздушного нападения. В широкой гамме средств воздушного нападения свое достойное место занимают беспилотные летательные аппараты (БЛА). БЛА не новость для авиационного мира, первые из них появились еще на заре развития авиации. Современные БЛА все больше применяются в разных локальных конфликтах. На фоне растущей популярности этих маленьких летательных аппаратов нужно фундаментально изучить опыт их применения. После основательного изучения методов и форматов применения БЛА предлагается развивать технологии их создания и использования в горной лесистой местности. Для нашего региона эти аппараты особенно пригодны по причине дороговизны и сложности развития традиционных боевых авиационных средств и средств разведки.

ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ

Դավիթ Հախվերդյան[1]

Հոդվածում դիտարկվել են տնտեսական աճի որոշ ասպեկտներ, որոնք կարևոր դեր ունեն հասարակության գործունեության և զարգացման համար: Հատուկ ուշադրություն է դարձվել աճի գործոններին և հնարավոր ու իրական աճի տեմպերի շեղումների պատճառներին: Դրա հետ կապված՝ վերլուծվել են առանձին հարցեր, որոնք վերաբերում են մի կողմից՝ շուկայական տնտեսության ինստիտուտների կառուցվածքին, ինստիտուտներին և գործունեությանը, մյուս կողմից՝ դրանց շրջանակներում իրականացվող քաղաքականության և գործիքների արդյունավետության փոխազդեցությանը՝ հաշվի առնելով արտադրության երկարաժամկետ դինամիկայի վրա ունեցած հետևանքները:

1. Անխուսափելի աճ

Հասունության որոշակի մակարդակում տնտեսական մեխանիզմները երկարաժամկետ տնտեսական աճը դարձնում են անխուսափելի: Աճի այս ինքնակարգավորիչ հատկության պատճառն արտադրողների՝ շահույթն առավելագույնի հասցնելու և սպառողների՝ լավ ապրելու օբյեկտիվ ցանկությունն է: Երկարաժամկետ հեռանկարում միևնույն մակարդակում մնացող ազգային եկամտի վերաբաշխման ճանապարհով աճի հնարավոր չէ հասնել: Այստեղ արտադրության աճ է պահանջվում:

Ընդգծենք, որ իշխանության ղեկին գտնվող քաղաքական գործիչները պետք է ակտիվորեն նպաստեն աճին, հակառակ դեպքում, համենայնդեպս ժողովրդավարական երկրներում, նրանք ժամանակի ընթացքում իրենց դիրքերը կկորցնեն: Այդ նույնն իրավացի է նաև ոչ ժողովրդավարական երկրների համար, որտեղ իշխանությունը հնարավոր է երկար պահպանել, բայց, վերջին հաշվով, կառավարության ճգնաժամն ավելի կխորանա, միևնույն ժամանակ, երկիրը կարող է հայտնվել հասարակության և տնտեսության համար աղետալի հետևանքներով լի իրավիճակում:

Այս պայմաններում անցումային տնտեսություններով հետխորհրդային երկրների փորձը համեմատաբար հուսադրող է երևում: Այն ցույց է տալիս, որ

[1] Կորպորատիվ կառավարման բարձրագույն դպրոցի գլխավոր տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

իշխանության կարելի է գալ (կամ էլ հեռանալ) ինչպես սահմանադրությամբ սահմանված ժամանակահատվածից հետո՝ ժողովրդավարական ընտրությունների ճանապարհով (ինչպես Լեհաստանում), այնպես էլ փողոցային երթերի ուժեղ քաղաքական ճնշման ներքո (ինչպես Վրաստանում 2003թ. վերջին և 2004թ. սկզբին, այնուհետև Ուկրաինայում): Դրա հետ մեկտեղ, չի կարելի բացառել այն, որ կառավարությունը կարող է ձգտել ապահովել տնտեսական աճ, բայց չի կարող այդ նպատակին հասնելուն ուղղված հաջող քաղաքականություն վարել:

Մեկ այլ անհաջող սցենար կարող է իրականացվել այն դեպքում, երբ կառավարության կամ կենտրոնական բանկի կողմից անցկացվող տնտեսական քաղաքականությունը (հարկաբյուջետային, դրամավարկային, արդյունաբերական կամ առևտրային) կանխամտածված կերպով կենտրոնացվում է այլ առաջնահերթ նպատակների իրականացման վրա՝ ի վնաս երկրորդային կարևորության դասվող տնտեսական դինամիկայի: Երբեմն նման քաղաքականությունն արդարացված է, հատկապես եթե խոսքը վերաբերում է ֆինանսական և տնտեսական հավասարակշռության վերականգնմանը: Սակայն, մյուս դեպքերում, ինչպես տեղի է ունեցել Լեհաստանում 1998-2000թթ. և ավելի կտրուկ 1989-1992թթ., դա նշանակում է, որ տնտեսական քաղաքականության գործիքները միախառնվում են դրա նպատակների հետ [1]: Անկասկած, նման քաղաքականության կողմնակիցներն անպայման այլ տեսակետի կողմնակից են (ինչը զարմանալի չէ) [2]:

Ընդ որում, զարգացման գործընթացների ուսումնասիրման տեսանկյունից միջոցների և նպատակների որոշման հարցը ենթակա է հետագա լուրջ քննարկումների: Զուտ տնտեսական տեսանկյունից ակնհայտ է, որ նպատակն այստեղ *per se* տնտեսական աճը ներառող սոցիալ-տնտեսական զարգացման ապահովումն է: Այնպիսի կատեգորիաներն ու գործընթացները, ինչպիսիք են բյուջեն, գնաճը, մասնավորեցումը, փոխարժեքը, տոկոսադրույքները, հարկերը և այլն, ծառայում են որպես այդ բարձր նպատակակետին հասնելուն նպաստող գործիքներ: Տնտեսական քաղաքականության մեջ դրանց միախառնումը կարող է բավական ծախսատար լինել: Իսկ ավելի լայն համատեքստում (հաշվի առնելով, որ ազատությունն ու ժողովրդավարությունն անկախ արժեքներ են) խնդիրներ են առաջանում, թե «որը որին է ենթարկվում»: Ըստ Ա.Սենի՝ «ազատությունը ոչ միայն զարգացման գլխավոր նպատակն է, այն նաև դրա գլխավոր գործիքներից մեկն է» [3, p. 10]: Դա ճիշտ մոտեցում է, քանի որ այն շեշտադրում է կատարում ազատության և զարգացման միջև դրական հակադարձ կապի վրա: Բայց խնդիրն այն է, որ այդպիսի համատեղությունն արտահայտվում է միայն երկարաժամկետ հեռանկարում:

Հնարավո՞ր է արդյոք (այլ կերպ՝ արժե՞ արդյոք) ազատությունն ու ժողո-

վրդավարությունը ենթարկել արդյունավետ տնտեսական քաղաքականության և արտադրության ծավալների արագ աճի պահանջներին, որը կարող է կարևոր արդյունք տալ, ինչպիսին է մարդկանց կենսամակարդակի բարձրացումը: Նմանատիպ մոտեցումը գերիշխում է մասնավորապես Չինաստանում և Վիետնամում, որտեղ արդեն երկար տարիներ բավական սահմանափակ ժողովրդավարության պայմաններում խելամիտ զարգացման քաղաքականություն է անցկացվում, սակայն, այդ նույնը չի կարելի ասել Ուզբեկստանի և Թուրքմենստանի մասին, որտեղ վերոհիշյալ քաղաքականությունը բացակայում է: Իսկ գուցե ավելի լավ է խթանել ազատությունն ու ժողովրդավարությունը, նույնիսկ եթե այն խոչընդոտում է տնտեսական աճին ուղղված արդյունավետ քաղաքականության իրականացմանը: Այդպիսի իրավիճակ է տիրում բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, որտեղ երիտասարդ քաղաքական ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ թուլությունը խոչընդոտում է խելամիտ, տնտեսական աճի ապահովման վրա կենտրոնացված քաղաքականության անցկացմանը և բացասաբար է անդրադառնում մեծ դժվարությամբ ստեղծված շուկայական տնտեսության ինստիտուտների գործունեության վրա: Մենք կենտրոնացնում ենք մեր ուշադրությունը տնտեսական աճի տեմպերի, համաշխարհային արտադրության հավելաճի կառուցվածքի, աճի արդյունքները բնակչության տարբեր խմբերի միջև բաշխելու, ինչպես նաև տարբեր նպատակներով դրանց օգտագործման հարցերի վրա: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել եկամտի ստեղծման և բաշխման տարածաշրջանային ասպեկտը, քանի որ ՀՆԱ (վերա)բաշխման քաղաքականությունը ժամանակի և տարածության մեջ ավելի շուտ կարող է դժգոհություն առաջացնել, քան արտադրության դինամիկան: Երբեմն հարաբերական արագ աճի շրջանում ի հայտ են գալիս մեծ թվով սոցիալ-տնտեսական խնդիրներ, ինչը պայմանավորված է վերաբաշխման գործընթացների ուժեղացմամբ: Այս դեպքում աճից օգուտների անարդար թվացող բաշխումից առաջացող դժգոհությունները կարող են լինել ավելի ուժեղ, քան ավելի ցածր աճի տեմպերի պայմաններում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ նաև դրա երկարաժամկետ հեռանկարների վրա: Եկամտի (կամ, ավելի ճիշտ, դրա իրական աճի անարդար բաշխումը) վնաս է բերում ոչ միայն սոցիալական տեսանկյունից, այլ նաև զուտ պրագմատիկ պատճառներով, քանի որ այն խոչընդոտում է արդյունավետության բարձրացմանն ու տնտեսական աճին՝ որոշ ժամանակ անց հակառակ անդրադառնալով նրանց դեմ, ովքեր սկզբում դրանից շահել են:

2. Սպասումներ և իրականություն

Ինչպես վկայում է համաշխարհային փորձը, սպասվելիք աճի տեմպերը սովորաբար գերազանցում են իրականին: Արդյունքում՝ դա առաջացնում է գիտական և քաղաքական անվերջ վիճաբանություններ և սոցիալական ճնշվածություն: Խնդիրն այն է, որ քաղաքական գործիչները և տնտեսագետները ձգտում են հասարակությանը համոզել *ex ante,* որ իրենք կարող են հասնել որոշակի նպատակների, այնուհետև՝ *ex post,* դնելով իրենց անհաջողությունների պատասխանատվությունը կամ ուրիշների (քաղաքական գործիչների և տնտեսագետների), կամ էլ Աստծո առաքելության վրա (նավթի գների չափազանց բարձր կամ ցածր գները, Ռուսաստանի կամ Արգենտինայի ճգնաժամը, փոխարժեքի բարձրացումն ու իջեցումը և այլն): Միայն առավել զարգացած երկրներն են կարողացել «ապաքինվել» այդ ավելորդ լավատեսության առանձնահատուկ «հիվանդությունից», չնայած, հնարավոր է, որ ոչ մշտապես, ոչ ամենուր և ոչ ամբողջովին:

Այդպիսով, գրեթե բոլորն ակնկալում են աճի ավելի բարձր տեմպեր, քան իրենք արժանի են ըստ իրենց համառության (կամ դրա բացակայության), կազմակերպման և կառավարման որակի, ինստիտուցիոնալ հասունության և կանխատեսումների: Այդ նախանշանն ավելի նկատելի էր հետխորհրդային երկրների անցումային շրջանի ամենասկզբում, որտեղ արտադրության և սպառման մասշտաբների և աճի տեմպերի վերաբերյալ ակնկալիքները մեծապես գերազանցեցին, ինչպես հետագայում պարզվեց, բավական զուսպ իրական արդյունքները: Ակնհայտ է, որ միայն Չինաստանին հաջողվեց խուսափել նման հիասթափությունից, քանի որ այն յուրաքանչյուր տասնամյակում ի վիճակի եղավ կրկնապատկել իր ՀՆԱ-ն, և այստեղ դժգոհությունը կարող է կապված լինել միայն այդ աճից օգուտների բաշխման և հասարակության գործունեության վրա ազդող որոշ ոչ տնտեսական գործոնների հետ [4, c. 37-38]:

Իհարկե, հետխորհրդային փոխակերպման գործընթացի էության վրա ազդող հիմնական համակարգային փոփոխությունների ժամանակահատվածին բնորոշ է իր առանձնահատկությունը: Դրա համար հատկանշական բազմաթիվ երևույթների կանխագուշակումը բավական բարդ էր: Դա մասամբ կարող է բացատրվել մի կողմից՝ ավելորդ լավատեսական հայտարարություններին և ակնկալիքների, մյուս կողմից էլ՝ իրականության միջև վիթխարի տարբերությամբ: Ցավոք, տվյալ ֆենոմենը դեռ բավական հետազոտված չէ, սակայն, կարելի է ենթադրել, որ ԿԱԵ և ԱՊՀ երկրները նախատեսել էին, որ ձևավորվելուց արդեն մոտ 15 տարի անց իրենց ազգային եկամուտը կլինի իրական ձեռք բերվածից կրկնակի շատ՝ միջինը գրեթե 1989թ. մակարդակի: Այստեղից հետևում է այժմյան ենթադրություններում սխալների մեծության հարցը: Վերնախավը և հասարակությունը մոտակա 15 տարում չե՞ն ակնկալում արդյոք տնտեսական աճի ավելի մեծ տեմպեր (և որքանով), քան իրենք իրականում կարող են հասնել:

3. Աճի հիմնավորումը

Կառուցվածքային վերափոխումների ժամանակակից փուլում տնտեսական աճի աղբյուրների վերաբերյալ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր գործոն: Առաջինը ռեսուրսների ճիշտ օգտագործման հիման վրա բաշխման արդյունավետության հետևողական բարձրացումն է: Դա մեծ ջանքեր է պահանջում ձեռնարկատիրության ասպարեզում ստեղծագործական միտքը խթանելու, միկրոմակարդակում ռեսուրսները համապատասխան օգտագործելու, ինչպես նաև կորպորատիվ կառավարման որակը բարելավելու համար:

Խոր կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումների էպիկենտրոնում գտնվող անցումային տնտեսություններով երկրների և զարգացած երկրների միջև կարևոր տարբերություններից մեկն այն է, որ զարգացած երկրներում ՀՆԱ 1-2% տարեկան աճի տեմպը բավական է զբաղվածության խթանման և գործազրկության կրճատման համար, մինչդեռ ԿԱԵ և ԱՊՀ երկրներում առանց գործազրկության դեմ պայքարին ուղղված հատուկ միջոցների՝ զբաղվածության աստիճանը չի մեծանա, մինչև ՀՆԱ աճի տեմպերը չմոտենան 4%-ին:

Աճի երկրորդ գործոնը խոր անկման ժամանակաշրջանից հետո կապիտալի կուտակման և խնայողության հակվածության (վերափոխման շոկով և ռեցեսիայով պայմանավորված) վերածնունդն է: Խնայողության ընդլայնումն անհրաժեշտ է տնտեսական աճի երկարաժամկետ դինամիկան բարձր մակարդակում պահելու համար հատկապես այն դեպքում, երբ «մակերևույթում գտնվող» և վերափոխման ընթացքում հասանելի դարձած բազմաթիվ պաշարներ սպառվում են: Այդ դեպքում անհրաժեշտ է դառնում խթանել ոչ միայն ներքին խնայողությունը, այլ նաև տնտեսական բաց միջավայրում ներգրավել պորտֆելային և առաջին հերթին՝ ուղղակի ներդրումների տեսքով օտարերկրյա խնայողությունները: Ուղղակի ներդրումները ստեղծում են նոր արտադրական հզորություններ, բարձրացնում ընդունող երկրի տնտեսության մրցունակությունը և դրա արտահանման հնարավորությունները՝ դրա միջոցով նպաստելով արտահանման վրա հիմնված տնտեսական աճին: Իհարկե, նմանատիպ զարգացումն ավելի շատ կախված է այլ գործոններից, առաջին հերթին փոխարժեքից և առևտրային քաղաքականությունից, սակայն ուղղակի ներդրումների դերը կապիտալի և ժամանակակից արտադրական հզորությունների ստեղծման հարցում նույնպես պետք չէ թերագնահատել:

Իհարկե, պլանային տնտեսության դեպքում նույնպես խնայողության հակվածությունը նշանակալի է եղել: Տնտեսական համակարգի նախկին տեսակին հատկանշական էր կուտակման և ներդրումների շատ բարձր նորման, բայց, ի տարբերություն շուկայական տնտեսության, սոցիալիզմի ժամանակ

խնայողությունները հաճախ պարտադրված են եղել:

Պլանային տնտեսությունից շուկայականին անցնելը չի կարող հանգեցնել կամավոր կուտակման հակման բարձրացմանը և երկարաժամկետ հեռանկարում սպառման սահմանային հակման կրճատմանը: Այսօր, առաջին հերթին, հարկավոր է (զարգացող շուկայական միջավայրի պայմաններում) բարձրացնել երկրի մակարդակով կուտակվող հնարավոր ցանկացած տեսակի խնայողությունների օգտագործման արդյունավետությունը:

Երկարաժամկետ հեռանկարում կանխիկ կապիտալի օգտագործման արդյունավետությունը պետք է անընդհատ մեծանա, և, միևնույն ժամանակ, ներդրումների տեմպերը կարող են ու պետք է աճեն սպառման պատնեշի սահմաններում: Հետևաբար, մի քանի տարի անց (իհարկե, ոչ ուշ, քան մեկ կամ երկու տասնամյակ հետո) տնտեսական աճի տեմպերի մեծացման միակ հնարավոր միջոցը լինելու է կուտակման արդյունավետության բարձրացումը, այսինքն՝ ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում այլևս չի մեծանալու: Միայն այդ դեպքում մենք կկարողանանք մտնել իրական ինտենսիվ աճի փուլ (օգտագործելով նախկին դարաշրջանի տերմինաբանությունը), ի տարբերություն ներկայումս գերիշխող էքստենսիվ աճի ժամանակահատվածի:

4. Ինստիտուտների ստեղծումը և ուսուցումը

Ե՛վ 1990-ականների սկզբի անկումը, և՛ դրան հետևող անցումային մեծ ճգնաժամն ապացուցել են, որ շուկայական տնտեսության արդյունավետ գործունեության համար կարևոր ինստիտուտների զարգացման նշանակության անտեսման պայմաններում ազատականացման և մասնավորեցման վրա միակողմանի կենտրոնացումը հասարակության վրա շատ թանկ է անդրադարձել: Նման «դեղատոմսը», միանշանակ, բավական չէ դինամիկ զարգացող շուկայական տնտեսության ստեղծման համար [5]: Ավելի վատն այն է, որ արտադրության ծախսված հնարավորություններն անվերականգնելի են, իսկ համընդհանուր գործազրկության և սահմանայնության տեսքով սոցիալական ծախսերը մեծ են:

Այսօր արդեն ոչ ոք կասկածի տակ չի առնում ինստիտուտների դերը. ընդհակառակը, վերջին տարիներին այն ամեն կերպ ընդգծվել է նույնիսկ պարզամիտ նեոլիբերալ մոտեցման նախկին կողմնակիցների կողմից, որ շուկայի «անտեսանելի ձեռքը» ինքնին կփոխի հին ինստիտուտները (պետական սեփականությունը, կենտրոնացած պլանավորումը, գների վարչական կարգավորումը և այլն): Շատ դեպքերում ամեն ինչ այնքան էլ պարզ չէ. իրոք, հին ինստիտուտները պետք է քանդվեն կամ վերանան, բայց դրանց պետք է փոխարինեն նոր ինստիտուտները, որոնց ստեղծումը դանդաղ գործընթաց է և մշտապես պահանջում է պետության միջամտությունը, որն էլ հիմնարար փո-

փոխությունների գործընթացում կարևորագույն ինստիտուտներից մեկն է հանդիսանում [6]:

Այսպիսով, ի՞նչ են ինստիտուտները: Նեղ իմաստով դրանք տնտեսական խաղի կանոններն են, տվյալ դեպքում՝ շուկայական խաղի, որոնք սահմանվում են օրենքով և այն կազմակերպությունների կողմից, որոնք խթանների, պարգևատրումների և պատժամիջոցների («մտրակ և բլիթ») միջոցով ապահովում են բոլոր տնտեսական սուբյեկտների կողմից այդ կանոնների կիրառումը: Բոլորի տակ հասկացվում են և՛ պետական, և՛ ոչ պետական կազմակերպությունները, վերացող պետական հատվածի և ընդլայնվող մասնավոր հատվածի ձեռնարկությունները, բաց շուկայական տնտեսությունում գործող ներքին և արտաքին գործակալությունները, ֆինանսական միջնորդներն ու բրոքերները, ինչպես նաև տնային տնտեսությունները:

Նշենք, որ այստեղ կարող է առաջանալ որոշակի երկիմաստություն, քանի որ տնտեսագետները «ինստիտուտ» բառը հաճախ օգտագործում են «կազմակերպության» կամ «կառուցվածքի» իմաստով, օրինակ, նկատի ունենալով ֆինանսական կամ պետական ինստիտուտները: Մենք նկատի ունենք այն ինստիտուտները, որոնք կազմակերպում, վերահսկում և ձևավորում են տնտեսական գործընթացներ, որպեսզի, հաշվի առնելով սոցիալական վերարտադրության գործընթացի բոլոր մասնակիցների շահերը, ապահովեն իրենց բավական հարթ ընթացքը: Այստեղ կարելի համանմանություններ բերել ճանապարհային երթևեկության կանոնների հետ, որոնք սահմանում են հասարակական ճանապարհների օգտագործման կարգուկանոնը, բայց հնարավոր արտաքին ազդեցությունների պատճառով պարտադիր են նաև մասնավոր փոխադրամիջոցների սեփականատերերի համար: Շարունակելով այս համանմանությունները՝ կարելի է ասել, որ ինստիտուտները հաստատում են ինչպես արագության սահմանը, այնպես էլ դրա բարձրացման համար տուգանքի մեծությունը:

Բացի այդ, շուկայական ինստիտուտները ներառում են նաև ձեռնարկատերերի միջև պայմանագրերը և արբիտրաժային կամ դատական ընթացակարգերը՝ վաճառողի և գնորդի միջև ապրանքի կամ ծառայության փոխհամաձայնեցված գինը, անորակ արտադրանքի մատակարարման բողոքարկումը, ինչպես նաև սպառողների միությունները, որոնք արտադրողների և վաճառողների հետ վեճերում ամրացնում են սպառողների շուկայական դիրքերը: Ընդհանուր առմամբ ինստիտուտներն իրենցից ներկայացնում են հետևյալը՝

- Օրենքով կամ ավանդույթով կարգավորվող ընթացակարգեր և վարվելակերպի կանոններ:
- Շուկայական սուբյեկտների շահերը պաշտպանող օրենսդրական և կարգավորող նորմեր:
- Տարբեր շուկայական սուբյեկտների պահանջմունքները բավարարող կազմակերպություններ և վարչական/քաղաքական կառուցվածքներ. սկսած կառավարությունից և կենտրոնական բանկից մինչև արժեթղ-

թերի շուկայի և հակամենաշնորհային մարմիններ (նախատեսված են տնտեսական սուբյեկտներին ստիպելու հետևել հատուկ օրենսդրական նորմերին՝ ի շահ ամբողջ սոցիալ-տնտեսական համակարգի), առևտրային բանկեր ու ապրանքային շուկա:

- Շուկայական մշակույթը և մտածելակերպը ներառող ինստիտուտներ:

Այս առումով, ինստիտուտները ոչ միայն ձևավորվում և հիմնադրվում են, դրանք նաև ստիպված են լինում սովորել: Բացի այդ, ակնհայտ է, որ այդ ուսուցման գործընթացը (նույնիսկ եթե համապատասխանող ձգտումը մեծ է) պետք է լինի երկարատև ու աստիճանական, քանի որ սոցիալիստական համակարգում և պլանային տնտեսության մշակույթում արմատավորված մշակույթը և մտածելակերպը ոչ մի քաղաքական ակտով հնարավոր չէ արմատական կերպով վերափոխել կապիտալիստական (շուկայական) անալոգների:

Շուկայական խաղի կանոններին հետևելու համար պահանջվում են համապատասխան գիտելիքներ, որոնք ոչ միշտ կարելի է ստանալ դասագրքերից կամ այլ աղբյուրներից: Այստեղ կարևոր դեր ունի անձնական փորձը: Անհրաժեշտ է նաև ձևավորել հատուկ գիտելիքներ և սովորություններ, որոնց անհրաժեշտությունը նախորդ համակարգում գործնականորեն չի եղել: Նոր պայմաններում հին սովորությունները (այսպես ասած, հին, ոչ շուկայական մշակույթը) վեր են ածվում բեռի, որից անհրաժեշտ է ազատվել, հատկապես շուկայական մեխանիզմների հաջող ուսումնասիրության ճանապարհով: Դա փորձի վրա հիմնված ուսուցում է, որի համար անհրաժեշտ է երկար ժամանակ: Սակայն, այն երկրներում, որտեղ մինչև 1989թ. շուկայական բարեփոխումներն արդեն բավական հեռուն էին գնացել, ավելի քիչ ժամանակ է պահանջվում, քան այնտեղ, որտեղ ինստիտուտները մեծ մասամբ համապատասխանել են «ուղղափառ» խորհրդային մոդելին: Ահա թե ինչու անցումային անկումն ավելի կարճ տևեց Լեհաստանում և Հունգարիայում, քան, օրինակ, Ռումինիայում, Ուկրաինայում կամ Հայաստանում:

Մտածելակերպի փոփոխությունները, որոնք, ի լրումն համակարգային վերափոխումների, բնավ չեն սահմանափակվում միայն տնտեսական ոլորտով, այլ նաև իրենց ազդեցությունն են ունենում քաղաքական, սոցիալական և մշակութային ոլորտների վրա, նույնպես դանդաղ են ընթանում: Մտավորականներն ու ժամանակակից տնտեսագետները, ինչպես նաև առաջադեմ քաղաքական գործիչները ցանկանում են, որ այդ փոփոխությունները որքան հնարավոր է շուտ հաստատվեն ինչպես նոր ձևավորվող տնտեսական կառուցվածքում և այն իրագործողների, այնպես էլ տնտեսական սուբյեկտների և բնակչության շրջանում, քանի որ վերջիններս ստիպված են լինելու հետևել խիստ բյուջետային սահմանափակումների և գլոբալ մրցակցության նոր պայ-

մաններին: Սակայն այն իրագործողները հետ են ընկնում իրենց ավելի որակավորված առաջնորդներից, որոնք, ենթադրվում է, որ գիտեն, թե ինչպես գտնել նորաստեղծ շուկայական տնտեսության դեպի *terra incognita* տանող ճանապարհը, և համառություն կցուցաբերեն այդ «անվերջ ճանապարհորդության մեջ»՝ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար: Որոշ ժամանակ անց կյանքի նոր միջոցները սովորական են դառնում նաև բնակչության ավելի լայն շերտերի համար, որոնք տվյալ բարդ առաքելության առաջապահներից չեն և ընդունակ չեն դրա հետագա նպատակները լուրջ ընդունել: Արդյունքում՝ նրանք միայն դանդաղեցնում են առաջընթացը: Այսպիսով, յուրաքանչյուր պտուղ հասունանում է իր ժամանակին:

1990-ականների կեսերին Ա.Օսլունդը եկել է այն եզրակացության, որ Ռուսաստանն արդեն վերածվել է շուկայական տնտեսությամբ երկրի, բայց մարդիկ դա դեռ չեն գիտակցում [7]: Սակայն, եթե բնակչությունը չի կարողանում բավականաչափ հասկանալ շուկայական տնտեսության բնույթն ու մեխանիզմները և, հետևաբար, հավանություն չի տալիս անցկացվող քաղաքականությանը (որը ողջունում են կառավարող տնտեսագետները), ապա դա ոչ թե շուկայական, այլ շուկայականին անցնելու գործընթացում գտնվող տնտեսություն է [8]: Այս իմաստով, ԿԱԵ երկրներում համակարգային վերափոխումները դեռ շարունակվում են, չնայած դրանք արդեն ԵՄ անդամներ են: Ճիշտ է, վերջինս ունի իր կազմակերպությանն անդամագրվելու այլ չափանիշներ և շուկայական տնտեսությանն անցնելու մեր առաջընթացը, ինչպես երևում է, նրա կողմից դիտարկվում է որպես ավելորդ լավատեսություն:

Նման արգելքները, որոնք մասամբ կազմակերպական, մասամբ մշակութային, իսկ ավելի լայն իմաստով՝ քաղաքակրթական բնույթ են կրում, դանդաղեցնելով շուկայական մշակույթի «կրիտիկական զանգված»-ին հասնելու գործընթացը, հանդես են գալիս որպես տնտեսական աճը սահմանափակող գլխավոր գործոններ (առանց նյութական ենթակառուցվածքների և ֆինանսական կապիտալի առկայության): Հենց այդ արգելքներով էլ զգալի չափով պայմանավորվում են տեսականորեն հնարավոր և իրականում ձեռք բերված զարգացման տեմպերի միջև խզման առկայությունն ու դրա մեծությունը: Սակայն, եթե դա այդպես է, ապա կարելի է խոսել տվյալ ինստիտուցիոնալ պայմաններում աճի բարձր տեմպերի ապահովման իրական հնարավորությունների ավելորդ լավատեսական գնահատականների մասին:

Ինստիտուցիոնալ կապիտալի անբավարարության պայմաններում հնարավոր չէ լավ օգտագործել առկա սոցիալական, մարդկային, ֆինանսական և հիմնական կապիտալը: Հետևաբար, անհրաժեշտ է երկակի մոտեցում: Մի կողմից, անհրաժեշտ է ինստիտուտների էվոլյուցիան մշտապես պահել ցանկալի ուղղությամբ (որը ներառում է դրանց ձևավորումը, կառուցվածքը, կա-

յացվածությունը և ուսուցումը), իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ է համբերատար սպասել, «քանի դեռ հոգիները չեն հասունացել»՝ միաժամանակ խթանելով այդ գործընթացը որպես առաջընթացի անհրաժեշտության մասին մարդկանց համոզելու միջոց[1]:

Ընդունված է, որ վերջին տասնամյակում ամերիկյան տնտեսության ձեռք բերած արտադրության և սպառման ավելի նշանակալի մակարդակներն ու աճի զգալի բարձր տեմպերը գլխավորապես պայմանավորված են եղել ինստիտուտների բարձր արդյունավետությամբ և ոչ թե անցկացվող տնտեսական քաղաքականության առավելությամբ: Ամերիկյան ինստիտուտները եվրոպականների պես բյուրոկրատացված չեն, և դրանք ձեռներեցության զարգացման ու ձեռնարկությունների մրցունակության բարձրացման համար ստեղծում են ավելի բարենպաստ միջավայր: Ամերիկյան փորձի հիման վրա կարելի է հանգել մի քանի եզրակացության, որոնք կարող են ուղեցույց ծառայել գործող ինստիտուտների ու դրանց քաղաքականության վերափոխման համար:

5. Լա՞վ է, թե՞ վատ

Համակարգային վերափոխումների և տնտեսական աճի հետ կապված տնտեսական առավելությունների սոցիալական ընկալումը լավագույն դեպքում եղել է զգուշությամբ [9]: Հետխորհրդային երկրներում բնակչության մեծ խմբերն իրականության գնահատման հարցում ավելի քիչ լավատես կամ ավելի հոռետես են, քան նրանց, այսպես կոչված, վերնախավը և տնտեսագետները:

Տարբեր երկրների բնակչությունների ընկալմամբ, կյանքի որակի և համապատասխան բավարարվածության/անբավարարվածության մակարդակների համեմատումը նրանց զարմանալի արդյունքներ է մատուցում: Հետևյալ ինը գործոնների հաշվով՝ տուն, ընտանիք, շրջան, առողջություն, հասարակական կյանք, անձնական անվտանգություն, աշխատանք, եկամուտ և առողջապահություն: Պարզվում է, որ Եվրամիության հին անդամ երկրներից (ԵՄ-15) կյանքի բավարարվածության առավել բարձր ցուցանիշները նշվում են Դանիայում և Ավստրիայում (համապատասխանաբար 91% և 89%), իսկ ամենացածրը՝ Իտալիայում և Պորտուգալիայում (72% և 71%): Այս գնահատումներում առավել կարևոր գործոն է բնակարանից, ընտանիքից, հասարակական կյանքից և բնակավայրից բավարարվածությունը: Եվրամիության նոր անդամ երկրներից (ԵՄ-10) կյանքի բավարարվածությունն առավելապես դրսևորվում է Սլովենիայում (81%, որը գերազանցում է Մեծ Բրիտանիային,

[1] Հարկադրական միջոցներն այստեղ չեն օգնի, ընդհակառակը, դրանք միայն փոփոխությունների նկատմամբ աճող դիմադրություն կառաջացնեն: Մենք դա ներկայումս տեսնում ենք հետխորհրդային բոլոր երկրներում, չնայած նման բողոքների մեծություններն այդ երկրներում, հասկանալի պատճառներով, միատեսակ չեն:

Գերմանիային, Իսպանիային, Իտալիային և Պորտուգալիային) ու Չեխիայի Հանրապետությունում (70%), իսկ անվանացանկը եզրափակում են Լիտվան (59%) և Լատվիան (55%):

Հետխորհրդային երկրներում կյանքի բավարարվածության հարաբերական ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է տնտեսական գործոններով, ինչպիսիք են աշխատանքային պայմանները, եկամուտներն ու բժշկական ծառայությունների մատչելիությունը, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել երկարաժամկետ տնտեսական քաղաքականության մշակման ժամանակ: Ինչ վերաբերում է Լեհաստանին, ապա բավարարվածության միջին ցուցանիշը (64%) լրացվում է ընտանեկան կյանքի, բնակարանի ու հասարակական կյանքի բավարարվածության հարաբերական մեծ մակարդակով (համապատասխանաբար 85%, 84% և 80%) և աշխատանքի, եկամտի ու առողջապահական համակարգի ավելի սահմանափակ բավարարվածությամբ (համապատասխանաբար 46%, 33% և 32%): Աչքի է ընկնում նաև այն փաստը, որ կյանքի ամենացածր որակն այնտեղ է, որտեղ կյանքի չափանիշները որոշվում են քաղաքականությամբ, իսկ հարաբերականորեն բարձր է այնտեղ, որտեղ քաղաքականությունը մեծ վնասներ չի կարող հասցնել, քանի որ մարդիկ իրենք են հոգ տանում իրենց մասին: Այսպիսով, անհրաժեշտ է խթանել արագ տնտեսական աճը, քանի որ տվյալ ոլորտում լուրջ բարեփոխումների իրականացումը հնարավոր է միայն դրա հիման վրա [4, c. 43]:

Որքան հասարակությունը տնտեսական վերլուծություններից և սոցիալական ցուցանիշներից հետևող գնահատականից ավելի վատ է գնահատում իրավիճակը, այնքան անհրաժեշտ է ավելի արագ գնալ առաջ: Այդ դեպքում տնտեսական քաղաքականությունը պետք է ենթարկվի այդ պահանջին: Ոչ ոք կասկածի տակ չի դնում ինստիտուտների հիմնարար դերը, բայց քաղաքականությունը ևս կարևոր է: Նաև ակնհայտ է, որ նույնիսկ ամենաբարձրորակ ինստիտուտները (որոնցից անցումային տնտեսությամբ երկրները դեռ շատ հեռու են) ավտոմատ կերպով լավ քաղաքականություն չեն երաշխավորում:

Անհրաժեշտ է կառուցողական կերպով օգտագործել և՛ ինստիտուտները, և՛ քաղաքականությունը: Այն երկրները, որոնց դա չի հաջողվել (ճիշտ է, դրանք շատ չեն), նույնպես շարունակել են իրենց զարգացումը: 21-րդ դարի սկզբում մեկ շնչի հաշվով ՀՆԱ մակարդակների լուրջ տարբերություններ են գրանցվում ինչպես ԵՄ շրջանակներում, այնպես էլ ԵՄ անդամ երկրների և աշխարհի մյուս առավել զարգացած երկրների միջև (տե՛ս *գծանկար 1):* Ներկայումս ԱՄՆ ՀՆԱ-ն գերազանցում է ԵՄ-15-ի միջին ցուցանիշը ավելի քան 40%-ով: Օրինակ, եթե Լեհաստանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է ԵՄ-15-ի միջին ցուցանիշի մոտ 38%-ը, ապա ԱՄՆ-ի համեմատ այն կազմում է 27% [4, c. 44]:

Գծանկար 1

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն հաշվարկված գնողունակության համարժեքով (ԳՀՍ միավորներով)*



*ԳՀՍ - գնողունակության համարժեքի ստանդարտ, միավոր, որը յուրաքանչյուր համեմատվող երկրում նմանատիպ ապրանքների և ծառայությունների զամբյուղն է, որն անկախ է գների փոփոխման մակարդակից: 1 ԳՀՍ-ն մոտավորապես հավասար է 1 եվրո: Գնահատականները 2002թ. համար են:

Աղբյուրը՝ *European Commission. Panorama of the European Union. Brussels, 2004.*

Հաշվի առնելով ԵՄ նոր անդամների և հարուստ երկրների միջև կենսամակարդակի և արտադրության ծավալների մեծ խզումը՝ տոկոսային կետի ցանկացած բաժին և ՀՆԱ մեծացման յուրաքանչյուր եռամսյակ ազդում են տնտեսական աճի ծավալների վրա: Վերջին հաշվով, երկար ժամկետը կազմված է կարճ ժամանակային հատվածներից, և որքան բարձր է լինում սկզբնական մակարդակը, այնքան ավելի շատ է լինում արտադրության աճը (բացարձակ մեծություններով): Համապատասխանաբար, «ավելորդ» կայունացման ծրագիրը և տնտեսության աննախադեպ «սառեցումը» ոչ միայն թանկ են արժեցել անցյալում (օրինակ՝ Լեհաստանի այժմյան ՀՆԱ-ն 20%-ով պակաս է, քան այն կարող էր լինել, եթե տնտեսական քաղաքականության այս սխալները չլինեին), այլ նաև դրանք իրենց բացասական ազդեցությունը կունենան ապագայում: Լուսաբանենք այս միտքը: Եթե ընդունենք, որ այսօրվա մեկ շնչի հաշվով ՀՆԱ սկզբնական մակարդակը հավասար է $10000, ապա 3% տարեկան միջին աճի տեմպի դեպքում 15 և 25 տարի անց այն կկազմի համապատասխանաբար $15580 և $20940, 4%-ի դեպքում այն կկազմի համապատասխանաբար $18000 և $26660, իսկ 5%-ի դեպքում՝ $20790 և $33860: Եթե աճի տեմպերի ցուցանիշը մեկ սերնդի ընթացքում տատանվի վերջին մեծության

շուրջը, ապա նույնիսկ մեկ հազարերորդականի տարբերությունն էլ նշանակություն ունի, քանի որ մեկ քառորդ դարում այն տալիս է $400 լրացուցիչ եկամուտ: Այդ իսկ պատճառով էլ դրույքները բարձր են [4, c. 44]:

6. «Մոխրագույն գոտին» քաղաքականությունում

Մշտապես առկա է նաև քաղաքականության «պայքար իշխանության համար» ասպեկտը: Ոմանք փորձում են մնալ իշխանությունում, ոմանք էլ իշխանության են ձգտում, հետևաբար, հաճախ զարգացմանը նպաստող և կառուցվածքային բարեփոխումների աճի արագացմանն ուղղված որոշումներն արգելափակվում են, ինչը բացասական ազդեցություն է ունենում տնտեսական դինամիկայի վրա: Նման մոտեցման դեպքում, քաղաքականության արդյունավետությունը գնահատվում է դրա կողմնակիցների շահերի տեսանկյունից և ոչ թե աճի միտումների բարձրացմամբ, ինչը շատ դեպքերում հանգեցնում է իշխանության թուլացման: Արդյունքում՝ չնայած երկրներում շուկայական ինստիտուտների հաջող ամրապնդմանը, աճը դանդաղում է:

Այսպիսով, ինստիտուտները «կանոնների բազմություն են, որոնցով տնտեսության մեջ ձևավորվում են շարժառիթներն ու սահմանվում տնտեսական միավորների փոխգործակցության ձևերը»: Ինստիտուցիոնալ հենքը, որը վերաբերում է և՛ հանրային (պետական), և՛ մասնավոր ինստիտուտներին, «կարևոր դեր է խաղում այն հարցում, թե ինչպես են հասարակությունների մեջ բաշխվում բարիքները և ինչպես են հասարակությունները կրում զարգացմանն ուղղված ռազմավարությունների և քաղաքականությունների իրականացման համար պահանջվող ծախսերը: Ինստիտուցիոնալ հենքն ազդում է ներդրումներ կատարելու որոշումների և արտադրության կազմակերպության վրա… Կարճաժամկետ կտրվածքում ինստիտուտներն ավելի դժվար են ենթարկվում փոփոխությունների, քանի որ սահմանակարգային բարեփոխումները հաճախ բախվում են արդեն խոր արմատացած մարդկային վարքագծի» [10, էջ 33-34]:

Անդրադառնալով Հայաստանին՝ նշենք, որ համաձայն Հայաստանի ազգային մրցունակության զեկույցի, հանրային կամ պետական ինստիտուտներով Հայաստանը 131 երկրների մեջ զբաղեցրել է 92-րդ տեղը: Հայաստանն ունեցել է համեմատաբար լավ (սակայն նախորդ տարվա համեմատ վատթարացող) կատարողական՝ մասնավոր ընկերությունների գործունեության համար անվտանգություն ապահովելու առումով, ինչը վերաբերում է մասնավորապես գործարարության վրա ահաբեկչության ազդեցությանը, գործարարության վրա հանցագործությունների ու բռնությունների ազդեցությանը, ոստիկանության ծառայությունների հուսալիությանը, կազմակերպված հանցագործության առկայությանը: Հանրային ինստիտուտներին առնչվող լուրջ խնդիր-

ները, որոնցով Հայաստանը հետ է մնացել երկրների մեծամասնությունից և նախորդ տարվա համեմատ զգալիորեն զիջել է դիրքերը, ներկայացնում են օրենքների թույլ գործնական կիրարկումը, դատական համակարգի անբավարար անկախությունը (120-րդ տեղ), կառավարության որոշումների մեջ հովանավորչությունն ու կողմնապահությունը (110-րդ տեղ), քաղաքական գործիչների հանդեպ վստահության ցածր մակարդակը (108-րդ տեղ), կոռուպցիայի հետևանքով պետական միջոցների օգտագործման ցածր արդյունավետությունը (106-րդ տեղ, իջել է 21 տեղով): Մասնավոր ինստիտուտներով Հայաստանը զբաղեցրել է միայն 115-րդ տեղը 131 երկրների շարքում, ինչը խոսում է մասնավոր ինստիտուտների ցածրորակության մասին: Խիստ կարիք կա մասնավոր հատվածի ունակությունների և կարողությունների բարելավման՝ դրանց ժամանակակից կառավարման ու կորպորատիվ բարոյականության (էթիկայի) վերաբերյալ գիտելիքներով ու գործելակերպերով զինելու միջոցով: Բարելավման մեծ կարիք ունեցող բնագավառներն են, մասնավորապես՝

ա) այլ ընկերությունների, հանրային կամ պետական հաստատությունների և հաճախորդների հետ փոխգործակցելու վարքագծի բարոյական կանոնները,

բ) ընկերությունների բարձրաստիճան ղեկավարների հաշվետվողականությունը,

գ) փոքր բաժնեմասով բաժնետերերի շահերի պաշտպանությունը,

դ) ֆինանսական աուդիտի և հաշվետվությունների ներկայացման չափանիշների ու պահանջների կատարումը:

7. Գնահատականներ, զգուշացումներ և առաջարկություններ

Այսպիսով, հնարավոր և իրական աճի տեմպերի միջև խզման մասին հարցի պատասխանը միաժամանակ և՛ աննշան է, և՛ խոր թափանցում է խնդրի էության մեջ. այս խզումը պայմանավորված է ընտրված տնտեսական քաղաքականության թերություններով, ի տարբերություն այն քաղաքականության, որը կարող էր իրականացվել առկա կառուցվածքային, ինստիտուցիոնալ և մշակութային միջավայրում: Այստեղ հարց է առաջանում, որ եթե այդպիսի քաղաքականությունը հնարավոր է եղել, ապա այն ինչո՞ւ չի իրականացվել: Բայց չէ՞ր կարող արդյոք այդ նույն միջավայրը ոչ միայն արգելակել, այլ նաև խոչընդոտել աճի տեմպերն իրենց տեսական առավելագույնին հասցնելուն ուղղված քաղաքականության իրականացմանը: Հարցն առաջին հայացքից պարզ է, հատկապես շարունակական քննարկումների ընթացքում բազմիցս հնչող երկու տարբեր տեսանկյունների համատեքստում:

Մի կողմից, իրական քաղաքականության հետևողներն ու քննադատները՝ գիտնականները, տեսաբանները, մեկնաբանները, փորձագետները, վերլուծաբանները և այլք, որպես կանոն, հավաստում են, որ կարելի է ավելի լավ

աշխատել և հասնել ավելիին: Մասնավորապես, նրանք մատնանշում են, որ արտադրության և մատուցվող ծառայությունների ծավալները կարող են աճել ավելի արագ: Մյուս կողմից, քաղաքականություն վարողները՝ կառավարությունը, կենտրոնական բանկը, քաղաքական գործիչները, կառավարող կոալիցիայի կողմնակիցները, տարածքային կառավարման մարմինները, համարում են, որ ներկայումս աճի ավելի բարձր տեմպերն անհասանելի են, և դրանց բարձրացումը միայն կանխատեսում են հեռու կամ մոտ ապագայում:

Այն ժամանակ, երբ պասիվ մեկնաբանները (հետևողներն ու քննադատները) լիովին համաձայն են, որ գոյություն ունի աճի այլ՝ ավելի արագ հետագիծ, ակտիվ մասնակիցները նրանց հետ միասնական կարծիքի չեն: Ավելի վատն այն է, որ ակտիվ խմբի անդամները սովորաբար ընդունակ չեն նախընտրելի ուղղության և գործողությունների մեթոդների վերաբերյալ որոշակի համաձայնության գալու: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ այս ֆենոմենը նկատվում է ամենուր, նույնիսկ տնտեսության ամենաժամանակակից կառուցվածքով և առավել հասուն շուկայական ինստիտուտներով բնորոշվող երկրներում, ներառյալ ԱՄՆ-ում [11]: Սակայն, այստեղ հարցը միայն տարբեր դիրքերի միջև հակասությունները չեն. գլխավոր խնդիրն այն է, որ նրանց կողմից կիրառվող միջոցները հաճախ վատ են կոորդինացվում, իսկ ձեռք բերված փոխզիջումները զուրկ են կառուցողական բովանդակությունից: «Տնտեսական քաղաքականություն» տերմինն ինքնին առաջացնում է մշտապես քննարկումներ պահանջող բազմաթիվ հարցեր:

Նախ և առաջ, դրական արդյունքներ ապահովելու համար քաղաքականությունը պետք է հիմնված լինի տեսլականների վրա և միաժամանակ զուրկ լինի պատրանքներից: Առանց տեսլականի՝ քաղաքականությունը բնորոշվում է անկատարությամբ, անորոշությամբ և, իհարկե, անհամոզչությամբ: Այն նման է անվերջ ճանապարհորդության: Լավ քաղաքականությունը կարող է ձևավորվել և իրականացվել միայն լավ տնտեսագիտական տեսության հիման վրա: Երկարաժամկետ տեսլականը պետք է միաժամանակ լինի հավակնոտ և իրական՝ հանդես գալով որպես հասարակության զարգացման ճիշտ ուղղության և դրա սպասելիքների բավարարման միջոցների ուղեցույց: Այն պետք է խթանի մարդկանց մտավախությունների ձևավորմանը, բայց, միևնույն ժամանակ, պետք է սահմանափակի ակնկալիքները խելամիտ շրջանակներում, որպեսզի ժամանակի ընթացքում հնարավոր լինի դրանք բավարարել: Եթե գործնականում այդպիսի «տեսլականի» բացակայությունը քողարկվում է «դրական շոկերի» կամ «քաղաքակրթական անցումների» դեկլարատիվ պատրանքներով և ընտրությունների նախաշեմին «վատ գույնով նկարված» քաղաքական հեռանկարով, ապա աճի հեռանկարներն այնքան էլ հուսալի չեն թվում:

Երկրորդ՝ քաղաքականությունը պետք է հիմնվի տնտեսության և դրա աճի մեխանիզմները նկարագրող տեսության վրա: Վատ տեսությունը կարող է միայն հիմք ծառայել վատ քաղաքականության համար: Լավ քաղաքականությունը կարող է ձևավորվել և իրականացվել միայն լավ տնտեսագիտական տեսության հիման վրա: Տնտեսական քաղաքականության հաջող իրականացման, այսինքն՝ տնտեսական շուկայական խաղի մասնակիցների վրա կանխամտածված և իմաստալից ազդեցության կիրառման, այն է՝ ձեռնարկությունների մրցունակության բարձրացման և անհատական ու կորպորատիվ հատվածի արդյունավետ գործունեության հիման վրա հասարակության պահանջմունքների առավելաչափ բավարարման համար հսկայական գիտելիքներ են անհրաժեշտ: Դրանք պետք հիմնվեն ոչ միայն գործնական փորձի, այլև, առաջին հերթին, հուսալի տնտեսագիտական տեսության վրա, որը, դժբախտաբար, ոչ միշտ է հասանելի: Մ.Կալեցկին վաղուց նկատել է, որ հակառակ տարածված կարծիքի՝ միայն նախորդ սերնդի քաղաքական գործիչներն են լսում տնտեսագետներին: Բայց նույնիսկ ժամանակակից տնտեսագետները կարգավորում են միայն տնտեսության տեսության առանձին մասնիկները, որոշ էմպիրիկ արդյունքներ և քննարկումների հատվածներ: Դա հատկապես նկատվում է հետխորհրդային բարեփոխումների պայմաններում [4, c. 47]:

Սակայն, հիմնական խնդիրն այն է, որ գոյություն ունեն միմյանց հակասող բազմաթիվ մոտեցումներ, որոնք, անշուշտ, կարող են ոչ պակաս ուղիներ հարթել «դեպի դժոխք»: Հետևաբար, քաղաքական գործիչները մշտապես կանգնում են հետևյալ խնդրի առաջ՝ ում լսել և ում բացառել, որ մտքերն օգտագործել և որոնք՝ ժխտել: Համապատասխանաբար, սխալների ռիսկը մեծանում է շատ քաղաքական գործիչների տգիտությունից, ինչպես նաև նրանից, որ տնտեսագիտությունից որոշակի չափով հասկացողներն էլ հաճախ քաղաքական վրիպումներ են թույլ տալիս: Այդպիսին է տնտեսության տեսության բնույթը: Ավելին, երկխոսության և համաձայնության գալու, ճկունության և բացահայտության ձգտումը, շատ դեպքերում արդարացված լինելով, հաճախ տեղի է ունենում ի վնաս մեթոդաբանական ու իրական ճշմարտության և ակադեմիական բծախնդրության: Միջին մեծություններն օգտակար են վիճակագրությունում, բայց ոչ տնտեսության զարգացման և աճի տեսության մեջ: Արդյունավետ քաղաքականությունը «միջինացվածության» արդյունք չի կարող լինել, երբ մասնիկների մի մասը վերցվում է մի գիտական մոտեցումից, իսկ մյուսներն էլ՝ մեկ այլ մոտեցումից, և տեղի է ունենում մոնետարիզմի և նեոքեյնսականության, նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության և շվեդական դպրոցի, սոցիալիզմի և կապիտալիզմի խառնակցում, որի հիմնական նպատակը քննարկողների ցանկությունները հնարավորինս շատ բավարարելն է:

Մեր հետխորհրդային իրականությունում հատկապես կործանարար

բնույթ են կրում սոցիալ-ժողովրդավարական ոգու ձախակողմյան մտքերը զարգացած կապիտալիզմի կիրառելի տեսության համատեքստից «պոկված» նեոազատական տնտեսագիտության մասնիկների հետ համադրելու փորձերը [12]:

Երրորդ՝ մոտեցումների բազմաձևությունը բազմաթիվ շահեր է քողարկում: Որպեսզի պարզենք, թե ինչու են այս կամ այն մոտեցումները հաղթում, անհրաժեշտ է ավելի ուշադիր հետևել միմյանց հետ բախվող շահերի կազմվածքին, քան տեսությունների փոփոխություններին: Քանզի ամեն դեպքում կարևոր են միմյանցից տարբերվող շահերը, այլ ոչ թե հայացքները: Վերջին հաշվով, իշխում են ինչ-որ շահեր և ոչ թե ինչ-որ դիրքեր: Այս համատեքստում շահերն առաջնային են, հայացքները՝ երկրորդական: Վերջիններս հաճախ հանդիսանում են առք ու վաճառքի առարկա և նույնիսկ որպես մտավոր կաշառակերություն:

Վերը նշվածի լավագույն օրինակը վերջին տարիներին տեսականորեն սխալ և գործնականորեն վնասակար հարթ հարկային համակարգի անցման լոբբինգն է: Այն սխալ է ինչպես ազգային ներդրումների խթանման հնարավորությունների, այնպես էլ եկամտի սոցիալապես արդար վերաբաշխման ապահովման տեսանկյունից: Այս երկու ասպեկտներն անբաժանելի են, քանի որ անցումը հարթ հարկային համակարգի նշանակում է որոշակի մեծության զուտ եկամտի փոխանցումը աղքատներից հարուստներին, ինչն անխուսափելիորեն բերում է մակրոմակարդակում խնայողության ուղղվածության նվազման: Անցումային շրջանի անցած ավելի քան 15 տարիները հաստատել են այդ փաստը: Նման քաղաքականությունը, խթանելով թանկարժեք ապրանքների ներմուծումը և կապիտալի արտահոսքը, ակնհայտորեն մեծացնում է առևտրային անհաշվեկշռվածությունը: Վերջին հաշվով, տնտեսության ռեսուրսները դառնում են ավելի քիչ: «Հարթ» հարկային համակարգը ոչ միայն անարդար է, այն առաջին հերթին, ապակայունացնող ազդեցություն է թողնում՝ նվազեցնելով արտադրության արդյունավետությունը, որը տնտեսական աճի հեռանկարների վրա բացասական ազդեցություն է նշանակում:

Չորրորդ՝ ճիշտ տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացումը որոշիչ քաղաքական ղեկավարում է պահանջում: Որոշում կայացնող քաղաքական գործիչները պետք է իմանան, թե ինչ են իրենք ցանկանում. մենք, իրոք, պետք է իմանանք «ինչ բեռ ենք վերցնում և ուր ենք գնում»: Առանց այսպիսի գիտելիքի նույնիսկ լավ տեսությունը չի օգնի, քանի որ շատ քիչ մարդիկ գիտեն ինչպես այն օգտագործել: Եթե որոշում կայացնող քաղաքական գործիչները չգիտեն հարցերը, ապա ճիշտ պատասխանները նրանց քիչ օգուտ կբերեն:

Հինգերորդ՝ քաղաքականությունը համակարգման արվեստն է: Տնտեսական գործունեության բարդ բնույթը պայմանավորում է միաժամանակ

ամենատարբեր հարցերով զբաղվելու անհրաժեշտությունը: Իհարկե, դրանցից մեկն ավելի կարևոր ու հրատապ է մյուսների համեմատ: Կարևորն ու հրատապը բացահայտելու, ինչպես նաև հիմնական և ռազմավարական խնդիրներն առօրյա, սովորականներից տարբերելու ունակությունը հատուկ պարգև է, որով օժտված են ոչ բոլոր քաղաքական գործիչները: Մի կողմից, քաղաքականությունը կարելի է համեմատել մեծ ընկերության կամ կազմակերպության կառավարման հետ, որտեղ անհրաժեշտ է ակնթարթորեն ընդունել ամենատարբեր որոշումներ (երբեմն նաև ճգնաժամային իրավիճակում) հաճախ ներքին ճնշման և ոչ լիարժեք տեղեկատվության պայմաններում: Մյուս կողմից, սա հայացքների ընդլայնվածությունը, հեռանկարային պատկերացումները և խնդիրները խորությամբ քննարկելու ունակություններ պահանջող ռազմավարական գործունեություն է: Անհրաժեշտ է նաև կառուցողական կերպով համագործակցել սեփական գաղափարակիցների և մասնագետների, օտարերկրյա և, ամենակարևորը, սոցիալական գործընկերների հետ: Եթե հաջողվում է հասնել բոլոր այս բաղադրիչների որոշ աստիճանի համակարգմանը, նվազագույնի հասցնել «տեղեկատվական աղմուկը» և որոշում կայացնելու շտապողականությունը, ապա քաղաքական «մեքենան աշխատում է», որի դեպքում կայացված որոշումները միմյանց չեն հակասում, դրական հակադարձ կապի ուղիներն աշխատում են, ցանկալի գործընթացների ճանապարհին խոչընդոտները վերանում են, և ժամանակի ընթացքում տնտեսությունում սկսվում են ի հայտ գալ երկար սպասված արդյունքները՝ այն սկսում է աճել:

Վերջապես վեցերորդ՝ քաղաքականությունը բոլոր ոլորտներում, ինչպես նաև տնտեսությունում, հանդես է գալիս որպես համաձայնության գալու արվեստ: Պետք է մշտապես ձգտել ստեղծագործական փոխզիջման, որը «կհեշտացնի» հասարակության հակասական շահերը, կլուծի առանձնահատուկ սոցիալական խմբերի կարճաժամկետ և երկարաժամկետ շահերի, պետության և շրջանների պահանջմունքների, հարկատուների և բյուջեից միջոցներ ստացողների, սպառողների և արտադրողների միջև կոնֆլիկտները: Եթե հնարավոր բախման իրավիճակները չմեղմացվեն քաղաքական գործիքների միջոցով, համաձայնության գալն ավելի բարդ կլինի: Ավելին, բոլորը կամ գրեթե բոլորը պետք է բավարարված լինեն ձեռք բերված արդյունքներով մոտավորապես նույն աստիճանով:

Այսպիսով, ցանկացած կառուցվածքային, ինստիտուցիոնալ և մշակութային պայմաններում լավ տնտեսական քաղաքականության անցկացումը հնարավոր է դառնում, որովհետև այն պետք է դրանց համապատասխանի: Իհարկե, այդ նույն պատճառով քաղաքականությունը կարող է լինել ոչ օպտիմալ կամ ընդհանրապես անպիտան, պատմությունը սրա շատ օրինակներ է տալիս (բավական է հիշել նախկին խորհրդային երկրներում ավելի քան 15

տարի անցումային շրջանի իրադարձությունները):

Խնդիրն այս կամ այն երկրում կոնկրետ իրավիճակներում դրա անհամապատասխանությունն է: Մենք մասնավորապես նկատի ունենք 1990-ականների սկզբում Լեհաստանում և Ռուսաստանում օգտագործված, այսպես կոչված, Վաշինգտոնյան կոնսենսուսի իրավիճակը: Եթե նույնիսկ ինչ-որ քաղաքական հայեցակարգ իրականում «աշխատել» է գործնականում, օրինակ, Չիլիում, դա դեռ չի նշանակում, որ մեր պայմաններում դրա կիրառման արդյունքները պետք է լինեն այդպես հաջող: Պատճառը գոյություն ունեցող ինստիտուտների և առաջարկվող քաղաքական գործիքների անհամապատասխանությունն է: Քաղաքականությունը միշտ անհրաժեշտ է գնահատել՝ ելնելով կոնկրետ պայմաններից և միայն հաշվի առնելով արդյունավետությունը:

Արտաքին պայմանները պետք է դիտարկվեն որպես քաղաքականության համար օբյեկտիվ տվյալներ միայն կարճաժամկետ հեռանկարում: Երկարաժամկետ հեռանկարում աճի և զարգացման կառուցվածքային, ինստիտուցիոնալ և մշակութային պայմանները ստեղծվում, ձևավորվում և փոփոխվում են քաղաքականության կողմից: Լինելով քաղաքականության օբյեկտը՝ դրանք, իրենց հերթին, ազդում են նրա արդյունավետության վրա:

Այլ կերպ, եթե մեր կարճաժամկետ քաղաքականությունը սահմանափակված է գոյություն ունեցող ինստիտուցիոնալ պայմաններով, ապա երկարաժամկետ հեռանկարում մենք կարող ենք դրանք վերածել արտադրության աճն ու սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող գործոնի: Բայց այդպիսի քաղաքականության հաջող անցկացման համար անհրաժեշտ են այլ գիտելիքներ, քան փոխարժեքի և տոկոսադրույքների ուղղումների քաղաքականությունը:

Այսպիսով, հասարակության առաջընթացը երբեք կանգ չի առնում: Սովորելով նախորդ սերունդների փորձից՝ մենք հաջորդներին պետք է փոխանցենք ոչ միայն սրվող հիմնախնդիրներ: Եվ հավանական է, որ իրավացի են նրանք, ովքեր համարում են, որ այս ճանապարհին տնտեսական հաջողության ձեռքբերումն իրական է:

Նոյեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Stiglitz J.*, Globalization and Its Discontents. N.Y. – London, W.W. Norton & Company, 2002 (русс. пер.: Стиглиц Дж. Глобализация: тревожные тенденции. М.: Мысль, 2003).
2. World Economic Outlook 2000. Ch. III. Transition Experience and Policy Issues. Wash., DC, IMF, 2000.

3. *Sen A.*, Development as Freedom. N.Y.: Alfred A. Knopf, 2000.
4. *Колодко Г.,* Политика и экономический рост, “Вопросы экономики”, N7, 2004.
5. *North D.,* The Contribution of the New Institutional Economics to an Understanding of the Transition Problem. – WIDER Annual Lectures, 1997, No 1 (March).
6. *Kornai J.,* The Role of the State in a Post-socialist Economy. – Distinguished Lectures Series, 2001, No 6. Leon Kozminski Academy of Entrepreneurship and Management, Warsaw.
7. *Aslund A.*, How Russia Became a Market Economy. Wash., DC, The Brookings Institution, 1995.
8. *Kolodko G.,* Post-communist Transition. The Thorny Road. Rochester, University of Rochester Press, 2000.
9. European Commission. Perception of Living Conditions in Enlarged Europe. Luxemburg – Dublin, European Foundation for Improvement of Living and Working Conditions, 2004.
10. «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն, Հայաստանի ազգային մրցունակության զեկույց 2008:
11. *Stiglits J.,* The Roaring Nineties. A New History of the World’s Most Prosperous Decade. New York – London, W. W. Norton & Company, 2003.
12. *North D.,* Understanding Economic Change and Economic Growth. – Distinguished Lectures Series, 2002, No 7. Leon Kozminski Academy of Entrepreneurship and Management, Warsaw.

ИНСТИТУТЫ, ПОЛИТИКА И ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ

Давид Ахвердян

Резюме

Несмотря на то, что о предпосылках и перспективах экономического роста сказано, казалось бы, практически все, в статье предпринята попытка рассмотрения некоторых аспектов этого феномена, имеющего жизненное значение для функционирования и развития общества. В статье уделено особое внимание факторам роста и причинам расхождений между потенциальными и реальными темпами роста. В этой связи проанализированы отдельные вопросы, касающиеся взаимодействия, с одной стороны, структуры и функционирования институтов рыночной экономики, а с другой – политики, проводимой в их рамках, и эффективности ее инструментов с акцентом на последствиях для долгосрочной динамики производства.

ՄԱՐՔԵԹԻՆԳԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ

Վարդան Աթոյան, Նարեկ Ղուկասյան

Անցումը շուկայական հարաբերություններին նշանակում է լուրջ բարեփոխումներ ոչ միայն տնտեսության, այլև քաղաքականության, իրավաօրենսդրական բնագավառներում: Ներկայումս այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են մրցակցությունը, ապրանքը, շուկան, գովազդը, դուրս են եկել զուտ տնտեսագիտական երևույթների սահմաններից և դարձել արդի հասարակության քաղաքական կյանքի անբաժան մասը: Ուստի, դրանով և դրա մի շարք այլ օբյեկտիվ հետևանքներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել մշակել քաղաքական շուկայի կարգավորման նոր մոտեցումներ ու մեթոդներ, որոնք իրենց բնույթով նման են տնտեսական շուկայի վերլուծության ու հետազոտության համանման մեթոդներին: Հոդվածը նվիրված է վերոնշյալ խնդիրների քննարկմանը:

Մարքեթինգը տնտեսական և հասարակական գործունեության կարևոր տարատեսակներից է, սակայն այն, կարծում ենք, երբեմն ճիշտ չի ընկալվում: Մարքեթինգի նպատակը ապրանքների ու ծառայությունների որակի բարձրացումն է, դրանց արտադրության պայմանների բարելավումը, որն իր հերթին բերում է կիրառողի երկրում կենսամակարդակի, կյանքի որակի բարձրացման: Ավելի հասկանալի լինելու համար նշենք, որ մարքեթինգի հիմքում ընկած է սպառողների անկախության, պահանջմունքների բավարարման և ազատ ընտրության գաղափարը: Հանրահայտ է, որ այն որպես գիտություն սկզբնավորվել և ձևավորվել է XX դարի 50-ական թվականներին ամերիկացի գիտնական Թեոդոր Լևիտի 1953թ. հրատարակած «Մարքեթինգային կարճատեսություն» հոդվածով: Դրա երևան գալը պայմանավորված էր վաճառահանման բնագավառում եղած դժվարություններով, երբ գերարտադրությունը դարձավ ճգնաժամային և թելադրեց շուկայի իրավիճակի հետազոտման անհրաժեշտություն, որն առավել ցայտուն դրսևորվեց ԱՄՆ-ում: Այդ է պատճառը, որ անգամ այսօր առանձին հետազոտողներ և գործնական մարքեթինգի ոլորտի աշխատողներ պնդում են, որ մարքեթինգը գործում է սոսկ հագեցված շուկայում՝ այն դիտարկելով որպես մրցակցային պայքարի գործիք: Սա մարքեթինգի՝ որպես կառավարման գործիքներից մեկի, շատ նեղ սահմանումն է: Իրականում մարքեթինգը արտադրանքի արտադրության ու վաճառահանման այնպիսի ընդհանուր համակարգ է, որը շուկայի համակողմանի հետազոտ-

ման և կանխագուշակման, ընկերությունների ու ձեռնարկությունների ներքին ու արտաքին միջավայրերի ուսումնասիրման, նրանց ռազմավարական ու մարտավարական գործունեության ծրագրերի մշակման հիման վրա սպառողների պահանջմունքների բավարարումն է և այդ ուղիով ընկերություններին կամ անհատ անձանց որոշակի շահույթի ապահովումը: Լինելով շուկայական տնտեսության ծնունդ՝ այն ինչ-որ չափով նաև ձեռնարկատիրության փիլիսոփայությունն է և ընդգրկում է արժեքի առաջարկման բոլոր փուլերը՝ սկսած գիտահետազոտական ու նախագծակոնստրուկտորական աշխատանքներից մինչև դրանք պատրաստի արտադրանքի տեսքի բերելը, վաճառահանումը և սպասարկումը՝ ենթարկվելով շուկայի պահանջներին:

Մարքեթինգը երաշխավորում է շուկայական հարաբերությունների ընթացքում ծագած կոնֆլիկտները հաղթահարել տարբեր միջոցառումների ու մեթոդների օգնությամբ, որոնք հնարավորություն են ընձեռում հաշվի առնել ինչպես շուկայի հագեցվածության աստիճանը, այնպես էլ մրցակցության ազդեցությունը:

Մարքեթինգն առավել լավ արտահայտվում է զարգացած երկրներում: Սկզբում այն օգտագործվում էր սպառողական և արտադրական նշանակության ապրանքներ թողարկող խոշոր ընկերություններում: Հետո սկսեց կիրառվել և՛ ծառայությունների ոլորտում, և՛ ոչ առևտրային կառուցվածքներում, և՛ պետական կազմակերպություններում ու հաստատություններում: Այսօր մարքեթինգը կիրառվում է մրցակցային պայքարում ներգրավված բոլոր կազմակերպություններում, որպեսզի դրանք համապատասխանեն սպառողների ցանկություններին ու նյութական հնարավորություններին, որոնք բացառապես ազատ են իրենց անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ընտրության մեջ, և, անշուշտ, նրանք ընտրում են լավագույնները:

Կիրառական մարքեթինգի համաշխարհային փորձը գործարար ակտիվության ցանկացած ոլորտում, որտեղ առկա է սուր մրցակցային պայքար, մարքեթինգային գործիքների կիրառման հսկայական փորձ է կուտակել, ինչը հատուկ է միայն տվյալ բնագավառին: Օրինակ՝ արդյունաբերական նշանակության ապրանքների արտադրությունում՝ արդյունաբերական մարքեթինգ, գյուղատնտեսական մթերքների արտադրությունում՝ ագրոմարքեթինգ, ապրանքների և ծառայությունների մանրածախ առևտրում՝ առևտրային մարքեթինգ, ներդրումային գործունեությունում՝ ներդրումային մարքեթինգ, բանկային գործունեությունում՝ բանկային մարքեթինգ, ոչ առևտրային ոլորտում (հիվանդանոցներ, ինստիտուտներ, դպրոցներ)՝ ոչ առևտրային մարքեթինգ, զբոսաշրջության ոլորտում՝ զբոսաշրջության մարքեթինգ և այլն:

Առարկաների բազմաճյուղ ծառ ներկայացնող մարքեթինգային գիտությունների համակարգում համեմատաբար վերջերս առաջացել է ևս մի ճյուղ

կամ ուղղություն՝ քաղաքական մարքեթինգը: Ինչպես մարքեթինգի շատ ճյուղեր՝ քաղաքական մարքեթինգը հանդիսանում է միջառարկայական խառնածնունդ՝ ներառելով միանգամից մի քանի գիտության բնագավառների մեթոդաբանական ռեսուրս՝ հարմարեցված քաղաքական երևույթների ու գործընթացների հետազոտություններին: Դրանց շարքում առավել հատկանշականներն են փիլիսոփայությունը, մշակութաբանությունը, պատմությունը, քաղաքագիտությունը, տնտեսագիտությունը, մենեջմենթը և սոցիոլոգիան:

Ակնհայտ է, որ ներկայիս հասարակությունն աչքի է ընկնում բարձր տեղեկացվածությամբ, ինչը նպաստել է նաև հասարակական ու քաղաքական գործընթացներում նրա ակտիվության ու ներգրավվածության աստիճանի շոշափելի բարձրացմանը: Այդ ամենը, բնականաբար, բացի տեղեկատվական հեղափոխության արդյունք լինելուց, առաջին հերթին քաղաքական ու կառավարման մշակույթի կայացման արդյունք է, այսինքն՝ առաջին «բուրժուական հեղափոխություններից» հետո ընկած ավելի քան երեք հարյուր տարիների ընթացքում նշյալ գործընթացների կազմակերպման բնագավառում մարդկության կուտակած ահռելի փորձի արդյունքն է: Այս փորձն առարկայացած է ոչ միարժեքորեն, ինչի ապացույցն են քաղաքական ու տնտեսական կառավարման բազմաթիվ մոդելների առկայությունն ու միևնույն մոդելների ներսում քաղաքական գործընթացների կազմակերպման ու ուղղորդման տարաբնույթ, սկզբունքորեն իրար հակասող մոտեցումների համագոյությունը:

Հատկանշական է, որ քաղաքական գործընթացների կազմակերպման ու կառավարման գործիքներից շատերի հազարամյա գոյության պայմաններում, այնուամենայնիվ, դրանց կանոնակարգումն ու համընդհանուր ընդունելություն գտած մեկնաբանումները տրվել են վերջին 20-25 տարիների ընթացքում: Նշյալը հիմնականում պայմանավորված է նրանով, որ մարքեթինգը, լինելով տնտեսագիտության համեմատաբար նոր դիսցիպլին, բավական ուշ է ներթափանցել հասարակական կյանքի կանոնակարգման բնագավառ: Մոտ երկու հազարամյակ պետության ու հասարակության ներսում ընթացող գործընթացներին վերաբերող հարցերը քննարկվել են հիմնականում փիլիսոփայության խնդիրների հոլովույթում, և անգամ խոշոր արշավանքների, պետական մակարդակի բանակցությունների ընթացքում արքաների մշտական ուղեկիցը նրանց ռազմական հրամանատարների հետ ու հաճախ նրանցից առավել կարևոր դերակատարմամբ եղել են արքունի «իմաստունները» կամ այլ կերպ՝ մտածողները՝ փիլիսոփաները: Վերջինների ձևավորած սկզբունքները և հասարակության կառավարման մոտեցումները չեն կորցրել իրենց արդիականությունն անգամ այսօր:

Նշվածի համատեքստում հատկապես արժեքավոր են հույն փիլիսոփա Պլատոնի մտքերը պետության, դրա դրսևորումների ու հասարակական խա-

վերի վերաբերյալ: Հատկանշական է, որ Պլատոնն առաջինն էր, որ թեկուզ իբրև պետության բացասական դրսևորումներ՝ շրջանառության մեջ դրեց ներկայումս լայն կիրառում ունեցող այնպիսի տերմիններ, ինչպիսիք են «տիմոկրատիան»՝ փառասերների իշխանությունը, «օլիգարխիան»՝ խմբիշխանությունը, «դեմոկրատիան»՝ ժողովրդավարությունը, «տիրանիան»՝ բռնապետությունը և այլն: Պլատոնին են պատկանում նաև «մաքուր սոցիալիզմի» ու հասարակության խավերի՝ «էլիտա», «հսկիչներ», «ստրուկներ» բնորոշումների հետ կապված մոտեցումները [1, c. 24]: Դրանց լայն կիրառման վրա էր նախնական շրջանում կանգնած նախկին ԽՍՀՄ-ը, ուր հասարակության կառավարելիության արդյունավետության բարձրացումը կապում էին այսպես կոչված «Գուլագում» սովետական քաղաքացու ձևավորման հետ [2, c. 544]: Չխորանալով մանրամասների մեջ՝ նշենք, որ վերոնշյալ հարցերը հիմա էլ հետաքրքրում են աշխարհի գրեթե ցանկացած երկրի հասարակությանը, և վերոնշյալ մոտեցումներից միայն դեմոկրատիան է, որ հելլենիզմի տարածման (պարտադրման) «ալեքսանդրյան» սկզբունքով տեղայնացվում է գրեթե բոլոր հասարակություններում: Ու որքան այն արմատավորված է տվյալ երկրի հասարակության ընկալումներում, այնքան վերջինն ավելի առաջադեմի համարում ունի և ավելի խորն է ներգրավված տարածաշրջանային ու գլոբալ գործընթացներում: Տվյալ դեպքում խնդիրը վերաբերում է պետության «ընկալելիությանը» և միջազգային հարաբերությունների բնագավառում կանխատեսելիությանը, ինչի կարևոր գրավականն է քաղաքական կայուն, համընդհանուր ընդունելի գործարար մշակույթի առկայությունը: Նշվածը կապիտալի միջազգային շրջապտույտում տվյալ երկրի կտրվածքով նվազագույնի է հասցնում քաղաքական ռիսկերը: Մյուս կողմից՝ քաղաքացիական ինստիտուտների կայացումն ու դրանց միջոցով քաղաքական ու տնտեսական գործընթացների կառավարման հստակ մեխանիզմների մշակումը նվազեցնում են նաև տնտեսական ռիսկերը՝ ի դեմս պետական կամայական հովանավորչության, կոռուպցիոն դրսևորումների, մենաշնորհների առկայության և այլն:

Ինչպես արդեն վերը նշվեց, պետությունում ու հասարակությունում ընթացող քաղաքական գործընթացները մինչև XVIII դարի կեսերը, որպես կանոն, ուսումնասիրում էին փիլիսոփաները: Այդ առումով կարելի է պնդել, որ քաղաքական մարքեթինգի տեսությունը սերտորեն կապված է փիլիսոփայության, պատմագիտության ու քաղաքական կառավարման տեսությունների հետ: Կառավարչական գործունեության հատուկ կառույցների գործողության մեխանիզմների ձևավորման հարցերին անդրադարձել են դեռևս Ֆ.Բեկոնը, Տ.Հոբսը և Շ.Մոնտեսքյոն: XX դարը և հատկապես Առաջին համաշխարհային պատերազմն ու ընտրական գործընթացներում Աբրահամ Լինքոլնից հետո ԱՄՆ արձանագրած օրինակելի ձեռքբերումները բեկումնային դարձան այս

գործընթացների ուսումնասիրման համար, ինչը փիլիսոփայության հոլովույթից (նույնիսկ դրանում մնալով) սահուն անցում կատարեց կառավարման համակարգ, իսկ փոքր-ինչ ուշ՝ նաև սոցիոլոգիայի ոլորտ: Հատկանշական է, որ մինչ այդ էլ պետության բարձրագույն ղեկավարության հեղափոխական ճանապարհով իրականացված ցանկացած փոփոխություն պայմանավորվել է «ժողովրդի կամքով», և ժողովուրդը գործուն մասնակցություն ունեցել է այդ ամենում, բայց նշյալ անցումը հատկապես կապված է ընտրության ինստիտուտի լայն թափով զարգացման հետ: Փաստացի հենց այս հարցերն են արծարծվում արդեն XX դարասկզբին պետության և հասարակության կառավարման խնդիրներին վերաբերող Ա.Վագների, Մ.Վեբերի, Օ.Մայերի, Դ.Մունիի, Գ.Հայմոնի, Ա.Սթոունի, Է.Թեյլորի, Լ.Ուրվիկի, Ա.Նայոլի և այլոց աշխատություններում [3, c. 79]: Բայց մարքեթինգի գործիքակազմի հնարավոր կիրառմանն այս ոլորտում անդրադարձել են ավելի ուշ՝ սկսած 1950-ական թվականներից, երբ դրանք իրենց լիովին արդարացրել էին տնտեսության ոլորտում: Այս համատեքստում հատկանշական է, որ հասարակական գործունեության ոլորտներում մարքեթինգի հնարավոր կիրառմանը նվիրված առաջին աշխատություններն ի հայտ եկան XX դարի 60-ական թթ.: Այդ նոր մոտեցումների քարոզիչների՝ Ֆ.Կոտլերի, Լ.Սլևիի և մյուսների տեսանկյունով քաղաքական մարքեթինգի նպատակը հասարակական-քաղաքական և կրոնական կազմակերպությունների, պետական հաստատությունների և ձեռնարկությունների հաճախորդների պահանջմունքների բավարարումն է [4, 5]:

Արդեն մարքեթինգի զարգացման «ոսկեդարում»՝ անցյալ դարի 70-ական թթ., սկսվեց նշյալ գործընթացներում մարքեթինգի ներդրման արդյունավետության բարձրացման ուղղությամբ կատարվող վերլուծությունների փուլը: Արևմտյան գիտական գրականության մեջ ձևավորվեց պետական կառավարման համակարգում մարքեթինգի կիրառման երկու հիմնական մոտեցում: Առաջին մոտեցման կողմնակից, հասարակական ընտրության տեսաբաններ Ա.Վագները և Ֆ.Կոտլերը հիմնավորեցին մարքեթինգի ուղղակի ներդրման անհրաժեշտությունը պետական հաստատությունների գործունեության մեջ [6]: Մյուս մոտեցմամբ մարքեթինգը դիտարկվեց պարզապես իբրև մենեջմենթի տեխնոլոգիաներից մեկը, որը ներգործում է զանգվածային գործունեության մրցակցային իրավիճակի վրա: Այսպես, Գ.Մաուզերը մարքեթինգը սահմանեց որպես «մենեջմենթի գործիքներից մեկը՝ իբրև դրա նպատակ սահմանելով մրցակցային իրավիճակում հատուկ տնտեսական շուկայի և հասարակության առանձին սոցիալական ու քաղաքական խնդիրների լուծման անհրաժեշտությունը» [3, c. 79]: Այս մոտեցումը նկատվում է նաև XX դարի 90-ականներին հրատարակված ռուս հեղինակների աշխատություններում: Այսպես, Վ.Խալիպովը և Ֆ.Իլյասովը քաղաքական մարքեթինգը սահմանում

են որպես «որոշակի նպատակային լսարանին ուղղված ազդեցության քաղաքական տեխնոլոգիայի տարատեսակ, որը լայն թափով ներխուժել է քաղաքական հարաբերությունների տիրույթ և համարվում է որոշիչ գործոն ոչ միայն նախընտրական ժամանակաշրջանում, այլև քաղաքական տարբեր գործընթացներում» [7]:

Վերոնշյալ խնդիրներն արդիական են նաև Հայաստանի Հանրապետությունում: Անկախության վերականգնումից ի վեր Հայաստանում տեղի ունեցան տնտեսական, սոցիալական, քաղաքական դաշտի արմատական վերափոխումներ: Հանրապետությունը ազատ շուկային դժվարին անցում կատարեց ոչ միայն տնտեսության, այլև քաղաքական կառավարման բնագավառում: Վերջինս պայմանավորված էր պետության կառավարման նախկին միակուսակցական մոդելի անկմամբ և բազմակուսակցական մոդելի հաստատմամբ ու դրա հետևանքով քաղաքական դաշտում մրցակցության ոգու աննախադեպ բարձրացմամբ, որով պայմանավորված՝ առաջանում է միջազգային քաղաքական միջավայրի փոփոխություններին համարժեքորեն պատասխանող քաղաքացիական հասարակության ձևավորման անհրաժեշտություն, որը երկրի ղեկավարությանը դրդում է իրավական, սոցիալական, տնտեսական ոլորտներում և պետության կառավարման համակարգում բարեփոխումներ իրականացնել: Մյուս կողմից՝ երևան եկան ինքնուրույն քաղաքական սուբյեկտներ՝ քաղաքական կուսակցությունների և այլ քաղաքական կառույցների տեսքով: Ազատականացվեցին այլակարծությունը, տնտեսական գործունեությունը, ներդրվեց Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների՝ ընտրության միջոցով ձևավորման ինստիտուտը: Մեր դիտարկմամբ, այս գործընթացների առավել արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ են քաղաքակիրթ քաղաքական շուկայի[1] ձևավորմանը նպաստող միջոցառումներ:

Քաղաքական շուկայի ուսումնասիրումը, շուկայում տեղի ունեցող բոլոր գործընթացներն ու գործողությունները քաղաքական մարքեթինգի տեսության և գործնական միջոցառումների ելակետային պահերն են: Շուկայի ուսումնասիրման նպատակն է ստանալ առավել ամբողջական և հավաստի տեղեկատվություն առաջարկի և պահանջարկի վիճակի ու զարգացման հեռանկարի, շուկայական իրավիճակի, դրա միտումների, պահանջարկի բավարարման աստիճանի, մրցակիցների գործողությունների վերաբերյալ, մի խոսքով՝ այն ամենի, ինչն անհրաժեշտ է քաղաքական ռազմավարության մշակման և շուկայում գործակալի վարքի մարտավարության համար:

Քաղաքակիրթ քաղաքական շուկային անցման համար անհրաժեշտ է

[1] Քաղաքակիրթ քաղաքական շուկան կարելի է սահմանել հետևյալ կերպ. «քաղաքական ապրանքների ու ծառայությունների (գաղափարներ, ծրագրեր, կառավարման ոճ, առաջնորդի իմիջ) արտադրության և բաշխման համակարգ» [8]:

քաղաքական հարաբերությունների բարձր մակարդակ, մասնավորապես՝ մրցունակ քաղաքական ապրանք արտադրողների, այսինքն՝ քաղաքական կուսակցությունների և դաշինքների ի հայտ գալը, որոնք իրենց տրամադրության տակ ունեն բավական լայն սոցիալական հաճախորդների շրջանակ.

1. Քաղաքական սուբյեկտների իրավահավասարություն, որոնք ապահովում են մրցակցային պայքարի նորմերի և օրենքների համակարգի մշակում:
2. Ընդհանուր արժեքային համակարգ՝ որպես հիմք քաղաքական սուբյեկտների միջև համաձայնության հասնելու համար:
3. Սպառողների տարիքային խմբերը:

Եվ վերջապես, քաղաքակիրթ քաղաքական շուկայի գոյությունը հնարավոր չէ առանց զանգվածային քաղաքական լուսավորության [9]:

Այսպիսով, քաղաքական շուկայում ներկայացված են.

- վաճառողները – քաղաքական կազմակերպություններն ու գործիչները,
- գնորդները – ընտրողները,
- քաղաքական արտադրանքները – ուղերձներն ու կերպարները,
- քաղաքական արտադրանքի հետ փոխանակվող ռեսուրսները – քաղաքական գործիչներին և կազմակերպություններին իշխանության իրավունք տվող ընտրողների ձայները:

Ամփոփելով կարելի է փաստել, որ քաղաքականության մեջ նույնպես գործում են հատուկ, շուկայական հարաբերություններին բնորոշ մեխանիզմներ:

Քաղաքական շուկայի կարևոր բնութագիրը նրա մրցակցային բնույթն է, որը պայմանավորված է տարբեր քաղաքական կազմակերպությունների միջև ընտրողների համակրանքի, աջակցության և ձայների համար մրցակցության առկայությամբ: Մյուս կողմից՝ քաղաքական շուկայում գոյատևելու և արդյունավետ գործելու համար չափազանց կարևոր են քաղաքական կազմակերպության կամ գործչի մրցակցային հնարավորությունները, իմա՝ այն հատուկ բնութագիրը, որն իրեն ընտրողների աչքերում իր համար շահավետ ձևով առանձնացնում է մրցակիցներից: Պետք է նշել նաև, որ մրցակցային առավելություններն իր համար ձևավորում է հենց ինքը՝ կազմակերպությունը, բայց դրանք պետք է ուղղված լինեն դեպի ընտրազանգվածը, հաշվի առնեն նրանց պահանջմունքները, հետաքրքրություններն ու քաղաքական հակումները [10, էջ 7-9]:

Վերադառնալով մեր խնդիրներին՝ նշենք, որ ներկայումս Հայաստանի քաղաքական շուկայում գործում են շուրջ ինը տասնյակ կուսակցություններ: Միաժամանակ, պետք է նշել, որ հայ քաղաքական մտքի փիլիսոփայությունն իր վրա է կրում համաշխարհային քաղաքական միջավայրի ազդեցությունը, որին հաճախ բնորոշ են միջազգայնացման և գլոբալացման արագացող տեմպերը: Այս համատեքստում պետք է ավելացնել նաև, որ Հայկական աշխար-

հում գործող կուսակցությունների գաղափարական կողմնորոշումները բավական բազմերանգ են՝ սկսած ազգայնականից մինչև ազատական: Սակայն պետք է արձանագրել նաև, որ օտար գաղափարական ազդեցությունը մեր քաղաքական կազմակերպությունների քաղաքական, գաղափարական կողմնորոշումներում մեծապես գերակայում է: Հայկական քաղաքական դաշտում այս երևույթը նոր չէ, այն ժամանակին լավագույնս բնութագրել է հայ ազգային մտքի ռահվիրան՝ Գարեգին Նժդեհը. «Նրանց ծրագրերը – մեկը մյուսից մոդայիկ – մի քիչ ռուսական, մի քիչ եվրոպական – միայն անունով են հայկական: Նմանվելու այդ ախտից - արդյունք՝ ազգային տկար ինքնագիտակցության - դեռ այսօր էլ զերծ չեն հայ կուսակցությունները» [11, էջ 478]:

ՀՀ-ում տեղի ունեցող ժողովրդավարացման գործընթացներն աստիճանաբար հանգեցրին այն փաստի գիտակցմանը, որ այդ գործընթացների կառավարումը բարդ է, եթե չասենք՝ անհնար, առանց քաղաքական մարքեթինգի գործադրման: Հայաստանի բնակչության կենսագործունեության տարբեր ոլորտներում իրավական, քաղաքական, ինչպես նաև տնտեսական անկայունության պայմաններում և քաղաքացիների կենսակերպի ու ոճի բազմազանության պարագայում քաղաքական մարքեթինգի գործիքների կիրառությունը հնարավոր է դարձնում համակարգել քաղաքացիների շահերը: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ չնայած կառավարման և մարքեթինգի խնդիրներին անդրադարձել են բազմաթիվ հայ հեղինակներ, սակայն քաղաքական միջավայրում մարքեթինգի ընձեռած գործիքների տեղայնացման հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրություններ գրեթե բացակայում են:

Մեր օրերում մարքեթինգային հարաբերությունները թափանցել են հասարակական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ քաղաքական գործընթացների և քաղաքական իշխանության համար պայքարի ոլորտ: Ակնհայտ է, որ տնտեսավարող սուբյեկտների, տնտեսական գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների միջև տեղի ունեցող մրցակցության և մարքեթինգային համալիր միջոցառումների ընթացքում կիրառվող գործիքները մեծ մասամբ կիրառելի են նաև քաղաքական կազմակերպությունների մարքեթինգային քաղաքականությունը մշակելիս: Ինքը՝ քաղաքական իշխանությունն անհիշելի ժամանակներից ուժեղ ձգտման, գնման, վաճառքի, փոխանակման օբյեկտ է: Դրա հետ կապված՝ կարելի է հաստատել, որ քաղաքական մարքեթինգը որպես սոցիալական գործունեություն գոյություն է ունեցել սկսած հենց այն պահից, երբ հայտնվել է քաղաքական իշխանության հասնելու ձգտումը: Հարյուրամյակների ընթացքում աստիճանաբար մշակվեցին իշխանության առաջմղման, ընդունման, քաղաքական աճուրդի և փոխանակման փորձեր: Ի հայտ եկան քաղաքական մարքեթինգի, այսպես ասած՝ վիրտուոզները: Գործնական կիրառման ընթացքում քաղաքական մարքեթինգը դարձավ ոչ միայն տեխնոլոգիա, այլ նաև արվեստ:

Քաղաքական մարքեթինգային գործունեության համեմատաբար ինքնուրույն ոլորտ է համարվում միջազգային քաղաքական մարքեթինգը, որը փոխհարաբերությունների բնագավառ է առանձին պետությունների և միջազգային քաղաքական միությունների, ալյանսների միջև, որոնք առաջացել են քաղաքական ազդեցության գոտիների բաշխման, ուժեղացման և միջազգային հարաբերությունների սուբյեկտների աշխարհաքաղաքական հետաքրքրությունների ոլորտի օրինականացման նպատակով: Այսպիսի հարաբերությունների բնույթը կախված է առանձին պետությունների տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային միասնական կարողություններից: Որքան ավելի հզոր է պետությունը, այնքան մեծ են նրա աշխարհաքաղաքական հավակնությունները, այնքան այն ավելի մեծ ազդեցություն ունի միջազգային տնտեսական և քաղաքական իրավիճակի, գործընթացների, համաշխարհային մասշտաբով քաղաքական ուժերի բաշխման վրա: Կախված մարքեթինգային ուժերի կարողություններից՝ կարելի է առանձնացնել պետությունների հետևյալ 4 տեսակները.

- *Գերտերություն.* ունի ավելի շատ մարքեթինգային կարողություններ, ամբողջ աշխարհը դիտում է որպես իր մարքեթինգային հետաքրքրությունների ոլորտ, վերահսկում է համաշխարհային քաղաքական մարքեթինգը: Ներկայումս այդպիսի տերության դերում հանդես են գալիս ԱՄՆ-ը և Ռուսաստանը:
- *Մեծ տերություն.* իր մարքեթինգային կապերը տարածում է ամբողջ աշխարհում, սակայն գերտերությանը զիջում է զավթողական ուժով և համաշխարհային մարքեթինգային իրավիճակի վրա ազդեցությամբ: XXI դարի սկզբներից պետությունների այս տեսակը ներկայացնում են «Մեծ յոթնյակի» երկրները՝ բացառությամբ ԱՄՆ-ի (որը, ինչպես նշվեց, համարվում է գերտերություն), Չինաստանը և այլն:
- *Տարածաշրջանային տերություն.* կոնկրետ տարածաշրջանում մարքեթինգային իրավիճակը վերահսկող պետություն է: Այդպիսի պետության օրինակ են Թուրքիան, Իրանը, Իսրայելը և այլն:
- *Փոքր պետություն.* մեծ կախվածության մեջ է գտնվում ավելի հզոր տերությունների թելադրած մարքեթինգային պայմաններից: Համաշխարհային քաղաքական շուկայում մարքեթինգային դիրքի ուժեղացման և մարքեթինգային միջավայրում իր դերակատարության բարձրացման նկատառումներից ելնելով՝ ձգտում է մտնել ավելի ուժեղ պետությունների միության մեջ: Այդպիսի օրինակ կարող է ծառայել նախկին սոցիալիստական ճամբարի և նախկին ԽՍՀՄ կազմի Մերձբալթյան երեք հանրապետությունների մուտքը Եվրամիություն:

Գլոբալացման գործընթացների ուժգնացման պայմաններում միջազգային քաղաքական մարքեթինգի վրա ամենից շատ ազդեցություն ունեն վերազգային, վերպետական կառույցները: Հենց այս վերազգային կառույցներն էլ ամբողջ աշխարհը վերածել են գլոբալ մարքեթինգային ցանցի: Այս է պատճառը, որ այս կառույցների, վերազգային կորպորացիաների գործունեությունը նույնպես հանդիսանում է «քաղաքական մարքեթինգ» գիտության ուսումնասիրության առարկա: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ նման կառույցների դերի մեծացմանը զուգահեռ որոշակիորեն նվազում է ազգային պետությունների դերը: Նման կառույցների, մասնավորապես՝ վերազգային կորպորացիաների մեծացող դերակատարումը համաշխարհային գործընթացներում, տվյալ խնդրի հետազոտողների կողմից ոչ միանշանակ է ընդունվում: Ռուս հայտնի փիլիսոփա, սոցիոլոգ և գրականագետ Ա.Զինովևի կարծիքով՝ գլոբալ հասարակությունը կանխամտածված սուտ է, որը ոչ մի ընդհանրություն չունի իրականության հետ: «Գլոբալ հասարակություն» եզրով նա բնորոշում է «արևմտյան որոշակի ուժերի ցանկությունը՝ աշխարհում հասնել իշխող դիրքի, կազմակերպել ամբողջ մարդկությանը իր սեփական կոնկրետ հետաքրքրությունների, այլ ոչ թե ինչ-որ վերացական մարդկության շուրջ: Համաշխարհային տնտեսությունը առաջին հերթին աշխարհի նվաճումն է Արևմտյան վերազգային կորպորացիաների կողմից, ընդ որում, այդ կորպորացիաների հետաքրքրությունների, այլ ոչ թե աշխարհի այլ ժողովուրդների համար» [12, c. 188]: Հետազոտողներ Թոմ Բրնեթի *(Thom Burnett)* և Ալեքս Գեյմսի *(Alex Games)* կարծիքով. «Երբ խոսքը վերաբերում է վերազգային կորպորացիաների գործունեությանը, ազգային սահմանները հաշվի չեն առնվում: Դիվանագիտական սահմանափակումների բացակայության պայմաններում այդ հսկա կորպորացիաներն ի վիճակի են ներխուժել այլ երկրներ և նվաճել արտերկրի շուկաները այնքան անգթորեն, որքան դա անում էին հին կայսրությունները: Դրանք ի վիճակի են գործել առևտրի բոլոր ոլորտներում և վերահսկել ապրանքի տարածման բոլոր փուլերը՝ արտադրությունից՝ զարգացող երկրների էժան աշխատուժի հաշվին, մինչև Արևմուտքի առատ սպառողական շուկաները: Հաճախ այդ կորպորացիաները ֆինանսական առումով ավելի խոշոր են, քան այն երկրները, որոնք նրանք շահագործում են: Այստեղ տեղին է վերհիշել այն փաստը, որ 100 խոշորագույն տնտեսություններից 51-ը վերազգային կորպորացիաներ են և միայն 49-ը՝ պետություններ» [13, c. 372-373]:

Ամփոփելով՝ նշենք, որ քաղաքագետների շրջանում տիրապետող է այն մոտեցումը, ըստ որի՝ քաղաքական մարքեթինգը կենսունակ է հատկապես ժողովրդավարական հարուստ ավանդույթներ ունեցող երկրներում: Այս դիրքորոշման հիմքում ընկած է այն համոզմունքը, որ նման հասարակություններում առկա գաղափարաքաղաքական պայքարը, ընտրողների քաղաքական (ընտրական) մշակույթը, քաղաքական համակարգի արդյունավետ կիրառու-

մը և նմանատիպ այլ գործոնները պարարտ հող են նախապատրաստում քաղաքական կամ մարքեթինգային տեխնոլոգիաների նպատակային կիրառման համար: Ասվածից կարելի է ենթադրել, որ քաղաքական մարքեթինգի գործիքակազմը հնարավոր է արդյունավետ կիրառել բացառապես կայացած ընտրական ինստիտուտ և միաժամանակ ազդեցիկ քաղաքացիական հասարակություն ունեցող երկրներում, ուր քաղաքացիական հասարակության ինստիտուտների առկայությունը հանդիսանում է նշված գործընթացների ոչ ֆորմալ բնույթի երաշխավորը: Բայց իրականության մեջ դա այնքան էլ այդպես չէ: Չնայած շատ «երիտասարդ ժողովրդավարությամբ» երկրներում «արևմտյան ընկալմամբ» դեմոկրատական արժեքների ներդրման փորձերը կամ տապալվել են, կամ ունեցել աղետալի դրսևորումներ (լատինական երկրներում՝ ավտորիտար ռեժիմների ձևավորում, աֆրիկյան երկրներում՝ պերմանենտ քաղաքացիական պատերազմներ, սով, համաճարակ, մահմեդական երկրներում՝ ֆունդամենտալիզմ և դրանով պայմանավորված ահաբեկչություն), պետք է փաստել, որ քաղաքական մարքեթինգի դերը շոշափելի է և գնալով մեծանում է նաև զարգացող երկրներում կամ, ինչպես ընդունված է ասել, անցումային հասարակություններում: Փորձ է արվում սա հիմնավորել նրանով, որ նախ՝ քաղաքական մարքեթինգի գործիքներն ուղղակի կարող են նպաստել հասարակության մեջ քաղաքական արժեքների ու ավանդույթների արմատավորմանը՝ հնարավոր դարձնելով հղկել, մշակել և առավել մատչելի ներկայացնել քաղաքական ապրանքներն սպառողներին: Մյուս կողմից՝ նշվում է, որ քաղաքական մարքեթինգը կանոնակարգում է քաղաքական գործընթացների տարերայնությունը (ինչը բնորոշ է անցումային հասարակություններին)՝ դրանց տալով առավել համակարգված տեսք: Միաժամանակ, ակնհայտ է, որ քաղաքական մարքեթինգի գործիքակազմը, թեկուզ ֆորմալ առումով, կիրառվում է նաև տոտալիտար կամ ավտորիտար ռեժիմների կողմից: Փաստ է, որ նման երկրներում մրցակցությունն ունի ներիշխանական կամ ներկլանային բնույթ, իսկ քաղաքական դաշտում այն բացակայում է՝ չնայած գաղափարական տիրույթում դրա առկայությանը: Հարց է առաջանում՝ իսկ ինչո՞ւ են այդ երկրներում կիրառվում «արևմտյան» կամ «թշնամական» համարում ունեցող երկրների ձեռքբերում համարվող տեխնոլոգիաները, երբ այդտեղ մերժված է այդ տեխնոլոգիաների կենսագործունեության կամ, այլ կերպ՝ սերմանման դաշտը՝ խոսքի և տեղեկատվության ազատությունը: Պատասխանը, կարծում ենք, ավելի քան պարզ է. քաղաքական մարքեթինգը, ինչպես և մարքեթինգն ընդհանրապես, բացի վերոնշյալ հիմնավորումներից, ծառայում է հասարակական կարծիքի ձևավորմանը, ինչով էլ պայմանավորված են դրա ձևավորումն ու ագրեսիվ կիրառումը:

Նոյեմբեր, 2009թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Бунич Н.,* Лабиринты Безумия, СПб, 1995.
2. *Солженицын А.,* Архипелаг ГУЛАГ, Малое собрание сочинений, том 5-й, Москва, 1991.
3. *Маузер Г.,* Современная буржуазная политическая наука, М.: РАГС, 1979.
4. *Котлер Ф.,* Основы маркетинга, М., 1995.
5. *Макарычев А.С.,* Принципы и параметры общественного выбора (исследования вирджинской школы) // Политические исследования, 1995, N 4.
6. Классика маркетинга: Сборник работ оказавших наибольшее влияние на маркетинг. Пер. с англ./Сост. Энис Б.М. и др. – СПб: Микма, 2001.
7. *Ильясов Ф.Н.,* Политический маркетинг или как “продать” вождя // Политические исследования, 1997, N 5.
8. *Морозова,* Политический рынок и политический маркетинг: концепции, модели, технологии, М., 1999.
9. *Коноплин Ю.С., Лобанов В.В.,* Маркетинговый анализ политического рынка и формирование имиджа политического товара, М., 1995.
10. *Աթոյան Վ., Ղուկասյան Ն.,* Քաղաքական շուկայի էությունը, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, #2(91), փետրվար, 2008թ.:
11. *Ժդէհ Գարէգին,* Երկեր երկու հատորով, հատոր 1, 2002թ.:
12. *Нартов Н.А., Нартов В.Н.,* Геополитика., под редакцией В.И. Староверова, 4-е исд. перераб. и доп., Золотой фонд российских учебников, Москва, 2007.
13. *Бернетт Том, Геймз Алекс,* Кто на самом деле правит миром? Война между глобализацией и демократией, 2007.

МАРКЕТИНГ В ПОЛИТИЧЕСКИХ ПРОЦЕССАХ

Вардан Атоян, Нарек Гукасян

Резюме

Обобщенные в статье тезисы являются результатом изучения авторитетных трудов выдающихся экономистов, социологов, политологов и философов. В работе рассматривается целый ряд вопросов, а именно: откуда пришла и куда идет наша политическая действительность, какое направление имеет вектор развития политического поля? Не отрицая невозможности полноценного охвата всех затронутых проблем, авторы утверждают, что в статье заложен фундамент целого ряда основных последующих трудов.

Հուշագիր հեղինակին

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա համառոտագիր (հոդվածի լեզվով) և ամփոփագիր (բնագրից տարբեր լեզուներով):
4. Հոդվածում օգտագործված աղբյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հղված էջ(եր)ը, եթե հղման աղբյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղբյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), с. (ռուսերեն), p. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղբյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղբյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաչափով, բնագրի լեզվով, օրինակ՝

   1. *Մարգարյան Ս.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատեքստում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
   2. *Шарипова Р.,* Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
   3. *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from http://www.internews.ras.ru/books/media, Sept. 28, 1998.

5. Ինտերնետային աղբյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրեղյան տառերից տարբեր աղբյուրների դեպքում հղումները կատարել լատինական այբուբենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ 21dar@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 15.03.2010թ.
Թիվ 1 (29), 2010թ.
Տպաքանակը՝ 300։

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 8 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում